

91(077)
0-24

126

-5 OCT 2011

ԽԱՆԿԱՐԺԱԿԱՆ—ՓԻԼԻՍՈՓԱՑԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԵՆ Հ 4.

Խ.

370

2483-06




Ն Ի Ի Թ Ե Ր

ՄԱՍՆԱՀՈՐ ԴԻԴԱԿՏԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ

(Աշխարհագրութեան և բնական պատմութեան
դասաւանդութեան մերուդը).

1004
1005
1006
1007
a/



ԿԱԶՄԵ Ա. ՕԼԹԵՑԵԱՆ



Վաղարշապատ

Տպարան Մայր Արքուոյ Մրգոյ Էջմիածնի

1907

02.09.2013

OFF
JO-6842

ՈՒԽՏԱՆՔՄ ՎԱՐԴԱՊԵՏ

ՏԵՐ ԳԱՎՊԱՐԵԼՆԻՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՍԻՐՈՎ

ՆՈՒԽՏՈՒՄ է ԿԱԶՄՈԴՅ

Յ Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Ն.

Non scholae discimus, sed vitae

Դպրոցում ենք սովորում, բայց կեանքի համար նախապատրաստում։ Այս պիտի լինի հայ դպրոցի նշանաբանը իր նախօրեակում, եթէ իր վերաբացման միջոցին նաև վերածնելու է։ Հայ եկեղեցական ծխական դպրոցը իր կարճատեանցեալում անհաղորդ մնալով կեանքին, չեզքացը նաև մատաղ սերունդը շրջապատից։ Այդ իրողութեանը նպաստեց նամանաւանդ այն հանդամանքը, որ բնութեան դիտողութիւնը և ուսումնասիրութիւնը, որ իմացութեան գլխաւոր ազբիւրն է կազմում, նկատում էր որպէս անարժէք կցորդ հումանիտար գիտութիւնների։ Այդ առարկաների դասաւանդութեան համար չկար ոչ մի մանկավարժական կամ իրական տեսակէտ, չկար ոչ մի մեթոդ՝ վերցուած նիւթի էութիւնից կամ ընդհանուր մեթոդիկայի սահմանից. դասն էլ ի հարկէ չէր կարող դնենալ այն կրթական ներգործութիւնը, որ կարելի էր սպասել նրա նիւթից։

Այս հատորում, ինչպէս ընթերցողը կտեսնէ, մեզ առաւելապէս զբաղեցնում է բնական գիտութիւնների դասաւանդութիւնը, որը, ինչպէս վերն յիշատակեցինք, խիստ անխընամէ մնացել թէ տարրական և թէ միջնակարգ հայ դպրոցներում։ Մեր այս գիրքը ամեննեին յաւակնութիւն չունի լիակատար և վերջացած գործ լինելու. նա պարունակում է իր մէջ նիւթեր, որոնք ապագայում մասնաւոր գիտակաթիկայի համար նախապատրաստական աշխատանքի պաշտօն կարող են կատարել. ցանկալի համարեցինք նաև բնական պատմութիւնից դասաւանդական երկու նմուշներ տալ, որոնցից առաջինը

մեթոդապէս մշակուած է, իսկ երկրորդը անմշակ՝ վերցուած
իւնգէի զբքից։ Մեր այս գիրքը կազմելիս ի նկատի ենք ունե-
ցել տարրական—ժողովրդական դպրոցը։ թերեա միջնակարգ
դպրոցի ուսուցիչն էլ այստեղ կարողանայ գտնել որևէ ինդիրի
նոր լուսաբանութիւն կամ մեթոդական որևէ օգտակար հրա-
հանդ։ Եթէ բնական գիտութիւնների դասաւանդութեան
բարեփոխման գործին չնշին նպաստ էլ տուած լինենք, բա-
րոյապէս մեզ վարձատրուած կզգանք։ Մեզ աղքիւր են ծա-
ռայել մանկավարժական նորագոյն զրականութիւնից հե-
տեւալ երկերը, որոնցից քաղուածաբար կազմել ենք մեր
զիրքը.

- 1) Friedrich Lunge, Naturgeschichte, Der Dorfteich als Lebensgemeinschaft. 2. Aufl.
- 2) Richard Fritzsche, Die neuen Bahnen des erdkundlichen Unterrichts. 2. Aufl.
- 3) Fr. Kohlhase, Die methodische Gestaltung des erdkundlichen Unterrichts.
- 4) E. Wilk, Die Synthese im naturgeschichtlichen Unterricht.
- 5) W. Rein, Encyclopaedisches Handbuch der Paedagogik.
- 5) Ա. Օլթեցեան, Ընդհանուր Դիդակտիկա։
Բացի այդ 50-րդ երեսում յիշատակած գրքերից մի
քանիսը։

Ա. 0.

Էջմիածին. 1907 թ.
8. մարտ.

ՑԱՆԿ

I.

Կուլտուրական—տնտեսական աշխարհագրութիւն՝ հիմ-
նուած լանդշաֆտի դիտողութեան վրայ։

- 1) Աշխարհագրութեան բաժանումները.
- 2) Աշխարհագրութեան դասաւանդութեան նպատակը.
- 3) Աշխարհագրութեան դասաւանդութիւնը մինչեւ այժմ։
- 4) Հայրենիքը և օտար երկիրը աշխարհագրութեան դա-
սի մէջ։
- 5) Աշխարհագրութեան դասի կեղրոնացնող նշանակու-
թիւնը.
- 6) Քաղաքական, բնական, թէ կուտուրական աշխարհա-
գրութիւն։
- 7) Պետութեան նկարագիր, գետագրութիւն, թէ լանդ-
շաֆտի ուսումնասիրութիւն։
- 8) Աքեմա, թէ լանդշաֆտի պատկեր.
- 9) Նկարագրական, թէ կենսաբանական մեթոդ։
- 10) Հայեցողութիւնը աշխարհագրութեան դասի մէջ։
- 11) Պատմական և բնագիտական տարրերը աշխարհագրու-
թեան դասի մէջ։

II.

Բնական պատմութեան դասաւանդութիւնը՝ հիմնուած
կեանքի խմբական միութեան (համակեցութեան) սկզբունքի
վրայ։

- 1) Բնական պատմութեան դասաւանդութիւնը մինչեւ
այժմ։
- 2) Բնական պատմութեան դասաւանդութեան նպատակը.
- 3) Բնական պատմութեան դասաւանդութեան ընթացքը.
- 4) Դաշտը (Նապաս-
տակը և ճագարը) { Դասաւանդութեան օրինակներ։
- 5) Գիւղի լճակը

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ — ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՅՆԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ՝

ՀԻՄՆՈՒԱԾ ԼԱՆԳԵԱՖՏԻ ԴԻՑՈՂՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ.

Աշխարհագրութիւնը կամ երկրագիտութիւնը այն զիտութիւնն է, որ զբաղում է երկրային տարածութեամբ։ «Մի կողմից նա նիրկայացնում է երկրը որպէս ինքնյատուկ բնագիտական առարկայ, որի բազմօրինակ կերպաւորուած մակերևոյթի վրայ բնագիտական երեսոյթների բաղակցութիւնը և չղթայումը պայմանաւորում են անթիւ էակների կեանքը, միւս կողմից նա դիտումէ երկիրը որպէս բնակավայր աւելի բարձր և բնական երեսոյթներին կուրօրէն չենթարկուող էակի՝ մարզու»։

Աշխարհագրութեան էութեան այս սահմանումից հետեւում են աշխարհագրական մասնագիտութիւնները, որոնք որոշում են ըստ առարկայի և ըստ մեթոդի։

1) Աշխարհագրութեան բաժանումները.

Բնագիտական աշխարհագրութիւնը զբաղւում է միջնորդական փորձառութեանը ննթակայ բնագիտական առարկաներով և երեսոյթներով. մի կողմից նա որոնում է բնագիտական առարկաների տարածական կարգավորման և բնագիտական երեսոյթների հանդէս գալու հիմքերը, միւս կողմից արձանագրում է բնագիտական բազմօրինակ առարկաների և երեսոյթների միմեանց նկատմամբ ունեցած ներգործութիւնները։

Աշխարհագրութեան այն մասը, որ մատեմատիկական հետազոտութեանց միջոցով ուսումնամիջում է տարածական մեծութեանց յարաբերութիւնը և ձեւերի փոխադարձ ներգործութիւնը, կոչում է մատեմատիկական աշխարհագրութիւն։ Աշխարհագրութեան կամ երկրագիտութեան օժանդակ զիտութիւնն է երկրաբանութիւնը, որ երկրագնտի կերպարան-

քը և առանձնայատկութիւնները աշխատում է բացատրել
նրա նախկին և այժմեան վիճակից:

Աշխարհազրութիւնը զբաղւում է նաև բուսական և
կենդանական օրգանիզմներով, որոնք ըստ գոյութեան, տա-
րածման ձեի և օգակարութեան ննժարկուած են կեանքը
պայմանաւորող աշխարհազրական օրէնքների. աշխարհազրու-
թեան այն մասը, որ զբաղւում է երկրագնտի վրայ արտա-
յայտուող կեանքի երևյթներով, կոչւում է՝ կենսաբանական
ածխարհագրութիւն. վերջապէս աշխարհազրութիւնը իր հե-
տախուզութեան կեզրոնն է դարձնում մարդուն և որոնում է
մարդկային ցեղի տարածման, ազգերի, ժողովուրդների և
պետութիւնների բաժանման, ցեղային խմբակցութիւնների
և լեզուական ընտանիքների և ընդհանրապէս բնական, մտա-
ւոր, բարոյական և կրօնական զարգացումների տարածական
պատճառները: Աշխարհազրութեան այս մասը, որ սերտ կա-
պրւած է մարդկային ցեղի կուլտուրական պատմութեան հետ,
կոչւում է կուլտուրական ածխարհագրութիւն, որին նիւթ են
մատակարարում մարդաբանութիւնը, ազգազրութիւնը, աշխա-
տեսագիտութիւնը և պատմութիւնը: Կուլտուրական աշխար-
հազրութեան այն մասը, որ ուսումնասիրում է անտեսական
կեանքի աշխարհազրական գործոնները, կոչւում է տնտեսա-
կան ածխարհագրութիւն. մինչդեռ բաղախական ածխարհա-
գրութիւնը նիւթ ունենալով պետազրութիւնը և անդազրու-
թիւնը, զբաղւում է պետութեանց սեփականատիրութեամբ և
նրանց յարաբերութեամբ:

Աշխարհազրութեան էութիւնը և նրա մասնաճիւզերի
զբաղման նիւթը սահմանելուց յիշոյ, ուսումնասիրենք այն
մանկավարժական տեսակէտից որպէս առարկայ դասաւան-
դութեան և միջոց կրթութեան:

2) Ածխարհագրութեան դասաւանդութեան նպատակը:

Աշխարհազրութեան դասաւանդութիւնը կարող է ունե-
նալ երկու նպատակ՝ մասնագիտական և կրական:

Աշխարհազրութեան մասնագիտական նպատակն է մի-

կողմից սանին ծանօթութիւն մատակարարել երկրի, նրա ա-
ռարկաների, երեսյթների և է ակների մասին, միւս կողմից
երեան հանել այդ իրողութիւնների փոխադարձ ներգործու-
թիւնը և պատճառական կապակցութիւնը, այլապէս՝ ցուցադրել
բնութեան օրինակարգութիւնը նիւթական և հոգեկան կուլ-
տուրայի սահմաններում: Մինչդեռ աշխարհազրութեան կըր-
թական նպատակն է նպատել դասաւանդութեան ընդհանուր
նպատակի՝ բազմակողմանի հետարբեութեան իրագործմանը¹⁾.

Աշխարհազրութիւնն ես, համաձայն իր նիւթի հոգեբա-
նական նիրգործութեան, պէտք է ինամէ իմացական և հա-
զորդակցական հետաքրքրութեանց բոլոր աեսակները: Բնա-
գիտական բազմապիսի առարկաների և երևյթների, բոյսերի,
կենդանիների, մարդկանց և կուլտուրական հաստատութիւն-
ների խրբաղնին գիտողութիւնը և մանրադինին ուսումնասի-
րութիւնը առաջ կըերէ հմայիրական հետաքրքրութիւն: Եթք
սանը հայեցողութիւնից կանցնի մատադրութեան, կըմբռնէ
բնագիտական բազմօրինակ առարկաների և երևյթների պատ-
ճառական կապակցութիւնը և կընտելանայ հետզհետէ այն
հայեցողութեանը, որ բնութեան մէջ իշխում է մի օրինա-
կարգութիւն, սնունդ կստանայ նաև նրա մտախյեցոլական
հետաքրքրութիւնը. այն ինչ տարածական պատկերների յա-
րաբերութեանց ուշադիր և անշահասէր գիտողութիւնը կծնի
գեղարուեսական հետաքրքրութիւն, որ նրան զգայուն է
դարձնում ոչ միայն բնութեան, այլ և արուեստի և բարոյա-
կան գեղեցկութեան նկամամբ: Սակայն աշխարհազրութիւ-
նը ծնում և զարգացնում է ոչ միայն իմացական, այլ և ինչ-
պէս ասացինք, հազորդակցական հետաքրքրութեան բոլոր
տեսակները՝ նաև կրական, սօցիալական և կրօնական. աշ-
խարհազրութիւնը դիմում է երկիրը որպէս մարդկային ցեղի
բնականացը և պատմութեան հանդիսավայր: Նա մեզ ուսու-
ցանում է, որ առանձին անհատները, ընտանիքները, տոհմե-
րը, ժողովուրդները և ցեղերը իրենց գոյութեան բոլոր պայ-
մաններում՝ նիւթապէս թէ հոգեպէս միմեանցից կախուած
են: Յատկապէս կուլտուրական և անտեսական աշխարհա-

1) Տես մեղինակի «Ընդհ. Գիտակտիկա» երկը. մաս. 27 երես.

գրութիւնները կոչուած են հետաքրքրութիւն զարթեցնելու սօցիալական դրութեանց, պետական ձեերի, անտեսական ձգտումների և կրօնական հայեացքների համար։ Այսպէս տեսնում ենք, որ աշխարհագրութիւնը, որ իր նիւթով կապէ է հաստատում մարդու և բնութեան կեանքի, ուրիմ և պատմական և բնագիտական դիսցիպլինների մէջ, մնձ չափով կարող է նպաստել դասաւանդութեան ընդհանուր կրթական նպատակի իրագործմանը՝ առաջ բերելու և խնամելու բաղմակողմանի հետաքրքրութիւն։ Հետաքրքրութիւնը ըստ իր էութեան հոգեբանական նախադուռն է մարդկային կամքի, որին և տալիս է ոյժ և ուղղութիւն։ և եթէ աշխարհագրական դասաւանդութիւնը կարող է հետաքրքրութիւն ծնել և այդպիսով ներգործել սանի կամքի վրայ և նրան բարոյապէս կերպաւորել, ակներեն է, որ նա ևս իր մասով կնպաստէ կրթութեան բարձրագոյն իդէալի իրաղործմանը՝ բարոյական անձնաւորութիւն պատրաստելուն։

3) Աշխարհագրութեան դասաւանդումը մինչեւ այժմ։

Ի նկատի առնելով աշխարհագրութեան այս բարձր կըրաթական արժեքը, կարելի էր ենթարկել, որ աշխարհագրութեան հակայական առաջադիմութիւնը անմիջապէս պէտք է ազգէրնեաւ աշխարհագրութեան դասաւանդութեան վրայ և դպրոցը պէտք է ըսնէր «համեմատական երկրագիտութեան» ճանապարհը։ Սակայն իրողութիւնը հակառակն է ցոյց տալիս։ յիրաւի, թէպէտ աշխարհագրութեան դասաւանդութիւնը երկրագիտութեան զարգացմանը անհաղորդ չմնաց և Ռիտաէրի մտքերը այստեղ և այնտեղ հետեղներ գտան, սակայն նա իր զարգացման ընթացքում աշխարհագրութեան հետ համբաւաց առաջ չզնաց։ Մինչեւու Ռիտաէրի նշանաւոր աշխակերտները՝ Դօմրիխը, Պիւտը, Դանիէլը, Ռատուէլը, Քիրիսհօֆը, Գուտէն ոկսեցին Ռիտաէրի մտքերը տարածել լայն շրջաններում, իսկ Յօրման, Լիւրէն, Պրանդէն, Օքերէնէրի, Հուտմէլ, Գայացըէք տաղանդաւոր մանկավարժները աշխատում էին գործնականի վերածել այդ իդէաները, այնուամենայնիւ գործնականը յետ մնաց տեսութիւնից և մինչեւ

այժմ գորոցում գեռ թագաւորում է դիտակտիկական մատերիալիզմը¹⁾։ մինչեւ այժմ էլ աշխարհագրութեան զասաւանդութեան գլխաւոր նպատակը համարւումէ իմացութեան նիւթի կուտակումը։ ինչպէս որ երկրագնափ վրայ երկիր երկրի, ծովի է կպած, այնովէս էլ դասաւորութեան մէջ նիւթերը անկապ կերպով անընդհատ և անմիջը իրար են հետեղում։ որպէսզի աշակերտը ճանաչէ երկրի բոլոր մասերը, ուսուցիչը նրա հետարշաւանք է սկսում երկրագնափ վրայ, նրան երկրից երկիր, ծովից՝ ծով, սարից՝ սար, զետից՝ զետ և քաղաքից՝ քաղաք քշելով, ոչ մի տեղ նրան հանգիստ չտալով, ամենուրեք ստիպելով միայն իմացութեան բեռը ծանրացնել։ Աշակերտի գլուխը ծանրաբենում են օր։ Ալպերը բաժանելով քուտական, գրայական, պեննինական, լեպոնտենական, հունտական են մասերի, նրան ստիպում են խնամքով յօդարաշխնել Կօրդիլերիան շղթան, մի առ մի թուել ասիսկան բարձրաւանդակի լիոնաշղթաները, գագաթները, սրանց բարձրութիւնը ծովի մակերեսովից են։ աշակերտը դասնում է մեքենայ, անվերջ թուելով մարդ ցամաքները իրենց թերակզբիներով և հրուանդաներով, կղզիները, ովկիանոսները, ծովերը, ծովախորշերը, ծովային ճանապարհները են։ Այսպիսով աշխարհագրութեան դասը գառնում է պատմութիւնից, բնագիտութիւնից և պետագիտութիւնից վերցրած անունների, թուերի, ծանօթութիւնների մի խայտաճամուկ առընթերութիւն։ Հանրագիտութիւնը նպատակ լընտրելով աշխատում են չատացնել մեռած և անօդուտ ծանօթութեան պաշարը։

Այս հանրագիտական հակեւմը անհրաժեշտորէն պէտք է ներգործէր աշխարհագրութեան դասաւանդութեան մեթոդի վրայ։ Եթէ գասաւանդութեան միջոցին առաւելապէս ուշագրութիւն է դարձւում նիւթի այդ տեսակ կուտակման վրայ, հոսու չէ, անտես անելով իրազննութիւնը, սանին անբովանդակ զարգափարներ մատակարարելու վտանգը։ «Աշխարհագրութեան արդի դասաւանդութիւնը ամբողջապէս զեռ գանըւումէ գասակարգութեան (կլսասիֆիկացիա) մեթոդի կապահքների մէջ, որ նկարագրական բնական գիտութիւնը իրենից

1) Տես Հեղինակի «Ընդհանուր գիտական մասն երկրորդ» Ա. զլուխ»

վաղուց արդէն թօթափիկ է. այնաև նիւթը ամենից առաջ և յաճախ բաժանում են, կարգաւորում, սուրբի ինսերի ենթակարգում և սքեմաներ կազմում. կարծես թէ ամբողջ երկրագունադր նրա համար է, որ գլորոցական աշխարհագրագէտ ները անդամանատեն նրան». յիրաւի, մինչև այժմ էլ թէպէտ փորձեր էին արտում աշխարհագրական երկոյթները կապակցութեան և համեմատութեան մէջ դնել, բայց այդ կապակցութիւնը և համեմատութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ արտաքին նմանութեանց և տարբերութեանց առոկ առընթերութիւն։ Այդպիսի համեմատութեանց միջոցին արձանագրուում էր, որ այս ինչ երկիրը շրջապատած է այս կամ այն երկրուներով, այս ինչ պետութիւնը հինգանկիւնի ձև ունի, մինչդեռ միւսը՝ եռանկիւնի, այս երկրի լոռները հիւսիսից հարաւ են ձգուած, միւս երկրինը՝ արեւմուտքից արեւելք։

Վեխարհագրութեան արդի դասաւանդուրիւնը տակալին զուրկ է Ոթսերեան ոգուց, ձգելով հանրագիտութեան, նա մեռում է երեւոյթների մակերեւոյթի վրայ և չէ բափանցում նրանց խորել. ուսի և կամայական յօդաբաժինութեանց ու արտաքին համեմատութիւններից այն կողմի չէ անցնում։ Մի դասաւանդութիւն, որի միջոցին հոգին քաղցում է, միաբը յոդնում և հետաքրքրութիւնը մեռնում, կրթութեան համար անարժէք է։ Եթէ երկրագիտութեան դասաւանդութիւնը բնաւորութեան կրթութեանը և մտքի հրահանդմանը ծառայելու է, պէտք է ձգտի աղաստուել զիդակափկական մատերիալիզմի կաշկանդող կապահքներից։ Սակայն ինչպիսի կերպարանք պէտք է ընդունէ աշխարհագրութեան դասաւանդութիւնը, որ համապատասխանէ Ռիտաքիւնի հայեցողութեանը։

4) Հայրենիքը եւ օսար երկիրը աշխարհագրութեան դասաւանդուրեան մէջ.

Յայտնի իրողութիւն է, որ մանկան հետաքրքրութիւնը հաւասարագէտ բոլոր ազգերին և երկրներին չէ դարձած, այլ նրա սիրալը ամենից առաջ բարախում է այն վայրի համար, ուր ծնուել և անուել է, այն ժողովրդի համար, որի հետ կապուած

է զոյսութեան բոլոր սպայմաններով։ Ծննդավայրը, հայրենիքը, ժողովուրդը, ազգը կազմում են մանկան հետաքրքրութիւն ելակէտը և կէտ նպատակին¹⁾։ Աշակերտը մի բնական տենչ է զգում ձանաչել հայրենի երկիրը, իր առանձնայատուկ գեղեցիկութիւններով, նրա ազգաբնակութեան կեանքը, սովորութիւններն ու նիստ ու կացը, ժողովրդական կեանքը հետաքրքրուելու ձգտումը, որ ի բնէ յատուկ է մանկան, պէտք է երկրագիտութեան գասաւանդութիւնը ի հաշիւ առնէ և այն զօրից զայնէ։ Աշխարհագրութեան դասաւանդութիւնը, նպատակ ունենալով հանրագիտութիւնը, մինչև այժմ ձգտում էր պատրաստել աշխարհագրագագիքի, մի անգրյան էակ, մակերեւոյթապէս ծանրաբեռնուած իմացութեան մեծ, բայց մեռած պաշտոնվ. իմացական հետաքրքրութիւնն էր, որ այդ գէպքում կիսով չափ իննամւումէր. մինչդեռ հազորդակցական հետաքրքրութիւնը, որ առաւելապէս կապուած է հայրենական մոմենտի հետ, անսնունդ էր մեռում։ Եթէ աշակերտը ամբողջ տարիներ մտքով թափառում է օտար երկիրներ և կարճ ժամանակ միայն կանդ է առնում հայրենիքի վրայ, բնական է, որ նա անկարող կլինի բմբոնել մօտաւոր և հեռաւոր հայրենիքի զեղեցիութիւնը և կուլաւորական վիճակը. այդ հնարաւոր է հայրենի երկրի բազմակողմանի, ուշադիր և խորագննին դիտողութեան չնորհիւ։ Այդ պատճառով աշխարհագրութեան դասաւանդութիւնը պէտք է ձեռք վերցնէ իր միջադաշտին բնոյթից և զառնայ հայրենական – ծողովրդական երկրագիտութիւն։

Երկ երկրագիտութիւնը ծառայելու և բնաւորութեան կրութեան գործին, նրա կեդրոնը պէտք է կազմեն մօտաւոր և նեռաւոր հայրենիքը. մինչդեռ օսար երկրների ծաւալը դասաւանդութեան մէջ պէտք է սահմանափակուի յօդու նայրենի երկրագիտութեան։

Արդ հարց է ծագում, թէ ինչ տեսակէտով և ինչ սահմանափակութիւններով կարող է օտար երկիրը դասաւանդութեան նիւթ դասնալ։ Աշխարհագրական դասի նիւթը պէտք է կըրճատուի, իսկ ծաւալը նեղանայ, եթէ ուղում ենք այն բովան-

1) Տես հեղինակի «Ընդհանուր գիտական երես» 48.

գակալից գարձնել. բայց ի՞նչպէս կը ճատել օտար աշխարհագրական նիւթերի ծաւալը, քանի որ մեր հայրենիքը «չինական պարիսպներով» կտրուած չէ արտաքին աշխարհից, այլ բոլոր պետութիւնների հետ ներքին փոխազգեցութեան մէջ է գտնըւում: Վաճառական շահերով, քաղաքականապէս և կուլտուրապէս մեր երկիրը կապուած է երոպական և այլ երկրների հետ. առանց այդ երկրների հետ ծանօթ լինելու մեր աշակերտները կդժուարանան ըմբանել և զնանատել հայրենի երկրի կուլտուրական հաստատութիւնները: Հայրենի երկրագիտութեան ամբողջութիւնը հարկադրում է մեզ ուսման ծրագրի մէջ առնել օտար երկրների ուսումնասիրութիւնը, բայց այդպիսով միաժամանակ բնարոշուումէ օտար աշխարհների նկարագրութեան պահօնը ուսման ծրագրի մէջ: Մինչեւ այժմ օտար երկրն ուսումնասիրուած էր իր տեսակէտից. հայրենի երկրագիտութիւնը պահանջումէ, որ օտար երկրն ուսումնասիրուի հայրենիքի համար և հայրենիքի տեսակէտից. ապագայում հայրենական մոմենտը՝ որպէս բարձրագոյն տեսակէտ, աշխարհագրական նիւթերի ընտրութեան համար առաջնորդող սկզբունք պէտք է դառնայ: Օտար երկի նկատառան համար չափ պէտք է ծառայէ նրա նշանակութիւնը հայրենիքի համար. ձեռք բերելով այս հիմնական տեսակէտը, միանգամը ընդ միշտ կազմատենք կարենոր և անկարենոր օտար երկրները հաւասարաչափ և շարլօնօրէն թուելու անօդուտ աշխատանքից: Այդպիսով այն երկրներն աւելի մօտ խմբակցութիւն կը կազմէն հայրենիքի հետ, որոնք կուլտուրայի գանազան սահմաններում՝ (քաղաքական, տնտեսական, արդիւնագործական և հոգեկան) հայրենիքի համար առաջնակարգ նշանակութիւն են ձեռք բերել: Այսպէս, օր. մեր մօտաւոր հայրենիքի՝ Կովկասի համար անցեալում նշանակութիւն են ունեցել Բիւզանդիան, Փոքր Սսիայի ազգութիւնները, Արաբները, Պարսիկները, լեռնականները են: Ներկայում նշանակութիւն են ստացել այն երկրները, որոնք նիւթական և հոգեկան կուլտուրայի սահմանում փոխազգեցութեան մէջ են մաել մեր հեռաւոր հայրենիքի՝ Ռուսաստանի հետ: Օտար երկրների նկատառումը ուսման ծրագրում, ուրեմն, ծառայական պաշտօն ունի: Ամենին կարենոր չէ, որ աշակերտները իմանալի են կապուած է աշխարհագրութիւնը, որ կայ մի երկրի բնութեան և կուլտուրայի մէջ: Մինչեւ այժմ սիստեմագրող աշխարհագրութիւնը նիւթերը գասաւորում էր բացառապէս արամարանական տեսակէտից. այսուհետեւ անհրաժեշտ է, որ արամարանական տեսակէտը փոխարինուի իրականութիւնը կարելի է իրական տեսակէտը առաջնորդող սկզբունք հոչակի և միենալոյն ժամանակ հայրենիքը՝ որպէս կապուած մոմենտ, աչքաթող անել. այսպէս, օր. եթէ գերմանացին Ռուսաստանը ուսումնասիրէ որպէս «Եւրոպայի չղթայուած հական», այդպիսով թէպէտ իրական տեսակէտ ընտրած կլինի, բայց այդ տեսակէտով չեն արտայայտուի Ռուսաստանը Գերմանիայի հետ կապող հանգամանքները. մինչդեռ Ռուսաստանը «Եւրոպայի հացահատի շանմարան» համարելով, աւելի որոշ և պարզ կերպով արտայայտած կլինինք այն կապը, որ կայ Գերմանիայի և Ռուսաստանի մէջ. նմանապէս Գերմանիան մեզ համար մի երկիրէ, «որից ստանում ենք արդիւնագործութեան», արտեստի և գիտութեան արտադրութիւններ», կամ Միացեալ նահանգները «հայ և ուսւ գաղթականութեան ցանկալի

բի բոլոր շղթաների անունները, Քորդիլերների մանրամասն յօդաբաշխումը, երկրների կանտոնները, պետութեանց նահանգները, ովկիանոսների մասները կամ ծովերի ծոցերն ու խորշերը. այդ ամենը հեշտութեամբ կարելի է նաև քարտէզի վրայ կարդալ, եթէ աշակերտը ընտելացել է քարտէզի գործածութեան և կարդալու եղանակին:

Օտար երկիրը ածխարհագրութեան. դասաւանդութեան մէջ այն չափով կարող է արժանանալ մեր ուսադրութեանը, որչափ նա նեանակութիւն է ձեռք բերել հայրենի երկրի կուլտուրայի զարգման համար:

Որովհեան օտար երկրները հայրենիքի հետ առաւելապէս կուլտուրական— անտեսական կապերով են կապուած, իսկ օտար երկրների նկատառութեան համար չափ են ծառայելու նրանց կապերը հայրենիքի հետ, ակներեւ է, որ գասաւանդութեան մէջ առաւելապէս պէտք է պարզաբանուեն օտար երկրների կուլտուրական— անտեսական կերպարանքը և վերջինս պայմանաւորող երկրաբանական, բնագիտական և քաղաքական հանգամանքները, որպէսպի այդպիսով ցուցադրուի այն պատճառական կապակցութիւնը, որ կայ մի երկրի բնութեան և կուլտուրայի մէջ: Մինչեւ այժմ սիստեմագրող աշխարհագրութիւնը նիւթերը գասաւորում էր բացառապէս արամարանական տեսակէտից. այսուհետեւ անհրաժեշտ է, որ արամարանական տեսակէտը փոխարինուի իրականութիւնը կարելի է իրական տեսակէտը առաջնորդող սկզբունք հոչակի և միենալոյն ժամանակ հայրենիքը՝ որպէս կապուած մոմենտ, աչքաթող անել. այսպէս, օր. եթէ գերմանացին Ռուսաստանը ուսումնասիրէ որպէս «Եւրոպայի չղթայուած հական», այդպիսով թէպէտ իրական տեսակէտ ընտրած կլինի, բայց այդ տեսակէտով չեն արտայայտուի Ռուսաստանը Գերմանիայի համար մի երկիրէ, «որից ստանում ենք արդիւնագործութեան», արտեստի և գիտութեան արտադրութիւններ», կամ Միացեալ նահանգները «հայ և ուսւ գաղթականութեան ցանկալի

վայրն է»: Այսօրինակ իրական տեսակէաններով կցուցազրուեն օտար երկրների կարեոր մոմենաները, մինչդեռ կընսեմանան անկանոր և երկրորդական պարագաները:

Օտար երկրների աշխարհագրական հանգամանեներից միայն այն առարկաները եւ երեւյթները պէտք է ուշադրութեան արժանանան, որոնք աշակերտին հնարաւորութիւն են տալիս խոր հայեցք ձգել հայրենի երկրի կեանի պարագաների վրայ եւ ըմբռնել հայրենի եւ օտար երկրների կուլտուրական փոխանակութիւնը:

Ամփոփելով ասածներս՝ կըստանանք.

1) Եթէ երկրագիտութիւնը ծառայելու և բնաւորութեան կրութեան գոռծին, երա կեդրոնը պէտք է կազմեն մօսաւոր եւ նեռաւոր հայրենիքը. մինչդեռ օտար երկրների ծառալը դասաւանդութեան մէջ պէտք է սահմանափակուի, յօգուտ հայրենի երկրագիտութեան:

2) Օտար երկիւր աշխարհագրութեան դասաւանդութեան մէջ այն չափով կառող է արժանանալ մեր ուշադրութեանը, որչափ նա նշանակութիւն է ձեռք բերել հայրենի երկրի կուլտուրալի զարգացման համար:

3) Օտար երկրների աշխարհագրական հանգամանեներից միայն այն առարկաները եւ երեւյթները պէտք է ուշադրութեան արժանանան, որոնք աշակերտին հնարաւորութիւն են տալիս խոր հայեցք ձգել հայրենի երկրի կեանի պարագաների վրայ եւ ըմբռնել հայրենի եւ օտար երկրների կուլտուրական փոխանակութիւնը.

5) Աշխարհագրութեան դասի կեդրոնացնող նշանակութիւնը.

Այժմ հարց է ծագում, թէ ժողովրդական դպրոցում ինչ պէտք է լինի աշխարհագրութեան դաւանութեան նիւթը. այս խնդիրը մեզ հարկադրում է ուշադրութիւններս ուղղել աշխարհագրութեան բնաւորութեան վրայ: Մնե մանկավարժը՝ Հերքարարը, որի ուսերի վրայ է կառուցուած մնձ մասամբ մանկավարժութեան արդի շնչը, աշխարհագրութիւնը համարում է «զուգորդող գիտութիւն», որ կազ պէտք է հաստատէ զի-

տելիքների մէջ, որպէս զի վերջիններս չառանձնանան»: Հերքարարի համար երկրագիտութիւնը ոչ միայն պատմութեան այլ և բնական գիտութեանց աջքն է. «առանց աշխարհագրութեան, ասում է նա, պատմական անցքերը զրկում են տեղից և տարածութիւնից, բնութեան արդիւնքները հողից, տարրական աստղաբաշխութիւնը՝ իր յենակէտից, իսկ երկրաշափական երեակայութիւնը՝ իր գործազրութեան պահմանից»:

Յատկապէս զուգորդիչ ոյժ ունի կուլտուրական աշխարհագրութիւնը, որ վերջին երեք տասնամեակում յանձին Օսկար Պեչելի, Ռիխանօֆէնի, Ռատցէլի, Գուտէլի, Կիպերարի, Վագնէրի, Քիրխօֆի բազմակողմանի զարգացել և կազ է հաստատել սահմանակից գիտութիւնների մէջ, նա հնարաւորութիւն է տալիս «մի գիտութիւնից անցնել միւսը»: Նախ և առաջ աշխարհագրութիւնը որոշ կապակցութեան մէջ է մանում պատմութեան հետ, այս բանն առաջին անդամ որոշակի արձանագրեց Ռիտաէրը իր զարագլուխ կազմող «Երկրագիտութեան յարաբերութիւնը բնութեան և մարդկային պատմութեան նկատմամբ» գրուածքում: Սշխարհագրութեան պաշտօնն է, ասում է Ռատցէլը, պարզաբանել երկրի և մարդու մէջ եղած փոխագարձ ազդեցութիւնը. «որովհետեւ, ըստ իս, ասում է նա, երկրի պատկերի ամբողջութեանը պատկանում է ոչ միայն աշխարհագրական իրողութիւնների թուելը, այլ և արձանագրել նրանց ներգործութիւնը մարդու մաքի և հոգու վրայ»: Պատմութիւնը զրագուում է ժամանակական իրողութիւններով, աշխարհագրութիւնը՝ տարբածական յարաբերութիւններով, երկումն էլ Փօրմալ բնոյթ ունեն. կուլտուրական նշանակութիւն կստանան նրանք, երբ աշխարհագրական պարագաները կոպայմանաւորեն պատմական երեսովներ ու զործողութիւններ, ժողովրդական կացութիւնը և պետական վիճակը: Մի երկրի գիրքը և տարբածական յարաբերութիւնը բացարում են նրա ազգաբնակութեան զարգացման պատմական որոշ փազերը, այսպէս, օր, Ռիտանական պետութիւնը հարիւրաւոր տարիների ընթացքում զարգանալով դարձաւ միծ կայսրութիւն, չնորհիւ իր բարեյացող զիրքի Ատլանտիան ովկիանոսում, որ վաճառականութեան տիեզերական առանցքն է, չնորհիւ բրիտանական ափերի նաւամատչելիութեան, զօ-

բեղ գաղութատիրութեան հանքային հարստութեան (երկաթ և ածուխ), և սրա վրայ հիմնուած հսկայական արդինագործութեան, չնորհիւ վաճառականութեան և ընդհանրապէս հաղորդակցութեան ծառայող մեծ նաւատարմիղի և անզիւական ժողովրդի վաճառականական հսարադիտութեան ու գաղութային տաղանդի: Վերոյիշեալ բարեյաջող աշխարհազրական գործօնների չնորհիւ Անզիիան եւրոպայի պատմութեան մէջ միշտ պատկառերի տեղ կդրաւէ: Նմանօրինակ, Սուէզի ջրանցքն ես իր դիրքի պատճառով մեծ դեր է կատարելու պատմութեան մէջ, որովհետեւ նրա առաջն է զանում Միջերկրական ծովը, իսկ յետեր՝ Հնդկական ովկիանոսը, աշխարհիս ամենահարուստ երկրներով. ուստի և այդ ջրանցքը դառնալու է առաջնակարգ աշխարհազրական միջոց տիեզերական առևտուրի ու հաղորդակցութեան: Մի երկրի աշխարհազրական դիրքը և այլ պարագաները որոշ զրոյմ են ընծայում նրա պատմութեանը և գիրեկափառներ տալիս նրա պատգայի համար: Աշխարհազր, հանգամանքներով է բացատրում մասամբ նապօլէօնի պարտութիւնը Ռուսաստանում (1812): Թէ Հայաստանի աշխարհազրական պայմանները՝ անհաջորդ և ոչ սահմանակից ծովերի, ցամաքային (կօնտինենտալ) կլիմայ, խստաշունչ և երկարատե ձմեռ, չոգ ամառ, դժուարանցանելի լեռներ, քարքարուտ գետին, աննաւարկելի գետեր, ինչպիսի՝ մասամբ ճակատագրական և մասամբ փրկարար նշանակութիւն են ունեցել հայ ժողովրդի գոյութեան համար, թէպէտ ճշգրիտ չհետագօտած, բայց ստոյգ իրողութիւն է:

Աշխարհազրութեան և բնական պատմութեան մէջ ես կայ որոշ կապ: Աշխարհազրութիւնը զբաղում է բազմօրինակ բոյսերով, կենդանիներով, որպէս մասն կեանքի և ուսումնասիրում է նրանց յարաբերութիւնը երկրի նկատմամբ: Երկրագիտութիւնը ցոյց է տալիս պատուական հանքերի և ազնիւ մետաղների տեղերը, որպէս բուսական և կենդանական աշխարհազրութիւն նա զբաղում է կենդանիների և բոյսերի տարածման աշխարհազրութեան գործօններով և որոշում է նրանց գործածութիւնն ու արժեքը մարդկային անտեսութեան համար: Կիմայաբանութեան միջոցով աշխարհազրութիւնը սերտ կապուած է բնագիտութեան հետ, վերջինս փորձնական կամ

պարզ դիտողութեան չնորհիւ բացատրում է բնագիտական երևոյթների ծագումն ընդհանրապէս և որոշում է նրանց նշանակութիւնը բնութեան տնտեսութեան, արդիւնաբերութեան, արդիւնագործութեան և հաղորդակցութեան համար: Աշխարհազրութիւնը օգտում է բնագիտութեան տուած ծանօթութիւններից՝ տաքութեան երևոյթների, օդային հոսանքների, տեղումների և լոյսի ներգործութեան մասին, ստուգելու համար կլիմայի ներգործութիւնը հողի կերպարանքի, բուսական և կենդանական թագաւորութեանց և ուրեմն մարդկային կուլտուրայի վրայ:

Երկրաբանութեան առևելաններից ես օգտում է աշխարհազրութիւնը՝ բացատրելու համար երկրի պլաստիկան և նրա նշանակութիւնը կեանքի և կուլտուրայի համար: Այսպիսով տեսանում ենք, որ աշխարհագրութիւնը օգտում է մասնագիտութիւնների արգասիքներից՝ առանց զբկուելու իր ինքնուրոյնութիւնից: Աշխարհազրութիւնը ուսման նիւթերի մէջ փոխադարձ կապ և միութիւն հաստատելով, գերազրապէս կոչուած է սանի իմացութեան՝ մոքի չըջանի մէջ միութիւն հաստատելու և անձնաւորութեանը միական զրոյմ ընծայելու:

Սակայն չպէտք է ենթազրել, որ երկրագիտութիւնը, որ առընչութեան մէջ է զնում իմացութեան տարբեր սահմանները, իրական ծանօթութեանց մի հանրազիտակ է՝ կազմուած զանազան զիտութեանց խառնուրդից. այլ նա ներկայացնում է մի միական սիստեմ, որ իր մէջ միացնում է բնութեան զանազան անհատներ՝ երկրային, բուսական, կենդանական և մարդկային. և նկարազրում է սրանց յարաբերութիւնը և փոխադարձ պայմանաւորումը:

6) Քաղաքական, բնական, քէ կուլտուրական աշխարհագրութիւն.

Արդ հարց է ծագում, թէ գասաւանդութեան միջոցին աշխարհազրութեան զանազան կողմները՝ մաթեմատիկական, բնական, քաղաքական, կենսաբանական, կուլտուրական—անտեսական որչափով պէտք է ուշադրութեան արժանանան:

Եթէ մի հայեացք ձգենք երկրագիտութեան դասաւանդութեան մեթոդիկայի պատմութեան վրայ, կտեսնենք; որ այս հարցին զանազան ժամանակներում տարբեր պատասխան է տրուել. մի ժամանակ առաւելապէս ծանրանում էին քաղաքական մօմննտի վրայ. մի առ մի թւում էին պետութիւնները, իրենց տարածութեամբ, ազգաբնակութեան թւով, նահանդներով, գաւառներով, քաղաքներով և տեսարժան տեղերով. յիրաւի բնական մօմննան ևս երեմն յիշատակութեան արժանանում էր, սակայն դա կատարուում էր մակերեսյթապէս և կողմնակի կերպով: ինչպէս որ քաղաքական աշխարհագրութեան մէջ անուններն ու թուերն էին զլսաւոր գերակատարները, այնպէս էլ երկրի բնական կերպարանքը նկարագրելիս առաւելապէս ուշագրութեան էին արժանանում լեռնաշղթաները՝ իրենց գագաթներով և գետերն իրենց վտակներով:

Քաղաքական մօմննաի այս միակողմանի չեցաման դէմ Ծիտուերը առարկեց, որ գրնականը, որ աւելի մնայուն է, պէտք է երկրագիտութեան առարկայ դառնայ և ոչ մարդկային անցաւոր գործերը: Այդպիսով մնձ աշխարհագրագէտը առաջին անգամ ֆիզիքական մօմննաին առաջնակարգ գերվերպեց ինչպէս զիտութեան, այնպէս էլ աշխարհագրութեան դասաւանդութեան մէջ. սակայն այս ուղղութիւնն էլ չուտով ծայրայեղութեան մէջ ընկաւ. առանձնապէս չեցաման էր երկրի Փիզիքական բնոյթը և լանցափափի կերպարանքը, մինչդեռ մարդը և նրա զարգացուումը անուշաղիր էին արւում: Քաղաքական աշխարհագրութիւնը, որ մինչ այդ աշխարհագրութեան դասաւանդութեան մէջ առն տուողն էր, նկատուեց որպէս անարժէք կցորդ բնական աշխարհագրութեան: Այս հանգամանքը այն վնասակար հետեանքն ունեցաւ, որ մի երկր ուսումնասիրում էին նախ Փիզիքապէս, ապա քաղաքապէս. բնական է, որ այդպիսով աշակերտի հասկացողութիւնը մնձ դժուարութիւնների պիտի հանդիպէր. որովհետեւ դասաւանդութիւնը կամայականորէն բաժանելով բնականորէն իրար պատկանող մասերը, աշակերտին հարկագրում էր ամբողջական պատկերը վերածել արհեստական կերպով իրարից անջատ մասերի. այդպիսով առաջ էր զալիս մի խայտաճամուկ առընթերութիւն, որ տաճում էր դէպի շարլօնական

կրկնութիւն, ոգեսպան սքեմատիզմ և միենոյն ժամանակ զրկում էր երկրագիտութեան դասաւանդութիւնը իր կերպաւորող ուժից և կրթական արժէքից:

Անհրաժեշտ է ուրեմն երկրագիտութեան դասաւանդութիւնը աղատել միակողմանիութիւններից և յարմարեցնել զիտութեան և կեանքի պահանջներին. Դրա համար հարկաւոր է որ միակողմանութիւնը վիխարինուի բազմակողմանութեամբ. իսկ այս հնարաւոր կիմի, եթե աշխարհագրական բոլոր մօմենտները հաւասարապիս ուսուդրութեան կարժանանա. բայց որպէս զի բազմօրինակ աշխարհագրական երեսյթների մէջ միութիւն հաստատուի, կարեոր է, որ աշխարհագրական առանձին անհատները զրուեն ամեն բան ընդորկող՝ մի ընդհանուր տեսակէտի տակ. այդ տեսակէտը կարող է լինել մարդը կամ մարդկային կուլտուրան, որովհետեւ մարդը մի կողմից կեանքի բոլոր հանգամանքներում կախուած է իր բնակութեան վայրից, միւս կողմից իր աշխատանքով և ստեղծագործութեամբ կերպարանափոխում է երկիրը. այդպիսով երկրագիտութիւնը մարդուն և մարդկային կուլտուրան ուսումնասիրութեան կեղրոնը զարձնելով, բնականորէն դառնակարգ ու առաջնորդութիւնը է կուլտուրական աշխարհագրութիւն:

Կուլտուրական աշխարհագրութիւն և կուլտուրական պատմութիւն—այս է պահանջում ներկայիս զրոցը. «կուլտուրական աշխարհագրութիւնը երկիրը ներկայացնում է որպէս մարդկային ցեղի կրթարան. նա ներկայացնում է մեզ մի ժողովուրդ՝ իր կուլտուրական աշխատանքի միջոցին և մի երկիր՝ կուլտուրական զրութեան մէջ»:

Կուլտուրական աշխարհագրութիւնը նախ զբագւում է մի ժողովրդի նիւթական կուլտուրայով, ապա հոգեկան. նիւթական կուլտուրայի ուսումնասիրութիւնը անտեսական աշխարհագրութեան խնդիրն է, որ կուլտուրական աշխարհագրութեան ամենաէտական մասն է կազմում:

Իրաքանչիւր մարդ, ընտանիք, համայնք, հասարակութիւն, ժողովրդ ունեն նիւթական՝ հազուսափ, մնունդի, բնակարանի և հոգեկան կարիքներ, որոնց բաւարարութիւն է արւում նիւթական բարիքների արտագրութեամբ և զիտութեան ու արուեստի միջոցով: Տնտեսական աշխարհագրու-

թիւնը յիշատակում է այն բոլոր կուլտուրական միջոցները և հաստատութիւնները, որոնք հնարաւոր են դարձնում նիւթական բարիքների հայթայթումը, պահպանութիւնը և գործածութիւնը: Ժողովրդի սնուցման և կացութեան գործին ծառայում է արտադրութիւնը, որի համար մարդկային միտքը բանական եղանակով, բնութեան ուժերի աջակցութեամբ և մեքենական յարմարութիւններով ներդործում է բնութեան վրայ, որի միջոցին վերջինս որոշ քանակի և որակի դիմադիրոյն է երեան հանում:

Տնտեսական աշխարհազրութեան խնդիրն է «մի լանդշաֆտի գիրքից, լեռնագրական և ջրագրական վիճակից, կիւմայաբանական և հանքաբանական պայմաններից և քաղաքական դրութիւնից արտաքերել նրա և ընդհանրապէս ամբողջ առետրական երկրի արդիւնաբերական և հազորդակցական կացութիւնը»:

Բնու այսմ անտեսական աշխարհագրութիւնը ենթագրում է մաթեմատիկական—աշխարհագրական և բնագիտական—աշխարհագրական ծանօթութիւնների ներկայութիւնը: Մի երկրի նիւթական և հոգեկան կուլտուրայի վրայ մեծ ազդեցութիւն ունի նրա դրութիւնը՝ երկայնութեան և լայնութեան ցանցի մէջ և այլ աշխարհագրական առարկաների նկատմամբ: Այսպէս, օրինակ, Գերմանիայի դրութիւնը երեք կողմով տնտեսական—աշխարհագրական նշանակութիւն ունի. նաև նա գտնում է բարեխառն գտառ հիւսիսային մասում, երկրորդ, երոպական կուլտուրական պետութեանց մեջ կերպնական տեղ է գրաւում, և երրորդ ընդհանրապէս բաց սահմաններ ունի, որոնք հազորդակցութեանը նուազ արգելուներ են յարուցանում: Իր կեդրոնական դրութեան պատճառով Գերմանիան երեք մեծ պետութիւնների՝ Ֆրանսիայի, Աւստրօ—Ռւնդարիայի և Խուսաստանի և չորս փոքր պետութիւնների՝ Նիդերլանդի, Բելգիայի, Զուլիցերիայի և Դանիամարքի հետ անմիջական յարաբերութեան մէջ է զտնում: Միւս երկու երոպական մեծ պետութիւններից՝ Անգլիայից բաժանում է մի նեղ ջրանցքով, իսկ իտալիայից՝ երկրի մի նեղ շերտով. նոյն իսկ կղզիների մի կամուրջ տանում է դէպի Սկանդինավան թերակղզին: Այսպէս ուրեմն հազորդակ-

ցութեան տեսակէտից Գերմանիան Եւրոպայի ամենակարևոր ճանապարհն է: Գերմանական ցամաքային ճանապարհները (ինձուղի և երկաթուղի), ջրային ճանապարհները (ծովերը, դետերը, ջրանցքները), հազորդակցութեան միջոցները (փոստը, երկաթուղին, առագաստաւոր և շողենաւերը, հեռագրաթելը, հեռախոսը) փոխադրում են Գերմանական նիւթական և հոգեկան կուլտուրան երոպական միւս երկրները: Կեզրոնական զրութիւնը Գերմանիային միւս կողմից այն առաւելութիւնն է տալիս, որ նա կարող է դիւրութեամբ ազգուել իրեն շրջապատղ ազգերից: Այդ նոյն կեղրոնական զրութիւնը պահան կորստաքեր հետեւանք չէ ունեցել Գերմանիայի համար: Դրայի ազգերը՝ Հռովմայեցիք, Ռւնդարները, Ֆրանսիացիք, Անգլիացիք, Նորմանները, Դանիամարքցիք և Շլեզիները հին դարերից սկսած Գերմանիան դարձել են շահերի մրցութեանց ասպարէզ: Բացի այս՝ անտեսական աշխարհազրութիւնը փորձում է գնահատել մի երկրի ուղղահայեաց և հորիզոնական յօդաբաշխման նշանակութիւնը նրա արդիւնաբերութեան և հազորդակցութեան համար, գետերի և ծովերի կարեսութիւնը որպէս հազորդակցութեան ճանապարհ՝ ապրանքների արժան փոխադրութեան համար: Տնտեսական աշխարհագրութիւնը ցուցումներ է տալիս Շլեզինեան, բուսական և կենդանական թագաւորութիւնը Շլեզինեան ունեցութիւնը ունեն մի երկրի արդիւնաբերութեան, ուղղահատութեան և գաղութընտրութեան համար:

Այս հիմնական բնագիտական—աշխարհագրական դիտողութիւններից յետոյ անտեսական աշխարհագրութիւնները տում է հողի մշակման հարցովը. նա այդ միջազգային կում է, թէ երկրի որ մասերն են երկրագործօրէն շահագործում և մնունդի ինչ նիւթեր են մատակարարում. նա թշում է 1) հացահատիկները (հաճար, ցորեն, գարի, վարսակ, ըրինձ, կորեկ, եղիպատացորեն.՝Պահանջման հարաւային թուսաստանում և Ռւնդարիայում. Հիւսիս—Ամերիկեան և Արգենտինեան հացահատիկի շտեմարանները), 2) արմատներով կերակրող բոյսերը, (կարտոֆիլ), 3) պառզներով, տերեներով և միջուկով կերակրող բոյսերը. (նարինջ, լիմոն, թուզ, նուշ, աղնիւ շաղանակ, անանաս, բանան, հնդկանուշ,

արմաւ, սագօ). 4) զրդուման և վայելքի միջոցներ մատակարարող բոյսերը (ճակնակեղ, շաքարեղէջն, կակաօ, հաղող, վայլուկ, սուրձ, թէյ, օպիում, ծխալսոտ). 5) համեմիներ և գեղեր մատակարարող բոյսերը (պղպեղ, կինամոն, մշկնկոյզ, կօճապղպեղ). 6) ձարպ, իւղ և սօմնձանիւթ մատակարարող բոյսերը. (ձիթարմաւ և կառչուկէլ). 7) մանուող բոյսերը. (բամբակ, կանեփ, վուշ, հնդկականեփ):

Ծնտեսական աշխարհագրութիւնը ստուգում է, թէ ի՞նչ տարածութիւններ են ծածկուած անտառներով. նա նկարագրում է մարգագետինները և արօտատեղերը և բացատրում է սրանց նշանակութիւնը անասնաբուծութեան համար: Տընտեսական աշխարհագրութիւնը իր հետազոտութեան սահմանն է առնում վայրենի և ընտանի կինդանների տարածման և օդակարութեան ուսումնասիրութիւնը և փորձում է ցոյց տալ, որ նրանք իրենց մարմնի շինուածքով և կեանքի եղանակով կախուած են կլիմացից, բուսականութեան ձերից և մարդկացին ինսամքից: Նա մեզ ծանօթութիւն է տալիս ամենուրեք տարածուած կրինորոճների (տաւար, այծ, ոչխար) և սակաւատարած կրոնորոճների (ուղտ, լամա՝ հարաւային դաշտերում և անտապատներում, եղջերուները՝ հիւսիսային տունդրաներում), ամենուրեք տարածուած միասմբակաւորների (ձի, էջ, ջորի) և սակաւատարած միասմբակաւորների՝ վագրածի (զերբա) և ընդհանրապէս ուրիշ բազմատարած ընտանի կենդանների մասին (խող, չուռ): Ընտանի թոչուններն (հաւ, աղաւնի, սագ, բաղ, հնդուհաւ) և միջանաներն են (շերամ, մեղու) արժանանում են յիշատակութեան: Ընտանի կենդանիները տնտեսական մեծ արժեք ունեն. մի կողմից նրանք բնունակիր են, միւս կողմից հում նիւթեր են մատակարարում, որոնք յատկացնում են աշխարհային առևտուրի կամ տեղական սպառման համար. (միս, կաթ, ձու, մեղր՝ փետուրներ, մաղեր, ոսկրներ, փղումկը՝ ձկնեղէն, կաշեղէն, մորթեղէն):

Ծնտեսական աշխարհագրութիւնը զբաղում է ոչ միայն օրդանական աշխարհի արտադրած հում նիւթերով, այլ և անօրդանական. նա յիշատակում է այն վայրերը, ուր մեծ չափերով մշակում են հանքերը. առանձնապէս կանգ է առնում երկաթի և քարածուխի արդիւնաբերութեան վրայ,

որ արդի ինդուստրիայի, առևտուրի և հաղորդակցութեան հիմքն է կաղմում: Ծնտեսական աշխարհագրութիւնը ուշագրութեան է առնում նմանապէս մշակուած հում նիւթերը և ինդուստրիայի արտադրութիւնները կամ ֆաբրիկատները. հում նիւթերը միայն մակերեսոյթապէս են մշակուում, դիւրին տեղափոխութեան կամ պահպանութեան համար, մինչդեռ ֆաբրիկատ ասելով հասկանում ենք այն ապրանքները, որոնք ըստ նիւթի, բաղադրութեան և ձեր մեքենական կամ քիմիական—տեխնիկական մշակման են ենթարկուել: Ինդուստրիական արտադրութեան մեծութեան մասին գաղափար կարելի է կազմել, եթէ ի նկատի առնենք համաշխարհային երկու մեծ ֆաբրիկատները՝ մի կողմից երկաթի գործուածքները, միւս կողմից մանուածեղջնները (բամբակի, բրդի, միտաքսի, կանեփի և հնդկականեփի):

Ինդուստրիայի զարգացման պայմանները ուսումնասիրելիս տեսնում ենք, որ ամենուրեք մեծ ինդուստրիայի հիմքը կազմում է երկաթի և քարածուխի հարստութիւնը. Մեծ բրիտանեան ու Միացեալ նահանգները իրենց բազմակողմանի զարգացած ինդուստրիան պարտական են առաւելապէս իրենց երկրի հանքային հարստութեանը: Ինդուստրիայի զարգացման պայմաններից մէկն է նաև նաւային և երկաթուղային հաղորդակցութիւնը, որ արագ և արժան կերպով տեղից տեղ է փոխադրում հում և մշակուած նիւթերը: Վերջապէս մի երկրի ինդուստրիայի զարգացման համար ոչ պակաս նշանակութիւն ունեն նրա աշխատաւոր զասակարգի բարեմասնութիւնները և նրան ապահովող ու վիճակը բարելաւող օրէնողրական որոշումները:

Ամենուրեք եռուն ինդուստրիայի հետեանքն է կենդանի վաճառականութիւնը և բազմազան հաղորդակցութիւնը. վաճառականութիւնը շրջանառութեան մէջ է զնում ապրանքները՝ փոխանակութեան համար. սպառման համար սահմանուած ապրանքների շրջանառութիւնը դիւրացնելու համար անհրաժեշտ են հաղորդակցութեան նանապարհներ և փոխադրութեան միջոցներ: Երաքանչիւր երկում գործութիւն ունի նախ ներքին վաճառականութիւն, որ օգտում է մարդատար, ապրանքատար և լրատար փոխադրութեան միջոցներից և հոգ

է տանում երկրամիջեայ արտահանութեան համար: Եթէ հաշորդակցութիւնը համարենք իրերի տեղափոխութիւն համապատասխան միջոցների օժանդակութեամբ, երեք տեսակի հաղորդակցութիւն կարող ենք որոշել, տեղի տեսակէտից կարող է լինել ցամաքային (խճուղի, երկաթուղի) և ջրային հազորդակցութիւն (գետ, ծով, ջրանցք). առարկայի տեսակէտից կարելի է որոշել մարդկանց, ապրանքների և լուրերի փոխադրութեան, իսկ միջոցների տեսակէտից՝ մակոյկի, առաջատանաւի, չողենաւի, բեռնակիր մարդկանց (կետր. Ա.Փրիկա, Ճապոնիա, Կորէա), անասունների (ձիեր, եղներ, ջորի և ուղարաւ. Ա.մերիկայում, արեմ. Ա.միայում և Ա.Փրիկայում), սահնակների (եղջիւրաւոր անասուններ և չներ մայր ցամաքի հիւսային ավերում), կառքերի, երկաթուղային և թելային (հնապարաթել, հեռախօս) հաղորդակցութիւն: Ներքին վաճառականութեան զարգացումը կախուած է երկրի զիւրագնացութիւնից, հաղորդակցութեան ճանապարհների և միջոցների շատութիւնից և լաւութիւնից, ազգաբնակութեան բանիմացութիւնից և այլ գործօններից: Շոգու և ելեքտրականութեան չնորհիւ հետզհետէ չքացան հեռաւորութեան յարուցած արգելութերը և երկրների անտեսական փոխանակութիւնը քանի զնաց զիւրացաւ. Ներքին վաճառականութիւնը փոխուեց արտաքին վաճառականութեան: Հիւսիսային, միջին և հարաւային Ա.մերիկայի թանկագին իրերը, Ա.միայի և Միջերկրական ցանկալի արտադրութիւնները, ժողովրդների սննդման համար տնտեսապէս կարենոր Ա.Փրիկայի և Ա.ւատրալիայի ազարակագործութեան արդիւքները առաջ բերին աշխարհային վաճառականութիւնը (առեւտուր): Ա.սետրական բոլոր երկրներում կազմուեցին ընկերութիւններ, որոնք պահում են ծովային գծեր՝ կուլտուրական երկրները վաճառականական հաղորդակցութեան մէջ գնելու համար: Ա.յալիսով ապրանքների փոխանակութիւնը ճանապարհ հարթեց աշխարհային կամաց անտեսական խմբակների միջոցներ (Ս.բնման—Միջին Եւրոպական և

Բրիտանական տնտեսութեան շրջան), երկուսը՝ նոր (հիւսիսացին Ա.մերիկական և Ռուսական տնտեսութեան շրջան) և երկուսը՝ նորագոյն (հարաւ—Ա.մերիկական և արևելեան—Ասիական տնտեսութեան շրջան, Զինաստան, Ճապոնիա):

Կուլտուրական աշխարհագրութիւնը, բացի նիւթական կուլտուրայից, որ բացառապէս տնտեսական աշխարհագրութեան առարկան է, զրագումը էնակ հոգեկան կուլտուրայով՝ այն է, մի ժողովրդի կառավարութեան ձեռք, կրթութեան գործով, կրօնական հայեացքներով, նիստ ու կացի ուսումնասիրութեամբ: Կուլտուրական աշխարհագրութիւնը համապատասխանում է մեր ժամանակի և կեանքի պահանջներին. Կուլտուրական կեանքի ալիքները այժմ տարածում են երկրագնտի ամենահեռաւոր անկիւնները. հասարակ մշակնանգամ այսօր պէտք է ի հայիւ առնէ կուլտուրական շատ հանգամանքներ, որոնցից կախուած է իր և իւրայինների գոյցութիւնը: Եթէ անը աշխարհագրութեան դասաւանդութեան չնորհիւ պէտք է նախապատրաստուի որեէ կոչման համար, որպէս զի ապագայում յաղթող դուրս դայ գոյութեան կուլում, անհրաժեշտ է, որ այդ դասաւանդութիւնը գուրել չինի կուլտուրական մօմենտից: Կուլտուրական—աշխարհագրական ծանօթութեանց չնորհիւ աշակերտը կիմանայ, թէ հայրենիքի որ մասերումն են արդիւնաբերում քարածուխ, երկաթ, արծաթ, պղինձ, աղ, ելն և որ մասերումն է խնամւում երկաթի, յախճապակու, կտաւի, բրդի և բամբակի արդիւնագործութիւնը: Ինչպէս որ հայրենի երկրի դիտողութեան միջոցին կուլտուրական—տնտեսական հանգամանքներն են առաւելապէս ի նըրկատի առնուելու, այնպէս էլ օտար երկրների ուսումնասիրութեան միջոցին զիսաւորապէս պէտք է ուշագրութեան արժանանայ քաղաքակիրթ ժողովրդների կուլտուրական—տնտեսական աշխատանքը՝ իւր բոլոր ճիւղերով:

Ասածներից ակներե է, որ երկրագիտութեան դասաւանդութիւնը պէտք է կերպարանափոխուի և զառնայ կուլտուրական աշխարհագրութիւն: Կուլտուրական տեսութիւնը աշխարհագրութեան դասաւանդութեան շղթայի վերջին օղակը չպիտի կազմէ, այլ նրա ուղն ու ծուծը. հակառակ զէպում այդպիսի դասը դուրել կենքի կերպաւորող ուժից և կըր-

թական արժէքից։ Հայրենագիտական դրազմունքների միջոցին ևս տնտեսական մօմնութը առանձնապէս պէտք է շեշտուի, որպէս զի աշակերտը հետզինտէ այն իմացութեանը համար, թէ հայրենի երկրի կուլտուրական երեսյթները պայմանաւուրուած են հայրենի հողով և բնակչութեան աշխատանքով, որ բնութիւնը և մարդը փոխադարձ ներգործութեամբ են ստեղծում մի երկրի կուլտուրան։ միայն այս իմացութիւնը կարող է կմնանի հետաքրքրութիւն գարթեցնել օտար կուլտուրայի ուսումնասիրութեան համար։

Վերջապէս առարկուում է, որ կուլտուրական աշխարհագրութիւնը կարող է աշակերտին ծանրաբեռնել. դրա դէմ պէտք է նկատել, որ կուլտուրական աշխարհագրական դիտութիւնց միջոցին առաջնակարգ տեղ է բնում ոչ թէ իմացութեան նիւթի կուտակումը, այլ կուլտուրական կեանքի խոր ըմբռնումը։ Աշակերտը ոչ միայն պէտք է զիտենայ, այլ և ըմբռնէ, որ մի ժողովրդի կուլտուրան պայմանաւորուում է նրա բնակավայրով, տնտեսական կեանքը՝ երկրի բնոյթով. որ սոցիալական և քաղաքական հանգամանքները յաճախ հետեանք են երկրի առանձնայատուկ կերպարանքի, որ վերջապէս բնակավայրը մեծապէս ազդուում է մի ժողովրդի հոգեկան կեանքի, կրօնական համոզումների վրայ. աշակերտը պէտք է սովորի ըմբռնել, որ բոլոր մասնակի երեսյթները ներքին փոխազդեցութեան մէջ են դանւում. ճիշտ է, որ դրա համար հարկաւոր են բազմաթիւ ծանօթութիւններ, բայց այդ ծանօթութիւնները մեռած տառ չեն, ինչպէս անունների և թուերի չոր ցուցակը, այլ կենդանի իմացութիւն, որ գարբնուում է միաքը և զրգուում զգացմունքը։

Առածներից կարելի է արտաքերել.

1) Երկրագիտութեան դասաւանդուրեան կեդրոնը պէտք է բռնէ ոչ բնական եւ ոչ ել բաղաբական մօմնենք, այլ կուլտուրական, որպէս զի երկրագիտութիւնը փոխուի կուլտուրական աշխարհագրութեան։

2) Կուլտուրական աշխարհագրութիւնը մեր ձեռքի վսանելի մասւաք է տալիս առանձին աշխարհագրական երեւոյթների նկատառութեան համար, այսպէս ոչ մասնական աշխատանքում այս կամ այն մօմնենքի միակողմանի շեշտումից, այլապէս ասած «եր-

կրագիտութեան դասին տալիս է իր իսկական բովանդակութիւնը։

3) Կուլտուրական աշխարհագրութիւնը սովորեցնում է աւակերտին տնտեսական հանգամանքները խորն ըմբռնել եւ ուղիղ զնանատել. այդպիսով նա նախապատրասում է գործնական կեանքի համար։

4) Կուլտուրական աշխարհագրութիւնը առաջ կը բերէ սանի մէջ բարոյական համոզումներ, որ Երան կրդեն գործել եւ աշխատել յօգու մարդկութեան։

5) Կուլտուրական աշխարհագրական դիտողութեանց համար ժամանակ վաստակելու համար պէտք է սահմանափակել օսար երկրենի ուսումնասիրութիւնը, այլ եւ դասաւանդութիւնից միանդամայն դուրս նետն անունների եւ բուերի անօգուտ ցուցակը։

6) Կուլտուրական աշխարհագրական դիտողութեանց միջոցին զիսաւոր արժէք պէտք է վերագրել ոչ թէ անունների մեռած պատշաճ ժողովելուն, այլ մարդկային կուլտուրայի բնական հիմների ըմբռնումը դիւրացնելուն։

i) Պետագրութիւն, գետագրութիւն թէ լանդշաֆտի ուսումնասիրութիւն.

Եթէ աշխարհագրութեան դասաւանդութեան կէնդրոնը կազմելու է կուլտուրական մօմնագր, անհրաժեշտ է, որ նա հիմնական վոփոխութիւնների ենթարկուի։ Մինչի այժմ աշխարհագրական դիտողութիւնը հիմնում էր պետութեանց քաղաքական սահմանների վրայ. կայսրութիւնները, թագաւորութիւնները, մեծ գքսութիւնները և գքսութիւններն էին կազմում դասաւանդական միութեան հիմքը. իւրաքանչիւր պետութեան զիտողութեան միջոցին ես քիչ բացառութեամբ վարչական բաժանումն էր նորից պայմանաւորում դասաւանդութեան նիւթերի յաջորդական կարքը. այսպէս, օր Ռուսաստանը գաղչական տեսակէտից բաժանում են նահանգների և քրջանների, Աւստրո—Ռւսագրեան՝ Թագի երկրների (Kronland), Պրուսիան՝ տասներկու պրովինցների և լուսաւանդամանը աշխարհագրութեան մասնակի է աշխարհագրական կարքը։

ինչու ապագայում պետութեանց սահմանները և վարչական բաժանումները այլիս աշխարհագրութեան դաստանութեան հիմք չպիտի կազմեն:

Թէպէտ պետութեանց սահմանները արդիւնք են պատմական զարգացման, այսուամենայիւ նրանք միշտ ենթակայ են եղել մեծամեծ փոփոխութիւնների. Աթէ մի բոպէ համեմատելու լինենք Նապոլէօնի ժամանակի Եւրոպայի քարտէզը այժմեանի հետ, կաւսնենք, որ ահազին փոփոխութիւններ են տեղի ունեցել. այս հանդամանքը արդէն պարզապէս ակներել է դարձնում, որ երկրի պետական բաժանումը ոչ բնական է և ոչ էլ մնայուն. դեռ աւելին կարելի է ասել. պետական սահմանները կամ կառավարչական բաժանումները անտես են անում կամ նոյն իսկ յաճախ խեղաթիւրում են երկրի բնաւկան կերպարանքը: Դիտենք մի բոպէ Վիւրտսմբերգի թագաւորութիւնը. Երեք բնական լանդշաֆտներից և հարաւային գերմանական երկու գետային սիստեմներից էլ նա մասն ունի. իր Շւարցվալդեան շրջանով նա պարփակում է Վերին Հոլենուսեան տափարակի արելեան եզրը. Նրա Դանուբեան շրջանը պատկանում է գերմանական բարձրաւանդակին, մինչդեռ Նեքարի և Իսկաստի շրջանները բռնում են Շւարական դարատափի մեծագոյն մասը: Այս երեսոյթը ամենուրեկ աչքի է ընկնում. Աւստրօ—Ռւնդարիան, Բալկանեան մանր իշխանութիւնները, Զուլցարական կանտոնները, հարաւ—Ամերիկեան պետութիւնները, Կովկասի նահանգները բնաւ չեն համապատասխանում երկրի բնական կերպարանքին. ոչ մի տեղ քաղաքային սահմանը չի ծածկում լանդշաֆտի հետ: Քաղաքային սահմանը զուրկ է բնական միութիւնից. յաճախ նա բաղադրուած է լինում երկրի այլացեղ մասերից և զանազանակերպ լանդշաֆտներից: Այս խայտաբղետ բազմօրինակութիւնը, որ հանդիպում ենք մի պետութեան սահմանների մէջ, ամեն կերպ զժուարացնում է պատկերի ամբողջութեան ըմբռնումը. այդպիսով աշխակերը անկարող կլինի պարզ գաղափար կաղմել մի երկրի և նրա բնակչութեան մասին. որովհետեւ հէնց որ քաղաքական սահմանը կամ վարչական բաժանումը առանց այլ և այլութեան դաստանդական միութեան հիմք նկատուի, հարկագրուած կլինինք աշխարհագրական

մասնակի երեսոյթները, որպէս սոսկ իրողութիւններ աշակերտին կազմ և պատրաստ մատակարարել, առանց պատճառներն հետազոտելու, և այդ այն պարզ պատճառով, որ երկրի բնական (լանդշաֆտային) կերպարանքն է պայմանաւորում մնացած աշխարհագրական մասնակի երեսոյթները՝ կլիման, բուսական և կենդանական թագաւորութիւնը, տնտեսական կեանքը և հաղորդակցութեան պայմանները, աղգաբնակութեան տիպը և ուրիշ շատ հանդամանքները. իսկ երբ այդ բնական մօմենտը անտես է արւում, անկարելի է ըմբռնել բնութեան և կուլտուրայի մէջ եղած կազը: Ըստ այսմ աշխարհագրութեան դաստանեցութեան միջոցին մերօդական միութիւններ սահմանելիս պետական սահմանները կամ կառավարչական բաժանումները չեն կարող նիմի համարուել, որովհետեւ պետութիւնները զուրկ են միութիւնից, պետական սահմանները կտրատում են ի թե՛ համապատկան առարկաները եւ այդպիսով զժուարացնում են պատկերի ամբողջական ըմբռնումը եւ կուլտուրական—աշխարհագրական դիտողութիւնը:

Առարկանների ամբողջութիւնը չկտրատելու համար առաջարկութիւն է եղել երկիրն յօդաբաշխել ոչ թէ ըստ պետութեան սահմանի, այլ գետերի աւազանի, այս բանը պատճառաբանուում է նրանով, որ իւրաքանչյւր գետի աւազան մի միական ամբողջութիւն է ներկայացնում. գետային սիստեմը խիստ բնորոշում է հողի կերպարանքը: Այս պատճառաբանութիւնները անպայման ծշմարիտ չեն. նախ պէտք է նկատել, որ գետային ջրաբաշխները շատ քիչ գէպըում են միական ամբողջութիւն ներկայացնում. այդ կարող է տեղի ունենալ միայն այն գետերի և վտակների նկատմամբ, որոնք խիստ կարճատե ընթացք ունեն. այն էլ ոչ միշտ. մեծ մասմբ գետերի աւազանները աշխարհագրական միութիւն չեն ներկայացնում, այլ բաղադրուած են լինում մի շարք աշխարհագրական անհատներից, որոնք հիմնապէս տարբերում են իրարից. այսպէս, օր. Արաքսը սկզբում հոսում է Կարսի բարձրաւանդակով, միջին հոսանքը պատկանում է Արաքսուածան գաշտին, մինչդեռ ստորին հոսանքը՝ Կասպեան տափարակին: Նմանապէս Հոլենոսը իր ակունքից մինչեւ բերքանը հոսում է գանազան լանդշաֆտների միջով. Նրա վե-

րին հոսանքը պատկանում է Ալպեան շրջանին, միջինը՝ աւրեմտեան գերմանական գաշտին, որ նոյնպէս երեք ինքնուրոյն լանդշաֆտներից է կազմուած, և Հունոսեան հերձաքառու լեռներին, մինչդեռ ստորին հոսանքը ընկնում է հողանցական ստորահարթը: Երկրորդ պատճառաբանութիւնն ես, որի համաձայն գետային սիստեմը խիստ բնորոշում է հողի կերպարանքը—չէ կարող քննադատութեան դիմանալ. խիստ հաղուագիւտ են երկրային այն տարածութիւնները, որոնք, չնորհիւ գետի ընթացքի ինքնուրոյն և միական բնոյթ են ստացել. մակերեսոյթի ձեռով շատ աւելի լաւ է բնորոշում երկրի լանդշաֆտային ինքնուրունութիւնը, քան թէ գետային սիստեմի զարգացմամբ: Երկրի դիտողութիւնը ըստ գետային սիստեմի ունի և իր ստուերային կողմերը. որովհետեւ գետային սիստեմն ես պետութեան նման աշխարհագրական բազմօրինակութիւն է ներկայացնում, նրա ըմբռնումը այնքան էլ հեշտ չէ. որպէսզի աշակերտը պարզ գաղափար կազմէ երկրի պատկերի մասին, պէտք է գետի ամբողջ ջրառաջիւց փոքրիկ մասերի բաժանել. այդ բաժանումը սակայն չպէտք է կամայական լինի. այսպէս, օր. Հունոսի ամբողջ շրջանը կարելի է բաժանել հետևեալ մասերի. Բերնի բարձրավանդակը, Զուլցարական՝ Վերին Հունոսեան տափարակը, Շւաբական—Ֆրանքեան դարաստափը, Լօթարինդական դարաստիք, Հունոսեան հերձաքարոս լեռները և ներքին Հունոսեան ստորահարթը: Այդպիսի յօդաբաշխումը անհրաժեշտ է, որպէս զի աշակերտը ըմբռնէ այն կուլտուրական հանդամանքները, որ երեան են գալիս մի գետի շրջանում. որովհետեւ հողի կերպարանքն է մարդկային կուլտուրայի բնական հիմքը կազմում. իսկ եթէ դասաւանդութիւնը բաւականանայ միմիայն գետերի ընթացքը նկարագրելով, մի առ մի թուելով նրանց վտակները և սրանց ափերին գտնուող գաղաքները—հեռու չէ սիստեմատիկայի և անուանագիտութեան մէջ ընկնելու վտանգը: Յիշաւի, աշակերտը այդպիսով անթերի տեղեկութիւններ ստացած կինի լեռների, գետերի և քաղաքների մասին, բայց բնաւ ձեռք չի բերի ամբողջական պատկերը. մասանակի աշխարհագրական հանգամանքները չեն ձուլուի և կազմէ մի ամբողջական պատկեր. աշակերտը կիմա-

նայ, որ մի գետ այս կամ այն պայտան է անում, որ նրա ախին այս ինչ քաղաքն է գտնուում, բայց գժուար թէ նա համանի այն պարզ և խոր իմացութեանը, որ երկրի կերպարանքը այստեղ ընթացք է սահմանել, այստեղ քաղաքի համար յարմար զիրք, մի այլ տեղ գաղութընտրութեան և արդիւնաբերութեան համար նպաստաւոր պայմաններ ստեղծել. և այսպէս՝ էականը աչքաթող անելով, անկարելի է գանում երևոյթներն ըմբռնել և մտապահել: Ըստ այսմ, գետերի աւագաներն եւս չեն կարող մերօդական միուրեան սահմանան համար յարմար նիմֆ դառնալ, որովհետեւ նրանք աշխարհագրական միուրիւն չեն ներկայացնում, այլ բազմօրինակութիւն. այդպիսով մինոյն ժամանակ կդուարանայ բնական եւ կուլտուրական հանգամանեների ըմբռնումը:

Մինչի այժմ փորձեցինք ցոյց տալ, որ անհնարին է կուլտուրական—աշխարհագրական դիտողութիւնը ինչպէս պետագրական, այնպէս էլ գետագրական հիմունքի վերայ. այժմ պէտք է հետազոտենք, թէ մեթոդական միութեան սահմանման համար ինչ տեսակէտ կարող է չափ դառնալ և ընդհանրապէս ինչպիսի հիմք պէտք է ունենայ երկրագրատութեան դասաւանդութիւնը, եթէ այն կուլտուրական աշխարհագրութիւն է զառնալու, վերեն արդէն յիշատակեցինք, որ պետական սահմանը կամ գետային սիստեմը աշխարհագրական բազմօրինակութիւն են ներկայացնում, որ գժուարացնում է կուլտուրական—աշխարհագրական դիտողութիւնը. այս երեսոյթը մեզ մատնացոյց է անում մինոյն ժամանակ այն հանգամանքի վրայ, որ աշխարհագրական դիտողութեան հիմք կարող է լինել միմիայն աշխարհագրական անհատը. աշխարհագրական անհատ են լանդշաֆտները. այսպէս, օր. Դերմանիան ներկայացընում է հետեւեալ բնական լանդշաֆտները՝ Վերին (օեր) գերմանական սարահարթը, Շւաբական—Ֆրանքեան դարաստափը, Վերին Հունոսեան տափարակը, Լօթարինդական դարաստափը, Հունոսեան հերձաքարոս լեռները, Վերին Սաքսոնեա, Շլեզվական տաշտը, արեմական էլբեան տափարակը, արեմեկան էլբեան տափարակը և Շլեզվիգ Հոլշտէնը:— Աւստրո—Ռւգարեան հետեւեալ չորս բնական տերարաններն է ներկայացնում. Աւստրիական ալպերը, Քարստի

շրջանը, Բոհեմական—Մօրաւական կաթուան և Ռւնդարական տափարակը,—Հիւսիսային Ամերիկան հինգ լանդշաֆտներից է կազմուած. Կորդիլերեան լեռնային սիստեմը, Միախափիի տաշտը, հիւսիսային տափարակը, Ապալաչիան լեռնային սիստեմը և Լաբրադորի հարթավայրը:

Սրդ, հարց է ծագում, թէ ինչու լանդշաֆտը կարելի է աշխարհագրական անհատ անուանել. պատկերացնենք մի բուպէ Արարատեան դաշտը. Նա ներկայանում է մի առանձնացած ամբողջութիւն, որ ըստ հողի յատկութեան և կերպարանքի, ոռոգմամբ և կիմայով, երկրի մշակութեան և արդիւնաբերութեան պայմաններով խիստ որոշում է շրջապատի լանդշաֆտներից: Այս տեսարանի բոլոր անդամները մի ներքին պատճառական կապակցութեան մէջ են զանուում: Հողի յատկութիւնը և կերպարանքը, համեմատաբար տաք կիման, տեղումների նուազութիւնը, բայց ոռոգելու հնարաւորութիւնը պայմանաւորում են Արարատեան լանդշաֆտի արգաւանդութիւնը (գինի, բամբակ, բրինձ ելն): Լանդշաֆտը երկրագիտութեան մէջ նոյն պաշտօնն է կատարում, ինչ որ նախաղասութիւնը՝ քերականութեան մէջ և լանդշաֆտի առանձին անդամները (հողը, ոռոգումը, կիման, բնակչութիւնը) նոյն նշանակութիւնն ունեն, ինչ որ մասունք բանիները՝ նախադասութեան մէջ. ինչպէս սրանք, այնպէս էլ լանդշաֆտի անդամները, չնայած իրանց բազմապիսութեանը, մի ներդաշնակ միութիւն են կազմում: Աշխարհագրական մասնակի երեսոյթների շղթայումը և փոխազարձ պայմանաւորումը կարելի է ըմբռնել միայն բնական միութեան մէջ. իսկ այդպիսի բնական միութիւն կազմում է լանդշաֆտը: Յիրաւի, գետերի աւազանները աշխարհագրական դասաւանդութեան հիմք ընդունելիս ևս կարելի է ցոյց տալ հողի կերպարանքի և ոռոգման պայմանների մէջ եղած կապը, բայց միայն այն ժամանակ կարելի է ցուցաբերել բոլոր աշխարհագրական պայմանների ներքին առընչութիւնը, երբ սահմանափակւում ենք մի քնական խմբակցութեամբ. Նմանապէս, դասաւանդութիւնը չէ կարող աշխարհագրական տարրերի ներքին կապակցութիւնը բաւարար չափով լուսաբանել, քանի քաղաքական սահմանը կամ վարչական բաժանումներն են կազմում դա-

սաւանդութեան հիմքը, որովհետեւ նրանք չեն նկրկայացնում բնական խմբակցութիւն: Պետագրութեան թերութիւնը թերեա կարելի լինի մեղմել, իւրաքանչիւր պետութիւն լանդշաֆտային շրջանների բաժանելով և ապա այս մասնակի պատկերներից մի ամբողջական պատկեր կազմելով:

Լանդշաֆտային հիմքերի վրայ զրուած աշխարհագրութեան դասաւանդութիւնը այն առաւելութիւնն ունի, որ այդ համապատասխանում է նաև աշակերտի մտաւոր տեսակէտին. աշակերտին հետաքրքրում է ամբողջութիւնը, մինչդեռ մանրամասնութիւնները նրա համար միջնորդական հետաքրքրութիւնն առարկայ են. մանկան միտքը, սակայն, մի փոքրիկ շրջան միայն կարող է միանգամբց ընդպրկել. ուստի կարեոր է երկրային մեծ տարածութիւնները—լինեն դրանք պետութիւններ կամ մեծ գետերի աւազաններ—փոքր, հեշտութեամբ աչքածելի բնական խմբակցութիւնների վերածել. Divide et impera. այս խօսքը մեզ պէտք է ուղեցոյց լինի նաև աշխարհագրական դիտողութեան միջոցին, որովհետեւ հանդամանքներն այս տեղ ոչ միայն բարդ են, այլ և յաճախ հակազդիր:

Աշխարհագրական նիւթը ըստ լանդշաֆտների կարգաւորելով՝ աւելի մեծ չափով հնարաւորութիւնն կունենանք մնթողիկայի պահանջներին բաւարարութիւն տալ, քան այլ գէպօրում. այդպիսով առանձնապէս կենչութիւնները, որ աշխարհագրութեան դասաւանդութեան մէջ մեծ կարենութիւն ունի, որովհետեւ լանդշաֆտի ուսումնասիրութիւնը պահանջում է մանրամասն նկարագութիւնն և բաղմակողմանի զիտողութիւնն աշխարհագրական մասնակի հանգամանքների: Մասնակի պատկերացումները՝ իրազննական մանրամասն նկարագրութեան և աշակերտի ինքնաբուխ գործակցութեան չնորհիւ, պայծառ և որոշ կդասնան. այդ պայծառութիւնը զբաւական կլինի իմացութեան տեսողականութեան համար: Աշխարհագրական մասնակի տարրերը մի լանդշաֆտում ներքին առընչութեան մէջ մտնելով, համապատասխան պատկերացումներն ես սերտ կերպով կդուզորդուեն միմիանց հետ. այդպիսով առաջ կդան պատկերացումների ամուր կապուած շարքեր, որոնց անդամները իրար համար ելակէտ և յարաբերակէտ կդասնան:

Դասաւանդուրեան նպատակն ընդհանրապէս, աշխարհագրութեան՝ մասնաւորապէս, աշակերտի մաւոր հորիզոնը եւ մերողիկայի պահանջները—յատկապէս իրազնուրեան, ինքնազործուրեան եւ տեւականուրեան տեսակետները—հարկադրում են, որ աշխարհագրուրեան դասաւանդուրեան տեսներ կառուցուի լանդեաֆտի դիտողուրեան վրայ:

Աշխարհագրութեան լանդշաֆտային ըմբռնման դէմ զանազան առարկութիւններ են եղել. առարկում է, թէ երկիրը լանդշաֆտների բաժանելով՝ կարատում ենք լեռների, գետերի և պետութեանց սիստեմները: Դրա հակառակ պէտք է ասել, որ խիստ միակողմանի և անխորհուրդ է նախ թուել գետերի, ապա լեռների, բոյսերի և կենդանիների սիստեմները և վերջը պետութիւնները: Մանկավարժական տեսակէտից սիստեմը չէ կարող ոչ ուսման ծրագրի և ոչ էլ մեխոդի համար կոնսալտատիւ և նորմատիւ արթէք ունենալ. այլ գիրքի, ձեր, երկրների բազմօրինակ զարգացման, հողի կազմութեան և կերպաւորման, ոռոգման, կլիմայի բուսական և կենդանական թագաւորութեան և մարդկանց մէջ եղած կապն է պայմանաւորում որևէ լոնդշաֆտի բնոյթը. այդպիսի գասաւանդութիւնը միայն կարող է աշակերտի մէջ բազմակողմանի և կենդանի հետաքրքրութիւն զարթեցնել. առանձին առանձին լանդշաֆտները խնամքով ուսումնասիրելուց յետոյ միայն սիստեմի աստիճանում կարելի է նոյնանման աշխարհագրական առարկաները, որոնց բնագիտական, կլիմայաբանական և կուլտուրական նշանակութիւնը աշակերտը նախապէս ըմբռնել է, չարքերի վերածել:

Երկրորդ, առարկում է, լանդշաֆտային աշխարհագրութիւնը շատ ժամանակ է պահանջում և աշխարհագրական նիւթերը կրկնուում են. ծշմարիտ է, որ նման բնոյթ կրող լանդշաֆտների հետազոտութեան միջոցին համանուն աշխարհագրական երեսոյթները կը կրկնուեն. սակայն դա վեասակար բան չէ, այլ առաջակարգ միջոց ապակեցնեպցիայի ընթացքն արագացնելու, որով նոյն, նման կամ հակադիր պատկերացումները մի կողմից վատահելի ապակեցնեպցիական յօդեր կդառնան նոր նիւթի դիւրին իւրացման համար, միւս կողմից այս իմմաննեստ կրկնութիւններով իմացութեան պաշարը վըս-

տանելի իսկ աշխարհագրական հիմնական գաղափարները պայծառ և որոշ են զառնում:

Բոլոր առարկութիւնները, որ եղել են երկրի լանդշաֆտային յօդաբաշխան դէմ, անհիմն են, որովհետեւ այդ կարծեցեալ բերութիւնները, որ հանդես են զալիս լանդշաֆտի դիտողուրեան միջոցին, ուս աւելի մեծ չափով երեւան են զալիս պետագրուրեան միջոցին:

Ամփոփելով մեր ասածները՝ կըստանանք.

1) Աշխարհագրուրեան դասաւանդուրեան միջոցին մերողական միութիւններ սահմաններիս պետական սահմանները կամ կառավարչական բաժանումները չեն կարող նիմք համարուել, որովհետեւ պետութիւնները զուրկ են միութիւնից, պետական սահմանները կտրատում են ի բնե համապատկան առարկաները եւ այդպիսով դժուարացնում են պատկերի ամբողջական ըմբռնումը եւ կուլտուրական—աշխարհագրական դիտողութիւնը:

2) Գետերի աւագաններն եւս չեն կարող մերողական միութեան սահմաննան համար յարմար նիմք դատնալ, որովհետեւ երանք աշխարհագրական միութիւն չեն ներկայացնում, այլ բազմօրինակութիւն. այդպիսով միեւնոյն ժամանակ կը դժուարանայ բնական եւ կուլտուրական հանգամանենների ըմբռնումը:

3) Դասաւանդուրեան նպատակն ընդհանրապէս, աշխարհագրուրեան՝ մասնաւորապէս, աշակերտի մաւոր հորիզոնը եւ մերողիկայի պահանջները—յատկապէս իրազնուրեան, ինքնազործուրեան եւ տեւականուրեան տեսակետները—հարկադրում են, որ աշխարհագրուրեան դասաւանդուրեան տեսներ կառուցուի լանդեաֆտի դիտողուրեան վրայ:

4) Բոլոր առարկութիւնները, որ եղել են երկրի լանդշաֆտային յօդաբաշխան դէմ, անհիմն են, որովհետեւ այդ կարծեցեալ բերութիւնները, որ հանդես են զալիս լանդշաֆտի դիտողուրեան միջոցին, ուս աւելի մեծ չափով երեւան են զալիս պետագրուրեան միջոցին:

Լանդշաֆտի բազմակողմանի դիտողութիւնը կարող է զարթեցնել և վառ պահել հետաքրքրութեան բոլոր տեսակները. մի լանդշաֆտի աշխարհագրական առարկաները, բնագիտական և կլիմայական երեսոյթները՝ իրենց բնորոշ նշաննեւ-

բոլ, բոյսերը և կենդանիները՝ իրենց առանձնայատկութիւններով, բնակչութեան ինքնյատուկ կուտուրական վիճակը զարթեցնում են բաւարար չափով եմայիրական հետաքրքրութիւն։ Այդպիսով լանդշաֆտի դիտողութեան միջոցին ձեռք բերած անդամները պատճառական կապակցութեան մէջ զնելով՝ բնագիտական, կիմայական և կուլտուրական երեսյները բացատրելու համար, սնւում է մանկան մտահայեցարական հետաքրքրութիւնը։ Լանդշաֆտաները, իրենց տարածական տարբերի առանձնայատուկ համարութեամբ առիթ են տալիս մանկան ուշադրութիւնը հրաւիրելու գեղարուեսական յարաբերութիւնների վրայ։ Կուլտուրական—տնտեսական աշխարհագրութեան միջոցով մանուկը սովորում է, թէ ինչպէս մարդը, մի գառակարդ կամ մի ամբողջ ազգ կախուած են աշխարհագրական գործոններից։ Նա տեսնում է, թէ ինչպէս մի ժողովրդի հարսառութեան գործում, որ կայանում է արտերի, մարդագետների, արօտատեղերի, այգիների, պարտէղների, ափարակների, հանքագործութեան, արդիւնաբերութեան, արտադրութեան, վաճառականութեան և հաղորդակցութեան մէջ, գործակցում են ժողովրդի բոլոր անդամները՝ արտադրելու համար այն բարիքները, որ անհրաժեշտ են ժողովրդի սնուցման համար։ Վերջապէս մանուկը կը մըրանէ, որ նչ միայն իւրաքանչիւր լանդշաֆտ, այլ քաղաքակերթ աշխարհի բոլոր ազգութիւնները իրանց երկրի տուանայատուկ կազմութեան պատճառով տնտեսական ինդուստրիալ կախուած են։ օր. ինդուստրիական երկրները, ինչպէս Սնդիկան և Գերմանիան, կարիք ունեն Ռուսաստանից և Ռուսարիայից հացահատիկի ներմուծութեան, որովհետեւ այնքան հացահատիկ չեն արտադրում, որչափ պէտք ունեն։ և ընդհակառակը, այս վերջին երկրներում սպառում են ինդուստրիալ արտադրութիւնները։ մանուկը կը մըրանէ այդպիսով մարդկանց գործակցութիւնը՝ տնտեսական աշխատանքի զանազան ձիւղերում, այդպիսի դիտողութիւնները առաջ կը ենք և կիմամեն նրա մէջ համակրական եւ սօցիալական հետաքրքրութիւն։ Վերջապէս նա աշխարհագրութեան գաղաքանէ նիւթերի յաջորդութեան միջոցին։ Այդպիսով կը մըրանէ միայն կարգը պահպանելով, նպաստած կլինիկը նիւթի ամրապնդմանը, աշակերտի յիշողութեան և վերաբերութեան գործին։ Օրերլենդէրի այս տեսակէտը սեփականում և կրկնում են շատ շատերը, ինչպէս՝ Պիւտց, Զայգլից, Դանիէլ, Հումմէլ, Թիւլնդօրֆ, Պրիւլ, Հաքման և Հելմքէ։ Մա մի ապացոյց է, որ շարլճնը տակաւին կաշկանդում է աշխարհագրութեան գասաւանդութիւնը, որ իւր իդէալը աեսնում է սիստեմի մէջ։ «Միշտ միենոյն կարգը պահպանող աշխարհագրութիւնը սիստեմատիկայի հարազատ գաւակն է,

վէրաց։ և իրօք տեսնում ենք, որ աշխարհագրութիւնը մեզ մաւամբ բացատրութիւն է տալիս ժողովուրդների կրօնական հայեցաղութեան և սովորութիւնների մասին, որիէ լանդշաֆտի բնութեան առեղծուածական երեսյների աներենցիք պատճառութերը աղբիւր են դառնում ազգաբնակութեան կրօնական համուգութեան կրօնական համուգութեան կրօնական ինդիբների համար։

8) Սիհմա՞ քէ լանդշաֆտի պատկեր.

«Դասաւանդիր որոչ գիսպօղիցիայով», այս է նզել մինչև այժմ այն հիմնական տեսակէտը, որի համաձայն զասաւորուել են աշխարհագրական նիւթերը՝ մեթոդական միութեան մէջ։ «Երկրների զիազութեան միջոցին, ասում է Օբերլենդէրը, աշխարհագրական նիւթերը միշտ պէտք է զասաւորել միեւոյն տեսակէտից և միենոյն յաջորդական կարգը պահպանել։ Վերջերս մանկավարժական աշխարհում մեծ իրարանցում են առաջացրել բնութապատկերները (Charakterbild) և եռանդով գործադրումին աշխարհագրութեան գասաւանդութեան միջոցին։ Երաւի, բնութապատկերների մատակարարած նիւթը անհրաժեշտ է զործագրել զասաւանդութեան միջոցին։ սակայն ուսուցիչը չպէտք է նիւթը նոյն կարգով մատակարարէ աշակերտներին, ինչպէս այն գանում է բնութապատկերում ցուցագրուած, իւրաքանչիւր երկրի զիազութեան միջոցին նա պէտք է մի որոշ կարգ պահպանէ։ նիւթերի յաջորդութեան մէջ միշտ միենոյն կարգը պահպանելով, նպաստած կլինիկները նիւթի ամրապնդմանը, աշակերտի յիշողութեան և վերաբերութեան գործին։ Օրերլենդէրի այս տեսակէտը սեփականում և կրկնում են շատ շատերը, ինչպէս՝ Պիւտց, Զայգլից, Դանիէլ, Հումմէլ, Թիւլնդօրֆ, Պրիւլ, Հաքման և Հելմքէ։ Մա մի ապացոյց է, որ շարլճնը տակաւին կաշկանդում է աշխարհագրութեան գասաւանդութիւնը, որ իւր իդէալը աեսնում է սիստեմի մէջ։ «Միշտ միենոյն կարգը պահպանող աշխարհագրութիւնը սիստեմատիկայի հարազատ գաւակն է,

ուստի և իր մէջ պարունակում է այն բոլոր թերութիւնները, որ յատուկ են ծնողին: Ինչպէս սիստեմատիկայի, այնպէս էլ «շաբօնական» աշխարհագրութեան» նշանաբանն է բաժանումն և յօդաբաշխումն. բաժանումներով սկսում են, բաժանումն ևրով էլ վերջացնում: Ավերի ձեսկերպութիւնից սկսող և քաղաքական աշխարհագրութեամբ վերջացնող սքնմայի չնորդիւ բաժան բաժան են լինում աշխարհագրական ի բնէ համապատկան տարրերը և խառնում են՝ ի բնէ այլացեղները: Այդ տեսակէտից նախ անցնում են մի երկիր լեռնագրութիւնը ապա ջրագրութիւնը, կլիմայաբանութիւնը, բուսական և կենդանական կեանքը և վերջապէս ազգագրութիւնն ու քաղաքական կացութիւնը: Մինչզեռ Ռիտտէրը պահանջում է միայնել աշխարհագրական տարրեր իրողութիւնները մի ամբողջութեան մէջ, սիստեմագրէտն, ընդհակառակը, ուսման նիւթը դասաւորում է համաձայն ընդհանուր գաղափարների՝ անկապ առնթերութեամբ և միանդամայն մուանում է, որ բնութեան մէջ ամեն բան պատճառական կապակցութեան մէջ է գտնուում: Անուային սիստեմներ, առանց ջրի աւազանների, գետեր, առանց բարձունքների, որոնցից բխում են և առանց խորութիւնների, որոնց գիմում են, առանց դաշտերի որոնց ջրում են, առանց քաղաքների որոնց ծաղկեցնում են. այդ բոլորը, ինչպէս Մատցատը իրաւացի նկացնում է, այնպիսի բաներ են, որոնք realiter գոյութիւն չունեն, վերացումներ են՝ որոնք միայն այն ժամանակ բովանդակութիւն կունենան, երբ նախապէս յայտնի են թանձարցեալ իրողութիւնները»:

Որովհետեւ սիստեմագրող աշխարհագրութիւնը նիւթը կարգաւորում է ոչ թէ ըստ ընութեան, այլ բացառապէս ըստ արաբաքանական դաշտափառների, ակներին է, որ պատճառական մօմենտը միանդամայն կանհետանայ դասաւանդութիւնից, որովհետեւ պատճառական կապակցութիւնը հնարաւոր է ցուցադրել աշխարհագրական բաղմազան իրողութիւնների և կապակցութեամբ: Սիստեմատիկան, որ միայն բաժանում է և երբէք կապում, անզօր է բաւարարութիւն տալու աշխարհագրութեան դասաւանդութեան դերացոյն լինդին՝ երկիրը ներկայացնել որպէս մարդկային:

թեան հանդիսավայր և այդպիսով նպաստել մարդկային կուլուրայի հիմքերի խոր ըմբռնմանը:

Սակայն «միշտ միենոյն կարգը պահպանող» աշխարհագրութիւնը չէ համապատասխանում նաև մանկան հոգեկան պահանջներին: Մանկան հոգին չէ սիրում կաշկանդուել. Նրան յատուկ է աղատ շարժողութիւն կենդանի և բազմազան իրականութեան մէջ, մինչդեռ կազմ ու պատրաստի սիստեմը ոչ միայն արգելում է մաքի ազատ շարժումը այլ և միտքը միանդամայն կաշկանդում: Մանկան հոգին չի համբերում երկար ժամանակ՝ ստացական՝ կրաւորական վիճակում. նաև սիրում է գործունեայ վիճակ, մինչդեռ շարժնական աշխարհագրութիւնը խոչընդոտ է լինքնուրոյն մտածողութեանը. նաև ձգտում է միայն սրել լիշողութիւնը, մինչդեռ անկարող է հնարաւոր դարձնել խոր թափանցում նիւթի մէջ: Աշակերտը սիրում է բնութեան գունաւոր պատկերը, կենդանի մանրանկարը: Սիստեմագրող աշխարհագրութիւնը չէ կարող սիրացնին կերպով խորասուցուել մանրամասնութիւնների մէջ: Բայց այդ աշխարհագրական սքեման իր միաձնութեամբ չէ կարող աշակերտի հետաքրքրութիւնը երկար ժամանակ կենդանի պահել, որովհետև հայեցղական դասնալու ոյժ չունի. այդ թերութիւնները չէ կարելի ծածկել զանազան անեկդոտային սրախօսութիւններով, որոնցով յաճախ զարդարում են չոր կմարֆը՝ անկենդան սքեման, Սական մեր դիտաւորութիւնը չէ սիստեմը միանդամայն դուրս վանտել աշխարհագրութեան դասաւանդութիւնից. աշխարհագրական նիւթի բազմազանութիւնը անհրաժեշտ է դարձնում, որ այն գաղափարապէս մշակուի և կարգաւորուի, որովհետև միմիայն կարգաւորուած իմացութիւնն է հնարաւոր դարձնում աչքածել նիւթի ամբողջութեան վրայ. սակայն իմացութեան այս կարգաւորումը հնարաւոր է, երբ նիւթը նախապէս մանրամասնորէն մշակուած է. սքեման, սիստեմը ոչ թէ պէտք է կանխէ, այլ յաջորդէ նիւթի մատակարարմանը:

Որովհետեւ աշխարհագրական սինեման սկզբից եւ եք նիւթը դասաւորում է տամաբանական տեսակետից, սիստեմը գերադասում է բնական կապակցութեան խոր ըմբռնումից, մեռած խօսքը՝ կենդանի իրազնուրիւննից, հետեւաբար չէ կա-

ըսոյ աշխարհագրական անհատի դիտողութեան նիմի գառնալ։
Սակայն եթէ պքեման զասաւանդական միութեան հիմքը
չէ կազմելու, զրանից դեռ չէ հետևում, որ նիւթը պէտք է
քաօսային խառնիճազանձութեամբ մատակարարուի սանին.
այդպիսով մեղանչած կլինէլնը մեթոգիկայի տարրական
կամնոնի դէմ, որ պահանջում է նիւթը կարգաւորել որոշ տե-
սակէտից։ Առաջ արգէն յիշատակիլ ենք, որ այդ պէտք
է լինի ոչ թէ արամաբանական, այլ իրական տեսակէ-
տից (տես երես 9)։ Երկրների գիտողութեան միջոցին պէտք
է խնամքով որոնել և գտնել այնպիսի իրական տեսակէտներ,
որոնք վերցուած լինեն առարկայի էութիւնից և մինոյն ժա-
մանակ յարմարուեն աշակերախ մտածողութեանը. այդ իրա-
կան տեսակէտները մինոյն ժամանակ ելակէտ կդառնան
ամրող նիւթի կարգաւորման համար։ Այսպէս, օրինակ, Վերին
Հոկնոսեան ստորահարթը կարելի հարաւային գերմանական
մրգաստան անուանել, Շւաբական գարատափին հարաւային
գերմանիայի խայտաբղիք պարտեզ անունը տալ։ Սակայն ոչ
միայն մեծ աշխարհագրական անհատները՝ բնական լանդ-
շաֆտները կարելի է զիտել իրական տեսակէտից, այլ և մի
լանդշաֆտի մասերը, այսպէս, օրինակ, Ֆրանկենան գարատա-
փը կարելի է բաժանել հետեւալ փոքրիկ շրջանների. Մայնի
դաւառը (Մայն-դառ), Բամբերգի կաթոսան, Ռենդիցի ձորը,
Ֆիխտել լեռները, Սպիեսարտը, Ռէօնի լուսները և Ֆրանկենան
բարձունքը։ Սրանցից իւրաքանչյուրը կարելի է զիտել մի
իրական բնորոշ տեսակէտից. օր. Մայնի դաւառը որպէս
Բաւարիայի այգեստանը, Բամբերգի կաթոսան՝ Բաւարիայի
բանջարանոցը, Ռենդիցի ձորը՝ Բաւարիայի գայլուկի պար-
տէզը և այլն։

Հայրենագիտութեան մէջ արգէն պէտք է այս տեսակէ-
տը գործադրուած լինի, որ և ապագայում յենակէտ կդառ-
նայ աւելի մեծ աշխարհագրական միութեան ըմբռնման հա-
մար։ Վերցնենք, օրինակ, Վերին Հոկնոսեան ստորահարթը,
որի համար, ինչպէտ յիշեցինք, իրական տեսակէտ կա-
զակ է լինել «հարաւային գերմանական մրգաստան» անունը.
այդ տեսակէտն ընտրելուց յետոյ անհրաժեշտօրէն առաջ են
դալու հետեւալ հարցերը։ ա) ինչ պատճառով ենք այն հարա-

ւային գերմանական մլդաստանն անուանում. բ) ինչ աշխար-
հագրական հանգամանքներ են պայմանաւորում նրա պտղա-
րերութիւնը; Գ) ինչ նշանակութիւն ունի այդ երկրի պտղա-
րերութիւնը ազգաբնակութեան կենցաղի համար։ Այս հարցը
առիթ կտայ մի առ մի խօսելու հողի մշակման, արդիւնաբե-
րութեան, արդիւնագործութեան, բնակատեղի ընտրութեան,
վաճառականութեան, առևտրական հազորդակցութեան մասին
և այլն։ Բերենք մի ուրիշ օրինակ նոյնպէս Եւրոպայի աշխար-
հագրութիւնից։ Բալքանեան թերակղզին, օրինակ, կարելի
է դիտել, որպէս Եւրոպայի անհանգիստ անկիւնն համարել (գիրք և քաղաքական
կացութիւնը). լ) Ի՞նչուց է որ Բալքանեան թերակղզին ան-
ընդհատ յուղմունքների մէջ է գտնւում (Բալքանեան թերա-
կղզու ազգերը և պետութիւնները). գ) Ի՞նչ հանգամանքներ
են նպաստել այդ խառնակութիւններին (Բալքանեան թերա-
կղզու լանդշաֆտները). 1) Խլիւրական լեռնաշխարհը. 2) Յու-
նական—Ալբանական լեռնաշխարհը. 3) Մօրէա և Յունական
կղզիները. 4) Ռումինիան, Բալքանի հետ և 5) Դանուբի հար-
թագայրը։

9) Նկարներական թէ Կենսաբանական Մեթոդ.

Աշխարհագրութեան դասաւանդութեան արդիւնքի տե-
սակէտից մեծ նշանակութիւն ունի նիւթի մատակարարման
և զանակը, ընդհանրապէս հնարաւոր են երկու եղանակ, որ և
մեր ուշադրութեանն արժանանալ կարող են. այդ եղանակ-
ներն են Եկարագրական և համեմատական կամ կենսար-
եական մերողները։

Անունն արգէն բաւարար չափով բնորոշում է նկարա-
գրական մեթոդին, նրա էութիւնը ըստ Բհօսինէրի այն է, որ
նա «միթողապէս առաջնորդում է զիտակցօրէն զիտելու, աշ-
խարհագրական ձևերը ստոյգ գննելու և էականը ըմբռնելու»

և մտահելու»; Զէ կարելի ուրանալ, որ նկարագրան մեթողը աշակերտին կընտելացնէ յամբաքայլ և նուրբ զիտողութեան։ Սկզբնական բարդ և խառն պատկերը՝ վերլուծուելով իր բաղադրիչ տարրերին, հետզհետէ կպարզուի աշակերտի հոգու աչքերի առաջ այդպիսով նա կըմբռնէ աշխարհագրական իւրաքանչիւր տարր, պարզ հաշիւ կտայ իրեն երկրի դիրքի, սահմանի, տարածութեան մասին են, իսկ այս եղանակով ձեռք բերած մասնակի երեսյթներից կկազմէ մնծ կամ փոքր խմբակներ։ Սակայն պէտք է նկատել, որ մատակարարման այս եղանակը անկարող է առաջ բերել մտաւոր խոր աշխատանք, որովհետեւ նա առաւելապէս կանդ է առնում աշխարհագրական առանձին առարկաների նկարագրութեան վրայ, բաւականանում է միայն արտաքին ձեռվ և չէ թափանցում իրողութեանց ներսը։ Նա անզօր կլինի յայտնագործել աշխարհագրական երեսյթների ծածուկ պատճանները և այդպիսով նպաստել մարդկային կուլտուրայի խոր ըմբռնմանը։ աշխարհագրութեան իսկական կրթիչ մօմենտը այդպիսով միանգամայն աչքաթող անելով՝ երկրագիտութիւնը առաջուայ նման կընկնի դիդակտիկական մատերիալիզմի կապանքների մէջ։

Որովհետեւ նկարագրական մեթոդը արտակին ձեւերի իմացուրինը գերադասում է ներքին առընչութեան ըմբռնումից, չէ կարող բացառապէս միայն ինքը գործադրուել երկրագիտութեան դասաւանդուրեան միջոցին։

Մեր դիտաւորութիւնը չէ նկարագրութիւնը միանգամայն վանել աշխարհագրութեան դասից, այլ սահման զնել նրա գործադրութեանը։ Երկրագիտութեան դասը չէ կարող ձեռք վերցնել նկարագրութիւնից, սակայն նա չպէտք է բաւականանայ միմիայն սրանով, որովհետեւ երկրագիտութեան դասի նպատակը չէ աշխարհագրական լրիւ ծանօթութիւններ մատակարարել սանին, այլ խնամնել և զարգացնել աշխարհագրական մտածողութիւնը, ըմբռնել աշխարհագրական բազմազան երեսյթների պատճառական կապը մի բնական միութեան մէջ և այդպիսով նպաստել մարդկային կուլտուրայի հիմքերի ստոյդ հետազօտութեանը։ Երկրագիտութեան դասը պէտք է մի քայլ և առաջ գնայ և դիտէ աշխարհագրական առարկաների և երեսյթների մէջ եղած պատճառական կապը, որպէս

զի աշակերաը յանդի այն կարեռ իմացութեանը, թէ ամեն բան երկրիս վրայ կատարւում է որոշ օրէնքով։

Սյո նոյն ձգտումը իշխում է նաև միւս մասնագիտութիւնների դասաւանդութեան մէջ։ այսպէս, օր. պատմութեան դասը չէ բաւականանում պատմական եղելութիւնների նկարագրութեամբ, այլ աշխատում է արձանագրել պատմական անշեղ օրէնքները և այդպիսով զարթեցնել աշակերտի մէջ պատմական հասկացողութիւն։ բնագիտութիւնն ես չէ բաւականանում բնական մարմնների և երեսյթների դիտողութեամբ, այլ աշխատում է աշակերտի հայեացքն ուղղել բնութեան օրինակարգութեան վրայ։ Նման օրինակ էլ աշխարհագրութեան դասի մէջ առաջնակարգ նշանակութիւն պէտք է տալ նիւթի մտաւորապէս մշակմանը. մի բան, որ հնարաւոր է միայն պատճառական կապակցութեան նկատառմամբ. դրանից անհրաժեշտօրէն հետեւում է, որ աշխարհագրութեան դասը պէտք է զործ գնէ առաւելապէս կենսաբանական կամ ըստ Ռիստէրի՝ պատճառաբանող համեմատական մեթոդը։

Ի՞նչն է կազմում պատճառաբանող—համեմատական կամ կենսաբանական մեթոդի էութիւնը։ Կան մարդիկ, որոնք կարծում են, թէ համեմատական մեթոդի պահանջնին բաւարարութիւն տուած կլինեն՝ համագրելով և հակադրելով աշխարհագրական մօմենտները, մի առ մի թուելով տարբեր երկընների դրութեան, կերպարանքի, մնծութեան, յօդաւորման մէջ եղած նմանութիւններն ու տարբերութիւնները. կասկած չկայ, որ դա էլ համեմատական երկրագիտութիւն է, բայց համեմատական երկրագիտութեան ուղն ու ծուծը այլ տեղ պէտք է որոնել։ Այն ժամանակ միայն դասը կընթանայ իսկական համեմատական մեթոդով, երբ ի նկատի կառնէ հիմքի և հետեանքի փոխազդեցութիւնը, աշխարհագրական իրողութիւնները կդնէ պատճառական կապակցութեան մէջ և աշակերտին կընտելացնէ այն գաղափարին, թէ նման պատճառները առաջացնում են միշտ նման ներգործութիւն։ Առաջին տեսակ համեմատութիւնը կարելի է անուանել արտաքին (էքստենզիւ), երկրորդ տեսակը՝ ներքին (ինենզիւ)։ Համեմատենք, օր. էլբա և Օդէր գնաերը. արտաքին համեմատութիւնից պիտի ստանայինք հետեւալ պատկերը. էլբան և Օդէրը

հիւսիսային դերմանական ստորահարթի գլխաւոր զնտնըն ևն, երկուոն էլ սկիզբն են առնում Սուղեաներից, երկուոն էլ նախ հոսում են դէպի հիւսիս, ասդա զիմում են դէպի հիւսիս արևմուտք, այս գլխաւոր ընթացքից նրանք յաճախ շնդում են, ամենամեծ շնդումը կատարում է մինոյն լայնութեան վրայ, Երկուոն էլ վերին և միջին հոսանքում ձախ կողմից աւելի բազմաթիւ և մեծ վտակներ են ընդունում, քան աջ կողմից, ստորին հոսանքում ընդհակառակը երկուոն էլ մեծ չափով նպաստ ստանամ են աջ կողմից, Երկու գետերն էլ իրենց ըերանի մօտ ծովանում են:

Ներքին համեմատութիւնը չի բաւականանայ այսպիսի արտաքին համեմատութեամբ, այլ կաշխատի գանել այն պատճառները, որոնք յիշեալ երեսյթների հիւմբն են կազմում: Նա պէտք է փարձէ ստուգել, թէ ինչու Օդէրի ընթացքը աւելի շատ աստիճաններ ունի, քան ելրայինը, ինչու երկուոն էլ ամենամեծ շնդումը գլխաւոր ընթացքից մօտաւորապէս մինոյն լայնութեան վրայ են կատարում, ինչու Օդէրը հիւսիս արենելք, իսկ ելրան հիւսիս արեմուտք է թեքուում, ինչու Օդէրը աւելի շուտ է նաւարկելի գանում, քան ելրան, ինչու երկուոն էլ թէ շատ և թէ մեծ վտակները վերին և միջին հոսանքում ձախ կողմից են ընդունում, իսկ ստորին հոսանքում՝ աջ կողմից, ինչու ձախակողմեան վտակները՝ չնայած իրենց երկարութեանը, նաւարկելի չեն: Ինչու քաղաքները ստորին հոսանքում միայն ձախ ափին են չինուած, իսկ վերին և միջին հոսանքում՝ ընդհակառակը աջ ափին, ինչու ամենամեծ քաղաքները երկու գետերի վրայ էլ համարեա մինոյն լայնութեան վրայ են գանուում են: Զանազան կողմերից առարկութիւն է եղել, թէ դիտողութեան այս եղել դիտուրութեան մեծ զարգացման դիմումութիւնը է աշխարհագրական նախապատրաստական ծանօթութեանը մեծ պաշար, այս ստորկութիւնը անհիմն է, Օքերինդէրն այդ առթիւ ասում է «Ճշմարիտ չէ, թէ աշակերտները ախսարհագրական իրողութիւնները մտաւորապէս կապելու համար ծանօթութեան մեծ պաշար պէտք է ունենան: Այս բանը հնա-

բաւոր է առաջին և եթ վայրկեանից այնպէս, ինչպէս տունը շինելիս մարգակները ամենից լաւ են կապւում»: Ով որ փորձել է աշակերտին աշխարհագրական երեսյթների կապակցութիւնը պարզել, անկասկած կյարէ Օքերինդէրի կարծիքին.

Աշակերտից առանձնապէս մտաւոր մեծ լարում չի պահանջւում, հասկանալու համար, թէ ինչու գերմանական գետերի մեծ մասը ուղղուած է հիւսիս արևմուտք և միայն մէկը՝ արենելք, —որ վերին Հոենուսեան ստորահարթում և Բօդէն լճի ափին բումուտմ են խաղող, ընկոյզ, աղնիւ շագանակ և նուշ, մինչդեռ Ալպեան երկրի խճաքարոտ մակերեսոյթի վրայ երկրագործութիւնն իսկ խղճուկ արդիւնք է տալիս, —որ Գերմանիայի գաշտերը երկրագործութեան գլխաւոր վայրն են, մինչդեռ լեռները մեծ մասամբ ընդհակառակը ծաղկող հանքագործութեան և բարգաւաճ ինդուստրիայի, —որ վերին գերմանական բարձրաւանդակը և արենելեան ելրեան ստորահարթը նուազ բնակչութիւն ունեն, մինչդեռ Հոենուսեան հերձաքարոտ լեռները ստուար պղպանակութիւն ունեն, —որ միջին գերմանական լեռնաշխատնում գետերի ձախակողմնան ցանցն է զարգացած, իսկ գերմանական ստորահարթում՝ աջակողմնանը, —որ Սարասսրուրդ, Քեօն, Մրանկֆուրտ, Դրեսդէն, Բերլին, Շախտին են առաջնակարգ նշանակութիւն են ձեռք բերել, մինչդեռ յետին Պօմերանիայի եղբաքաղաքները յետ են մնացել —որ գերմանական ծովափը (Noerppel) արջապատուած է կղզիների մի պատկով և մի շերտ պտղաբեր ճախճախուաներով (Marschland), մինչդեռ արենելեան ծովեզրի (Ostseeküste) շուրջը ձգուած են աւազակոյտեր (Düne), որ Սաքսոնական Զուլցարիայի լեռները մեծ մասամբ սեղանաձեն են, մինչդեռ մէօնի լեռները՝ կոնաձեն: Ներքին համեմատական մեթոդի գործադրութիւնը մեծ գժուարութեան չի հանդիպի, եթէ հայրենագիտութեան միջոցին արգէն իրողութիւնները պատճառական կապակցութեան մէջ են զրուել, ներքին համեմատութեան միջոցով միայն կեանք կստանայ մեռած նիւթը, հանդէս կայ ստարկաների ընդհանուր կողմը, միութիւնը՝ բազմօրինակութեան մէջ և հանդիսա բենուր՝ երեսյթների հոսանքում: Ալյուփսով մինոյն ժամանակ կլրճատուի յիշողութեան բենը և մտաւոր աշխատանքը իրապէս կրթական

ոյժ կունենայ, վառ պահելով աշակերտի հետաքրքրութիւնը և դրդելով գէպի ինքնազործութիւն։ Թէ կուլտուրական աշխարհագրութիւնը, եւ թէ լանդշաֆտի դիտողութիւնը հնարաւոր են դառնում պատճառական մօմենտի շեշտամբ, ուրեմն եւ անհրաժեշտաբար պահանջում են ներքին համեմատութեան կամ կենսաբանական մերոդի գործադրութիւնը։

Սակայն դեռ բաւական չէ աշակերտի առաջ պարզել աշխարհազրական առարկաների և երևոյթների պատճառական կապը և փոխազգեցութիւնը. անհրաժեշտ է, որ այդ իմացութիւնը նրա անկորուստ սեփականութիւնը դառնայ. քանի դեռ մասնակի իրողութիւնները, ձեռք բերած համեմատական եղանակով, առանձնացած են մանկական հոգու մէջ, այնքան ժամանակ նա չէ իշխում իր մարք շրջանին. Դասաւորական դիմումութեան դիմաւուր պատշտօններից մէկը պիտի լինի հաւաքել և համեմատել աշխարհազրական նման երևոյթները, և հանել աշխարհազրական օրէնքներ. այդպիսի օրէնքներ կարող են լինել կամ զարգացման օրէնքներ, որոնք ի հարկէ հիպօթեափիկ բնոյթ ունեն և կամ առընչութեան պարզ օրէնքները, ինչպէս օր. նոյն պայմանները առաջ են բերում նոյն ներգործութիւնը։ Այդպիսի օրէնքներ են, օրինակ, գեար իր ընթացքում միշտ որոնում է ամենացած տեղերը. — որչափ ջրաբաշխը մօտ է զետին, այնքան վտակները փոքր են լինում. — կարծ և թէք մակերեսոյթի վրայ կարող են զարգանալ միայն կարծ և սրբնթաց զետեր. — Ճորերը և կիբճերը բնական ձանապարհներն են, որ գիւրացնում են հաղորդակցութիւնը լեռնագաւառներում. — որչափ նպաստաւոր են արդիւնաբերութեան պայմանները, այնքան իստ է աղջաբնակութիւնը. — որչափ մեղմ է լլիման, այնքան փարթամ բուսականութիւնը։

Աշխարհազրական օրէնքներ սահմանելիս միշտ պէտք է կապ պահպանել թանձրացեալ օրինակների հետ. այդ օրէնքները պէտք է համապատասխանեն զուգորդման նիւթին և աշակերտի մարքի վերացական կարողութեանը։ Զպէտք է տրուեն այնպիսի օրէնքներ, որոնք բարձր են աշակերտի մտաւոր հորիզոնից։ Օրէնքների միջոցով աշակերտը պէտք է ըմբանէ բնութեան օրինակարգութիւնը և մարդկային կուլտուրայի բնական հիմունքները։

Երկրագիտաութեան դասը, սակայն, չպէտք է բաւականանայ աշխարհազրական օրէնքների իմացութեամբ. պէտք է հետեւ գործազրութիւնը, որպէս զի օրէնքները ներքուստ սեփականուեն. իսկ այդ կարող է կատարուել վարժութեան միջոցով։ Այսպէս, օրինակ, կարելի է ինդիրներ առաջարկել առանձին լանդշաֆտների աղջաբնակութեան խտութեան մասին, արդիւնաբերութեան հանգամանքների կամ հոսուն գետերի նշանակութեան մասին բնութեան և մարդու անտեսութեան համար են։

Ներքին համեմատական մերոդի արդիւնքն է աշխարհագրական օրէնքների մշակումը, ուստի եւ աշխարհագրութեան դասի վերջին նպատակը պէտք է լինի գտնել եւ գործադրել այդ օրէնքները։

1) Որովհիետեւ նկարագրական մերօնի արտաքին ձեւերի իմացութիւնը գերադասում է ներքին առընչութեան ըմբոնումից, չէ կարող բացառապէս միայն ինքը գործադրուել երկրագիտութեան դասաւանդութեան միջոցին։

2) Թէ կուլտուրական աշխարհագրութիւնը, եւ թէ լանդշաֆտի դիտուրի հնարաւոր են անհրաժեշտաբար պահանջում են ներքին համեմատական միջաման։ Այսպիսի միջաման կամ կենսաբանական մերոդի գործադրութիւնը. — որչափ նպաստաւոր են արդիւնաբերութեան պայմանները, այնքան փարթամ բուսականութիւնը. — որչափ մեղմ է լլիման, այնքան փարթամ բուսականութիւնը։

3) Ներքին համեմատական մերոդի արդիւնքն է աշխարհագրական օրէնքների մշակումը, ուստի եւ աշխարհագրութեան դասի վերջին նպատակը պէտք է լինի գտնել եւ գործադրել այդ օրէնքները։

10) ՊԱՏՄԱԿԱՆ ԵԽ ԲՆԱԳԻՑԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՍՏԻ ՄԷջ.

Հերբարաց աշխարհազրութիւնը անուանում է զուգորդող գիտութիւն. «առանց աշխարհազրութեան, ասում է նա, պատմական անցքերը զրկում են տեղից և տարածութիւնից, բնութեան արդիւնքները՝ հողից ...» (տես երես 11), ուստի և աշխարհազրութեան պաշտօնն է համարում միացնել զի-

ակլիքները, որպէս զի վերջիններս չառանձնանան: Մեծ մանկավարժի այս խօսքերը յաճախ սխալ են ըմբոնուել, աշխարհագիտութիւն անուան տակ միացնում էին բոլոր դիսցիլինները, որոնք որեէ ազգակցութիւն ունէին իրար հետ և այսպէս աշխարհագրութիւնը զանում էր բնական պատմութիւնից, բնագիտութիւնից, արուեստաբանութիւնից և պատմութիւնից վերցրած անկապ ծանօթութիւնների խառնակոյտ:

Այդ բոլոր դիտութիւններից յատկապէս պատմական տարրն է, որ այսօր էլ առանձին սիրով կցւում է աշխարհագրութեան գասին, յաճախ նոյն իսկ աշխարհագրութեան գասը նկատում է որպէս պատմութեան օժանդակ դիսցիլին, ամենասովորական ձեր ստկայն այն է, որ աշխարհագրութեան գասին տրւում են նատուած ծանօթութիւններ պատմութիւնից. Վօրմս քաղաքը դիտելիս յիշատակում է Վօրմսի Ռայխստագը և Լութէրի յանդուզն բէմելը. Լայսցիցի ուսումնասիրութեան միջոցին յիշողութեան է արժանանում Լայցիցի ճակատամարտը. չնու մոռացւում նաև թուերը Բնականօրէն հարց է ծագում, թէ անհրաժեշտ է այդ բանը, և եթէ անհրաժեշտ է, ինչ պատճառով կամ նպատակով, պատասխանը սովորաբար երկդիմի չէ լինում. «որպէս զի գասը աւելի հետաքրքիր դառնայ»:

Մեծ մոլորութիւն է, եթէ կարծւում է, թէ աշխարհագրութեան գասը պատմական ծանօթութիւններ պէտք է փոխ առնէ ուրիշ դիտութեան սահմաններից՝ աշակերտներից բռնի կերպով հետաքրքրութիւն կորպելու համար. Նա կարող է իր սեփական միջոցներով—ինչպէս արդէն տեսել ենք—զարթեցնել և վառ պահել իմացական հետաքրքրութեան բոլոր տեսակները:

Սակայն մեր դիտաւորութիւնը չէ պատմական տարրը միանդամայն դուրս վանել աշխարհագրութեան դասից, այդ անելով՝ մի ծայրայիշութիւնից միւսն ընկած կլինէինք. բնական կեղրոնացման տեսակէտից ոչ միայն ցանկալի, այլ նոյն իսկ օդտակար է աշխարհագրական և պատմական իրողութիւնների զուդորդումը. բայց այդ հնարաւոր է, երբ աշակերտը նախապէս արդէն ծանօթ է պատմական եղելութեան հետ. Այն պատմական իրողութիւնները, որոնք տեղ չեն բռնում դալրոցի ծրագրում, չեն կարող նաև աշխարհագրու-

թեան դասի միջոցին ուշադրութեան արժանանալ. սակայն էականն այն է, որ պատմական ծանօթութիւնները նչ թէ հաս ու կաոր կերպով պէտք է կցուեն աշխարհագրութեան նիւթին—մի բան, որ խմացութեան համար բոլորովին անարժէք է, —այլ պէտք է ցոյց արուեն աշխարհագրական պարագաների և պատմական եղելութիւնների (զարգացումների) մէջ եղած Կասալնես-ը, պէտք է ցոյց արուի, որ որեէ լանդշաֆտի աշխարհագրական դիրքը միհապէս ազգել է նրա պազարնակութեան պատմական զարգացման վրայ, որ այսինչ քաղաքը առաջնակարգ նշանակութիւն է ստացել չորսիւ իր դիրքի են: Այսպէս օր, Լիւրէքի դիտողութեան միջոցին աչքառու կերպով կարելի է ցոյց տալ նրա աշխարհագրական պայմանների և պատմական զարգացման մէջ եղած կապը, երբ կուսումնասիրուի, թէ ինչու հպարտ Լիւրէքը, որ մի ժամանակ Հանգայի գլուխն էր, ապացայում Հանգայի միւս երկու քաղաքներից (Համբուրգ, Բրեմեն) զարգացմամբ յնտ ընկաւ. կամ երբ հարց կարուի, թէ ինչու Արեկելեան ծովի կղզութագաւորութիւնը՝ Դանիեմարքը, որ միջին դարերում հուժկու պետութիւն էր և իր զօրութեան թերեք տարածում էր Սկանդինավիայի և Անգլիայի վրայ, միւս կողմից անդադար սպանում էր Գերմանիային, այժմ համեմատաբար երկրորդական տեղ է գրաւում Եւրոպական պետութեանց շարքում:

Բայց աշխարհագրական և պատմական հանդամանքների առնչութիւնը ցուցագրելու համար հարկաւոր է նիւթին լաւ ծանօթ լինել և այդ առնչութիւնը այն ժամանուկ յատկապէս երեան հանել, երբ այն կնպաստէ աշխարհագրական առարկայի լուսաբանութեանը: Նիւթի այսպիսի մշակման միջոցին պատմական ֆօնը պէտք է հիմքը կազմէ, ինչպէս այդ ցոյց կայ, յաջորդ դասի փոքրիկ նմուշը, այդ պատմական ֆօնը կարող է դասնալ միհնոյն ժամանակ այս երկրի դիտողութեան համար իրական տեսակէտ (տես երես 36):

Դանեմարքի քաղաւորութիւնը.

Խպատակ. Արեկելեան ծովի (Օստպէտ) կղզութագաւորութիւնը, որ միջին դարում հիւսիսի թագուհին էր:

Նախապատրասուրիւն. Ինչու մասին պիտի խօսք լինի. ինչ-
պէս է կոչում այդ թագաւորութիւնը. ուրիշ ինչ
կզզու թագաւորութիւն ենք սովորել (Քրիտանիա).
այժմ պիտի ծանօթանանք մի նոր կզզու թագա-
ւորութեան հետ. ասացինք, որ Դանեմարքը միջին
դարում հիւսիսի թագուհին էր. այժմ էլ արդեօք
այդպէս է (ոչ). ինչ միջոցով Դանեմարքի թագա-
ւորութիւնը միջին դարում հասել էր հզօր իշխա-
նութեան. նա բնութիւնից օժտուած էր որոշ ա-
ռաւելութիւններով. որն է նրա գլխաւոր առաւե-
լութիւնը. նա բարեյացող դիրք ունի հին ու նոր
աշխարհների մէջ. բնութեան ուրիշ ինչ օժիտներ
դիտէք. ափերի բազմազանութիւն և խորշաւո-
րումն, համբային հարստութիւն, նաւարկելի գե-
տեր են, արդեօք Դանեմարքի թագաւորութիւնը
բնութիւնից այդ բոլորով օժտուած է:

Մատակարաւում. 1) Ո՞ր թագաւորութիւնն է կոչում կզզու
թագաւորութիւն (Դանեմարք, գիրքը, լանդշաֆտ-
ները).

2) Ի՞նչ պատճառով Դանեմարքը առաջ հիւսիսի
թագուհին էր (Դանեմարքի նշանակութիւնը միջին
դարում):

3) Արդեօք Դանեմարքը այսօր էլ ունի առաջուայ
ոյժը. (Դանեմարքի այժմեան վիճակը. փոքրիկ
պետութիւն, վաճառականական և պատերազմական
նաւեր, առեւրական հաղորդակցութիւն և գա-
ղութափարութիւն):

4) Արդեօք Դանեմարքը բնութիւնից նոյնպէս
օժտուած է, ինչպէս Մեծ Բրիտանիան (ծովային
խորշերը, հողի կազմութիւնը և հողի արդիւնա-
ռերութիւնը):

Ամփոփումն. Ի՞նչ պատճառով Դանեմարքը չէր կարող դար-
գանալ և մեծ պետութիւն դառնալ.

Սիսեմ. Դանեմարքը կզզու թագաւորութիւն և ոչ մեծ պե-
տութիւն.

ա) Կզզու թագաւորութիւն (գիրքը). բ) Ոչ մեծ
պետութիւն (առանձնացած զիրքի, վատ հաղոր-
դակցութեան, ափերի անբարեյաջող ձեւակերպու-
թեան և հանքերի աղքատութեան պատճառով):

11.) Հայեցողսւրիւնը աշխարհագրութեան դասի մէջ.

Հայեցողութիւնը՝ իրազնութիւնը ամեն իմացութեան
բացարձակ հիմքն է կազմում, ուստի և հայեցողութիւնը դասի
յաջողութեան հիմնական պայմանն է. բայց հայեցողութիւնը
ամենից շատ կարենոր է երկրագիտութեան դասի համար,
որովհեան այդ գէպում գործ ունենք տարածական ձերի
հետ, որոնք պէտք է աչքով տեսնուեն. իրական հասկացողու-
թեան համար «աչքը շատ աւելի լաւ ուստուցիչ է, քան ականջը»:

Աշխարհագրական իրողութիւնները հայեցողական կարող
են դառնալ կամ ամիջապէս՝ առարկայի իրազնութեամբ և
կամ միջնորդապէս՝ արուեստական հնարների չնորհիւ:

Զնայած աշխարհագրական արուեստական - իրազնական
միջոցների առաւտութեանը, աշխարհագրական առարկաների
անմիջական հայեցողութեամբ ձեռք բերած պատկերացումները
աւելի պարզ և տեսական են լինում: Աշխարհագրական տար-
րական գաղափարները աշակերտին մատչելի պէտք է գարձնել
հայրենի երերի դիտողութեան միջոցով. այս ճանապահնով
ձեռք բերած գաղափարները հիմք կդառնան ըմբռնելու օտար
և հետաւոր երկրների անտեսանելի իրողութիւնները: Աշխար-
հագրական երեւակայութիւնը իր բարգութեանց նիւթը վերցնե-
լու է առարկայական աշխարհից, եթէ ձգտում է համապա-
տասխանել իրականութեանը: Արանից հետեւում է, որ աշխար-
հագրութեան դասը միշտ պէտք է յինուի աշակերտի առար-
կայական պատկերացումների վրայ, որոնք ստացւում են հայ-
րենի երերի դիտողութիւնից: Խոկ աշխարհագրական այնպիսի
իրողութիւններ, ինչպէս՝ գելտա, գլետչեր, վուլկան, որոնք
բացակայում են հայրենի երերում, հայեցողական կարելի է
դարձնել այսպէս կոչուած տիպական պատկերների միջոցով:

Ոչ միայն բնագիտական և մաթեմատիկական աշխարհա-

գրութեան, այլ և կլիմայաբանութեան, կենդանական, բուռական և անտեսական աշխարհագրութեան համար հիմնական պատկերացումներ պէտք է ձևոր բերել անմիջական իրազնութեամբ: Ապրանքների փոխանակութիւնը և ժողովրդի անուցման հանգամանքները բացարկելու համար կարելի է այցելել շուկաները (յարմարք), ապրանքների փոխադրութիւնը կարելի է գիտել քաղաքի փողոցներում, փոխադրութեան միջոցները կարելի է ցոյց տալ համեմատ տեղի փոխադրական միջոցների (երկաթուղի, ելեկտրաքարչ, բեռնակիր սալիք, հանրակառք, փուրգօն, աւտոմօքիլ, ձի, էջ, ուղարկն): Ձաւրիկայի այցելութեամբ աշակերտը պարզ գաղափար կլազմէ, թէ ինչպէս քամու, չոգու, ելեկտրականութեան, մարդու և կենդանիների ուժի չնորհիւ հումք նիւթը փոխում է փարրիկատի. իսկ զիւզանտեսութեան, հանգագործութեան, ինդուստրիայի, տնայնագործութեան և ընդհանրապէս անանական որոշ միութիւնների բացարկութեան համար անհրաժեշտ են ցոյց տալ հումք և արուեստի արտադրութիւններ, որոնք աշխարհային առևտուրի մէջ պրակէս ներ և արտածութեան առարկաներ առաջնակարդ նշանակութիւն են ձևոր բերել. գոլոցն ուրեմն պէտք է անհենայ հումք նիւթերի և ֆարբիկաների ժագամածու: Երկրաբանական և հանգաբանական իրազութիւնների լուսաբանութեան համար անհրաժեշտ է հանգային ժողովածու, որ իր մէջ պարունակէ գրանիտ, պրոֆիլ, աւալ, կրաքար, հերձաքար և քարի այլ առևտունները, աղեր, երկաթ, պղինձ, ցինկ, արծաթ, ոսկի, անագ, կապար են: Իսկ անանական մեծ կարևորութիւն ունեցող լուսական և կենդանական արտադրութիւնների համար (հացահատիկներ, համեմներ, պատզներ—վիզոսկր, սիրամարգի փեսար, պերլմուտը են), կարեսը և ունինալ համապատասխան ժողովածուներ¹⁾: Առանց այսպիսի ժագամածուների անհարին է անանական աշխարհագրութեան դասը արդիւնաւոր գարճնել, ինչպէս որ չէ կարելի երեակայիլ բնական պատմութեան դասը՝ առանց բնութեան երեք թագաւորութեան ների իրադնութիւնը: Եթէ

1) Այդպիսի ժողովածուներ պատրաստում են Բերլինում „Linsen-nesse“ ֆիրման, Վայցիկում Schneider'sche Lehrmittelhandlung, Մայթենում (Meissen, Schaufuss'sche Naturalienhandlung).

Հնարաւոր է այցելել նաև կենդանաբանական և բուռաբանական այցիներ, կենդանանոցներ, մուղէներ, ակներև է որ հայցողութիւնը աւելի լրիւ կլինի:

Միջնորդական հայեցողութեան գործին ծառայում են մի կողմից աշխարհագումար (գլոբուս), մօդէները, ուելէֆիերը, քարտէզները, ատլասները, տելլուրները, լանդշավաների պատկերները, տիպական պատկերները, երկաթուղային գծերի և ծովային ճանապարհների պլակաները, սկիցցը, պրօֆիլները, լուսանկարները, միւս կողմից լանդշավաների, ժողովուրդների, քաղաքների նկարազիրը: Միջնորդական հայեցողութեան միջոցները պէտք է համապատասխանեն երեք պահանջների: 1) Նրանք պէտք է համապատասխանեն աշխարհագրական գիտութեան պահանջներին. 2) մանկավարժական տեսակէտներին և 3) պէտք է զուղընթաց զնան տեխնիկայի առաջադիմութեանը:

Միջնորդական հայեցողութեան համար սովորաբար առանձնապէս յենւում են քարտէզի գործածութեան վրայ: Յիրաւի, քարտէզը հայեցողութեան առաջնակարգ միջոցներից մէկն է, «որովհետեւ նրա միջոցով կարողանում ենք զաղափար կազմել այնպիսի առարկաների աշխարհագրական առընչութեանց մասին, որ մատշելի չէ մեր հայեցողութեանը. քարտէզի միջոցով կարողանում ենք մի ընդհանուր հայեցք ձգել երկրային մեծ տարածութիւնների, նոյն իսկ ամբողջ երկրագնատի վրայ: Քարտէզի դիտողութեան միջոցով վերջապէս ձեռք ենք բերում ընդհանուր առևտուններ, որ կդժուարանայինք առանձին երկրների հայեցողութեան միջոցին»:

Սակայն չպէտք է մոռանալ, որ միմիայն քարտէզը անկարող է տալ որևէ լանդշավատի կատարեալ պատկերը: Քարտէզը երկրի մակերեսոյթի առարկայական պատկերը չէ. նա գործ է ածում որոշ նշաններ, որ պէտք է այլարանօրէն հասկանալ: Որովհետեւ քարտէզը առարկան չէ ներկայացնում, այլ նշաններ է պարունակում առարկայի համար, ակներև է, որ նրա հասկացողութիւնը մեծ դժուարաւթիւնների կհանդիպի: Քարտէզը դիտողին ասում է, թէ այսուեղ մի լեռնաշղթայ կայ, այնտեղ՝ սաոցակոյտ, այստեղ մի գետ կայ, այնտեղ՝ անապատ, անտառ, բայց նա չի ասում, թէ այդ բոլորն ինչ կերպարանք

ունեն: Այս բոլոր գաղափարները չեն կարելի քարտէզից հաշնել, այլ պէտք է դնել քարտէզի մէջ: Ուստի և քարտէզը լաւ հասկանալու համար նախապէս պէտք է ծանօթ լինել համապատասխան իրողութիւնների հետ. առանց այդ ծանօթութեանը աշակերն անկարող կլինի քարտէզին աշխարհագրական տարածական իմաստ տալ:

Աշխարհագրութեան գասաւանդութեան մեթոդիկայի համար ընթերցողի ուշադրութիւնը հրավիրում էնք հետեւեալ գրքերի վրայ.

- 1) Geistberk, Zur Methodik des heutigen Geographieunterrichts.
- 2) „ Methodik des geographischen Unterrichts.
- 3) „ Eine Gasse für die Anschauung im Geographieunterricht.
- 4) „ Über Systematik und Induction im Geographieunterricht.
- 5) Lüddecke, Geschichte der Methodologie der Erdkunde.
- 6) Böttcher, Die Methode des gegr. Unterrichts.
- 7) Harms, Fünf Thesen zur Reform des geogr. Unterrichts.
- 8) Matzat Methodik des geogr. Unterrichts.
- 9) Coordes, Gedanken über den gegr. Unterricht.
- 10) Tromnau Die Geographie in der Volksschule.
- 11) Kehr, Praxis der Volksschule.
- 12) Richter, Der geogr. Unterricht in der Volksschule.
- 13) Oberländer, Der geogr. Unterricht nach den Grundsätzen der Ritterschen Schule.
- 14) Trunk, Die Anschaulichkeit des geogr. Unterrichts.
- 15) Delitsch, Beiträge zur Methodik des geogr. Unterrichts.
- 16) Dierke, (in Kehrs Geschichte der Methodik II B).
- 17) Fr. Heiland, Das geor. Zeichnen.
- 18) Rich. Lehmann, Beiträge zur Methodik der Erdkunde.
- 19) „ Vorlesungen über Hülfsmittel und Methode des geor. Unterrichts.

- 20) Ritter, Allgemeine Geographie.
 - 21) Ratzel, Anthropogeographie.
 - 22) „ Die Erede und das Leben.
 - 23) Günther u Kirchhoff, Didaktik u Methodik in der mathematischen Geogr. und in der Erdkunde.
 - 24) Rude, Methodik des gesammten Volksschulunterrichts,
 - 25) Gehrig, Methodik des Volks.—und Mittelschulunterrichts. (Erdkunde bearbeitet von A. Bargmann).
 - 26) Anton Becker, Methodik des Geographieunterrichts.
 - 27) Korsch, Methodik des geographischen Unterrichts.
 - 28) Heinrich Fischer, Methodik des Unterrichts in der Erdkunde.
-

II

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ՝

ՀԻՄՆՈՒԱԾ ԿԵԱՆՔԻ ԽՄԲԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ (ՀԱՄԱԿԵՑՈՒԹԵԱՆ) ՍԿԶԲՈՒՆՔԻ ՎՐԱՅ:

Բնագիտութեան հարատութեանը ոչ քէ իրողութեանց բազմօրինակութիւն մէջ պէտք է որոնել, այլ նրանց ըղբայման. (Հումբօլդտ):

1) Բնական պատմութեան դասաւանդութիւնը մինչեւ ալժմ.

Բնական պատմութեան դասաւանդութեան առարկան է բնութեան կեանքը՝ իր բոլոր կողմերով։ Բնական պատմութեան դասը մինչև այժմ համեմատաբար խիստ անպատուղ էր և չէր տալիս այն արդիւնքը, որ կարելի էր սպասել նրա նիւթից։ Բնութեան առարկաների՝ կենդանիների և բոյսերի նկարագրութիւնը, դասաւորութիւնը և համեմատութիւնը, որչափ էլ սիրով ու խնամքով կատարուէին, այնուամենայնիւ ապարդիւն պէտք է անցնէին, որովհետեւ դասաւանդութեան մէջ բացարձակապէս բացակայում էր մանկան հետաքրքրութիւնը և պատճառագիտական հարցասիրութիւնը ի հաշիւ առնող որևէ սկզբունք։ Բնական պատմութեան դասաւանդութիւնը զուրկ լինելով յատուկ նպատակից, չէր իսկ փորձում գտնել իրեն համապատասխան եղանակ. նա առաջնորդում էր սիստեմով, մինչդեռ կրթական դպրոցը կրթական նպատակ ունի և ոչ գիտական։

Սիստեմը մի գիտական ապարատ է, որից չէ կարող ձեռք վերցնել գիտութիւնը. նա կարեսը է, որպէս զի գիտնականները փոխադարձաբար իրար հասկանան, որպէս զի առանձին առարկաները մտածողութեան մէջ իրենց համապա-

տասիւան դարակներում դասաւորուեն և այդպիսով աչքածելք դառնան. կրթական դպրոցը գործ չունի զուտ դիտութեան հետ. նրա պաշտօնն է ժողովրդականացնել դիտութեան տուածարդիւնքը: Սիստեմը հետևանք է մարդկային տրամաբանութեան. նա ճանաչում է գաղափարներ, ինչպէս՝ ընտանիք, տեսակ ելն, մինչդեռ բնութիւնը ցուցադրում է անհատ—էակներ:

ա) Այդպիսի դասաւանդութիւնը անհնարին է դարձնում բնութեան բազմօրինակ երեսյթների միութեան ըմբռնումը, որովհետեւ, երբ սիստեմը լրիւ է արւում, դժուար է լինում աչքածել մեծածաւալ նիւթը. եթէ այն կիսատ է մնում, կրացակային բնութեան միութեան ըմբռնման համար անհրաժեշտ անդամները. բացի այդ, այդպիսով, յօդուա տրամաբանական միութեան իրարից կտրատում, բաժանում են ի բնէ համապատկան առարկաները. այդպիսի դիտողութեան միջոցին անջատումէ էակը այն միջավայրից, որից ազդումէ և փոխադարձաբար ազդում, օրդանը՝ իր դորձունէութիւնից, անդամը՝ ամբողջութիւնից:

բ) Կեանքի իմացութիւնը անհնարին է նիւթերի սիստեմական յօդաբախման միջոցով. ուր որ տրամաբանութեան դանակը անդամահատում է կեանքը, արուեստական յերիւրուածքով չէ կարելի կեանք առաջ բերել. մի էակի կեանքը ըմբռնելու համար պէտք է որոնել այդ կեանքի ներքին պատճառները և սրանցից բղխող արտայայտութիւնները. չպէտք է ուրեմն պատճառը անջատել ներդործութիւնից:

գ) Բնութեան կեանքի ուսումնասիրութեան ձգտումը չէ կարելի վառ պահել չոր ու ցամաք սիստեմի մատակարարմամբ, որովհետեւ հենց որ աշակերտը սիստեմը մոռացութեան մատնէ—մի բան որ միշտ պատահում է—չէ կարող այլ ենթակարգել տեսակը սիրին: Այս ամենը ակներն է դարձնում, որ սիստեմը, որքան էլ այն հարկաւոր ապագարատ է գիտութեան մշակման համար, տարրական դասաւանդութեան համար միանդամյն անպէտք է և նոյն իսկ վեստակար, որովհետեւ միմիայն յիշողութեան բերն է ծանրացնում, իսկ միաքը անանունդ թողնում:

2) Բնական պատմութեան դասաւանդութեան նպատակը

Բնական պատմութեան դասաւանդութեան նպատակը պէտք է լինի՝ բնութեան օրինակարգութեան իմացութիւնը եւ միական կեանքի պարզ բնութեան՝ իրազենութեան հիման վրայ: Պահանջուում է ուրեմն ըմբռնել կեանքը. թէ ինչ է կեանքը, զժուար է սահմանել, նամանաւանդ աշակերտների համար, նա բնորոշում է կամ միմիայն ներքին շարժողութեամբ և կամ միաժամանակ արտաքին, որոց հետ մշտապէս կապուած է փոփոխութիւնը: Այս շարժողութիւնները ձգտում են մի ընդհանուր նպատակի, այն է՝ ամբողջի պահպանութեանը և կատարելազորմանը. ուրեմն, որպէս զի աշակերտը ըմբռնէ կեանքը, պէտք է ուսումնասիրէ այն շարժողութիւններն ու փոփոխութիւնները, որոնց նպատակն է ամբողջի պահպանութիւնն ու կատարելազորմանը:

Կարձ ասած, բնական պատմութեան դասաւանդութեան հիմնական կէտ նպատակին պէտք է լինի, ստուգել երեսյթների գոյութեան և զարգացման պայմանները, ոչ մի երեսյթչէ կարող առանձին գոյութիւն ունենալ. այսպէս, օր. չէ կարելի օրդանի գիտողութիւնը բաժանել նրա զործունէութիւնից, այլ պէտք է որոշուի օրդանի տուած նպաստը ընդհանուրին. այդպիսով աշակերտը պարզ պատկերացում կատանայ կենդանի օրդանիզմի մասին:

Կեանքը մի միական երեսյթիւնը սովորաբար որոնումը է մարմինների արտաքին ձեւերի մէջ. և որովհետեւ այդ արտաքին կերպարանքները անսահման ըաղմօրինակութիւն են ներկայացնում, մեծ քանակութեամբ առարկաներ պէտք է գիտողութեան առնուեն, ցոյց տալու համար ձեւերի մէջ կեղած ազգակցութիւնը և անցումը. և որովհետեւ կերպարանութիւնը (մօրֆօլոգիա) և սալմաբանութիւնը (էմբրիոլոգիա) տարրական ժողովրդական դպրոցում ուսումնան առարկայ լինել չեն կարող, անհրաժեշտաբար այս ձեռնարկութիւնը անօգուտ պէտք է անցնի:

Միութիւն պէտք է որոնել կեանքի մէջ. իւրաքանչիւր օրդանիզմ առանձին առած մի միութիւնն է կազմում, քանի

որ բոլոր օրդանները միմեանց գործակցութեամբ ճգտում են միենոյն սկզբունքին՝ զոյութեան և զարգացման: Բնութեան մէջ միութիւն նկատելի է ամենից առաջ նրանից, որ տարբեր անհատների կեանքի արտայայտութեան ներքին պատճառների մէջ ներգաշնակութիւն է նկատում, կամ աւելի պարզ ասած, կեանքի արտայայտութիւնները բաղմազան լինելով հանդերձ, կատարւում են բնութեան մէջ իշխող որոշ նօրմերով. այդ նօրմերը օրդանական կեանքի օրէնքներ են. նոյն, կամ առնուազը նման օրէնքներն են կազմում նմանապէս շատ էակների համակեցութեան կեանքի խմբական միութեան հիմքը. կեանքի խմբական միութիւնն ես որպէս մի ամբողջութիւն, նման է մի օրդանիգմի, իսկ նրա անդամները նման են օրդաններին: Այդ օրէնքների հետազոտքիւնը՝ հակների եւ կեանքի խմբական միութիւնների (համակեցուքիւնների) դիտուրեան միջոցին, պէտք է կազմէ բնական պատմուրեան դասաւանդուրեան յենակետը. որովհետև եթէ ցոյց է արւում թէ ինչպէս անհատները և կեանքի խմբական միութիւնները կառավարւում են որոշ օրէնքներով, կարելի կլինի ինդուկտիւ եղանակով ամբողջ երկրը ըմբռնել, որպէս «ներքին ուժերով շարժուող մի կենդանի ամբողջութիւն» (Հումքօլդտ, Կոսմո): Սակայն հարց է ծագում, թէ ինչ միջոց կայ բնութեան բազմօրինակ երեսյների մէջ հանդէս եկող բնական օրէնքները մատչելի դարձնել մանկան հոգուն. միւս կողմից կարեոր է բնութեան մեծածաւալ նիւթից զատել որոշ մաս, որովհետև նիւթի խոր ըմբռնումը պահանջում է, որ նրա ծաւալը նեղանայ:

Անա այս տեսակէաններին բաւարարութիւն տալ կարող է, ինչպէս ասացինք, կեանքի խմբական միութեան արդիւնաւոր սկզբունքը. այդպիսով մանուկը կարող է իրազննական ճանապարհով իմանալ, թի ինչպէս բնական էակները ենթարկուած են նման օրէնքների, ինչպէս նրանք որոշ միջավայրում իրար փոխազարձաբար պայմանաւորում են. երկրի իրաքանչիւր անկիւնը այս տեսակէատից ներկայանում է մի ամբողջութիւններից կազմուած է ամբողջ երկրագունզը, որ աւելի բարձր տեսակի կեանքի միութիւն է ներկայացնում. որչափ բազմաթիւ և

բազմազան են այդպիսի մասնաւոր պատկերները, որոնք վերցւում են հայրենի երկրի կեանքից, այնքան լուսաւոր կլինի երկրի ամբողջ կեանքի ուսումնասիրութիւնը:

Կրթական դպրոցում բնական պատմութեան համար կարելի է ի նկատի առնել մօտաւորապէս հետեւեալ օրէնքները.

1) Գոյուրեան յարմարութեան օրենքը (das Gesetz der Erhaltungsmässigkeit). բնակավայրը, կենցաղը և կազմութիւնը համապատասխանում են իրար. այս նոյնը կարելի է ձևակերպել նաև ուրիշ տեսակ. կենդանին (բոյսը) գործ է ածում իր օրդանները, իր բնակավայրում ապրելու համար. այս օրէնքը պարզապէս պատճառի և հետեւանքի օրէնքն է. սրա գիտակցական կիրառութիւնը խիստ ընդարձակում է մտքի հորիզոնը. այս օրէնքը պէտք է իրաքանչիւր մասնաւոր դիտողութեան հիմքը կազմէ (տես գիւղի լճակը):

2) Օրգանական ներդաշնակուրեան օրենքը (հարմօնիա), իրաքանչիւր էակ ամբողջութեան մի անդամն է. սա միևնոյն գոյութեան յարմարութեան օրէնքն է՝ գործադրուած կեանքի խմբական միութեան վրայ. այս գէպքում առաջնակարգ կարենորութիւն է ստանում, ինչպէս կեանքի անհատական, այնպէս էլ խմբական միութիւնների մէջ անդամների փոխազարձ կախումը միմեանցից և իրար նկատմամբ կատարած ծառայութիւնը:

3) Յարմարման օրենքը (ակզօմօդացիա). կենցաղը և կազմութիւնը որոշ չափով յարմարում են նոր բնակավայրին, փոփոխուող հանգամանքներին և ընդհակառակը. այս օրէնքը առաջի օրէնքի մի մասնաւոր տեսակն է կազմում: Այս օրէնքը իմաստ կարեոր յենակէտ է դառնում ուսուցչի համար. երբ սա դիտում է, թէ ինչպէս մի էակ իր նմաններից տարբերուում է, այդ տարբերութեան պատճառը նա պէտք է որոնէ պարագաների փոփոխութեան մէջ. կամ երբ նա իրապէս տարբեր էակների մէջ արտաքուստ նմանութիւն է գտնում, (օր. մորեխի և ծառագնաց գորտի գոյնը), այդանիցից եղբակացնելու է, որ կեանքի պարագաները նոյն կամ նման են եղել. այս օրէնքը կարելի է վերածել հետեւեալ մասնաւորներին.

ա) Կենցաղը պայմանաւորումէ կազմութիւնը. շատակեր խողը բարակ կաշի է ունենում.

- բ) կենցաղը պայմանաւ ուրում է . բնակավայրը . ձմնուք նապաստակները որոնում են բանջարանոցները .
 գ) կազմութիւնը պայմանաւորում է կենցաղը . թռչնի ձաղը թռչումէ , որովհետև թեեր ունի .
 դ) կազմութիւնը պայմանաւորումէ բնակավայրը . բաղի ձաղը լողալու յարմար կազմուածք ունի , դրա համար էլ ջուր է որոնում .
 ե) բնակավայրը պայմանաւորում է կենցաղը . ծիծեռնակը յարմարուել է մարդկանց բնակարանին , դրա համար էլ այժմ ուրիշ կերպ պիտի ապրի , քան առաջ .
 զ) բնակավայրը պայմանաւորում է կազմութիւնը . ձըկները ծովի յատակում մի քան բուէում կարող են մութ գոյն ստանալ :

Ալպեան նապաստակը սպիտակ գոյն ունի .

Այս յարմարման օրէնքը յայտնագործում է ընդհանրապէս բուսական , կենդանական և մարդկային կեանքում՝ բազմաթիւ պարագաներում : Չոլէտք է սակայն մոռանալ այն հանդամանքը , որ օրդանիգմեները կառավարում են ներքին օրէնքներով , որոնք եղանակաւորում , բայց կատարելապէս չեն փոփոխում օրդանիգմի էութիւնը . դրանից հետեւմ է , որ յարմարումն ես իր սահմաններն ունի , որից այն կողմը օրդանիգմին մահ է սպասնում : Այս օրէնքը , վերոյիշեալ միւս օրէնքների հետ մէկ տեղ բնութիւնն և ազգերի կեանքի պատմութիւնն ըմբռնման համար իսկստ արդիւնաւոր տեսակէտներ կարող են դառնար . Այս օրէնքի հետազոտութիւնը միայն կարող ենք մօտաւոր իսկութեամբ ստուգել հին աշխարհների և ազգերի կործանման պատճառները , կարմիր ցեղի ջնջումը Ամերիկայում . զրանով միայն կարով ենք մեզ հաշիւ տալ , թէ ինչնու այս կամ այն կենդանին տարածուած է մինչեւ այսինչ գօտին և ոչ աւելի հեռու : Այս օրէնքից էր , որ Դարւինը կարողացաւ լիուլի օդառուել իր հիպօթէզի համար :

4) Աշխատանքի բաժանման օրէնքը – օրգանների տարբերութ (դիֆֆերենցիա). երկուան էլ մինոյն իրողութեան տարրեր անուններն են . տղրուկի ինքնապաշտպանութեան և մնունդ հայթայթելու օրգանը կաշին է . մինչդեռ բաղը իր թշնամիներից զգուշանում է տեսողութեան և լու-

դութեան միջոցով , իսկ իր որսն անում է կտուցով : Մինոյն գործողութիւնները , որ տղրուկի մէջ մի օրգանն էր կատարում , այստեղ բաժանուած է շատ օրգանների մէջ , ուստի և աւելի կատարեալ ձեռվ է կատարուում . նոյնը տեսնում ենք նաև մարդու մէջ . յատուկ զգայարանները զարգացել են ընդհանուր զգայարանից՝ կաշուց , աստիճանական տարբերութով . ստորին կենդանիների մէջ լողութեան և ստատիկական օրգանները մէկ են , ուստի և ֆունկցիան անկատար է . մարդու մէջ լողութեան ապագարատը արդէն բաժանուած է ստատիկականից , ուստի և աշխատանքը աւելի բարձր կատարելութեան է համած . (համեմատել արհետաւորին մի գործարանի հետ , որի իւրաքանչւր բանւորը միշտ միենոյն պաշտօնն է կատարում) : Աշխատանքը այն ժամանակ է կատարելազործում , երբ բաժանելում է առանձին օրգանների մեջ . այս է աշխատանքի բաժանման օրէնքը . այս նոյնը կարելի է նաև շրջել և այլ կերպ արտայատել . որչափ շատ յատուկ օրգաններ գոյութիւն ունենան , այնքան կատարեալ է դառնում իւրաքանչւրի ծառայութիւնը ընդհանրութեան համար . այս գէպքում օրգանի տարբերութից եղակացնում ենք ամբողջի կատարելութիւնը :

5) Զարգացման օրէնքը (էւօլիւցիա). իւրաքանչւրի օրգանիզմ զարգանում է պարզ ձեից դէպի համեմատաբար աւելի կատարեալ ձեր . զարգացումը կեանքի յատկանին է , ինչպէս օրգանիզմի , այնպէս էլ կեանքի խմբակեան միութեան մէջ .

6) Կերպաւորման կամ կերպակազմութեան օրէնքը (das-Gesetz der Gestaltenbildung). նախապէս դոյութիւն ունեցող մասերը աղջում են կազմուելիք մասերի վրայ և այդ այնպէս , որ առաջ է զայխ մի մարմին որոշ ձեռվ : թէպէտ կերպակազմութեան օրէնքը զժուար է այս ձեռվ հասկանալի դարձել աշակերտին , բայց ուսուցիչը միշտ պէտք է այն աչքի առաջ ունենայ , որովհետև այդ օրէնքը գործում է թէ օրգանական և թէ անօրգանական աշխարհում . ինչնու , օրերը լուծուած աղի մէջ մի կտոր կոչտ աղ ենք ձգում , բիւրեղը քառակուսի ձեւ է ստանում , իսկ երբ պաղեղի լուծուածքում մի կտոր պաղեղ ենք ձգում , բիւրեղը ութանկիւնի ձեւ է ըն-

դունում. կամ ի՞նչպէս է, որ գորտի ձուից գորտ է դուրս գալիս և ոչ մողէս: Այստեսակ բազմաթիւ մասնաւոր երևոյթների դիտողութիւնից կարելի հանել կերպակազմութեան ընդհանուր օրէնքը:

7) Կապակցութեան օրենքը (կօններսիա). առանձին օրգանները կախուած են իրարից և ամբողջութիւնից. գիշատիչ կենդանու չանկերը պայմանաւորումն ժանիքաւոր ատամներ. զարդացած ոսկրային սիստեմից եղբակացնում ենք նաև, որ մկաններն ես զարդացած պիտի լինեն. մի անդամ հիւանդանիս, հիւանդակից են դասնում նաև մնացած անդամները՝ նմանապէս կեանքի խմբական միութեան անդամներն ես փոխադարձաբար կախուած են իրարից:

8) Խնայողաւրեան օրենքը. խնայողութիւն տարածութեան և թուի. թերթիկները ծալւում են կոկոնի մէջ. թեները ծալւում են պատեանի մէջ. կենդանին որչափ հոգատարութեամբ է խնամում իր ձագերը, այնքան քիչ է ձուածում:

Օրգանական աշխարհում օրէնքները այնպիսի պարզ կերպարանքով չեն հանդէս գալիս, ինչպէս անօրգանական. օրգանիզմը նման է մի բարդ մեքենայի, որի իւրաքանչիւր անդամը սակայն աւելի կամ պակաս ինքնուրունութիւն ունի: Միաժամանակ գործում են մի քանի օրէնքներ, որոնք յաճախ շղթայւում կամ խաչւում են. այդ պատճառով էլ դժուար է ամէն դէպքում ստուգել իւրաքանչիւր օրէնքի գործադրութեան չափը ընդհանուր արդիւնքի մէջ: Այսպէս, օր. տեսակի պահպանութիւնը պահանջում է, որ մեծ քանակութեամբ սերմնը ածուեն. նամանաւանդ, որ վերջիններս սնունդ են դառնում նաև կենդանիներին. այս օրէնքին, սակայն, հակառած է խնայողութեան օրէնքը, որ պահանջում է թուի ինայողութիւն. արդ, հարց է ծագում, թէ որ սկզբունքը պէտք է գերիշաէ. դիտողութիւնը ցոյց է տալիս, որ երբեմն մի օրէնքն է աւելի զօրեղ գործում, երբեմն միւսը. բայց և իւրաքանչիւր օրէնքի գործադրութիւնը մի սահման ունի, որից այն կողմը անցնել անկարող է:

3) Բնական պատմութեան դասաւանդութեան ընթացքը.

Բնական պատմութեան դասաւանդութեան համար՝ աչքի առաջ ունենալով վերել սահմանած նպատակը, ընդհանուր գծերով կարելի է հետեւել ընթացքը սահմանել:

ա) Խնամքով գիտել բնութեան առանձին էակները. բացատրել մի կողմից նրա օրգանների և գործունէութեան մէջ եղած կապը, միւս կողմից ցոյց տալ շրջապատի և էակի կազմութեան ու կեանքի մէջ եղած կապը. միւնոյն ժամանակ յայտնագործել և պարզաբանել այն օրէնքները, որոնք գործում են վերոյիշեալ բոլոր պարագաներուն (Տես, գեղի լճակը, նպաստակը), որովհետև այդ օրէնքների գործող ոյժը օրգանիզմների նկատմամբ աւելի դիւրիւն է ցոյց տալ, քան կեանքի խմբական միութիւնների:

բ) Ստուգել գտած օրէնքները փոքրիկ, աշակերտի տեսողութեանը մատչելի կեանքի խմբական միութիւնների նըկատմամբ:

գ) Գտած օրէնքները գործադրել անծանօթ էակների և խմբական միութիւնների նկատմամբ:

դ) Գտած օրէնքներով բացատրել ամբողջ երկրագնատի վրայ արտայայտող կեանքի երեսյները: Այս ընդհանուր ուղեցոյցն ունենալուց յետոյ այժմ փորձենք աւելի մօտիկից ծանօթանալ այն միջոցների հետ, որոնք հնաւոր կդարձնեն վերոյիշեալ ընթացքը:

1) Նախապատրաստութիւն.

Ինչպէս ամեն դաս, այնպէս էլ նամանաւանդ բնական պատմութեան դասը պէտք է նախապատրաստուի. դրահամար.

Ա.) Նախ պէտք է ծրագիր կազմել կեանքի խմբական միութեան դիտողութեան համար. ուսուցիչը պէտք է ընտրէ աշակերտին մատչելի և աչքածելի կեանքի խմբական միութիւն. դրա համար նա դպրոցական տարուայ առաջին քառամեակում աշակերտներին պէտք է առաջնորդէ դէպի ըն-

տրած կեանքի միութիւնը, նրանց հետ ծաղիկներ քաղէ, կենդանիներ զիտէ, անուններն յիշատակէ, ուսուցիչն ուրեմն խնամք պէտք է տանէ, որ աշակերտները մի ամբողջական տալուրութիւն ստանան կեանքի խմբական միութիւնից և նրա անդամներից (տես. Ծակի կեանքի ամբողջ տարուայ պատկերը). այդ միջոցին նա պէտք է կանգ առնէ (ընտրութիւն անէ) այն էակների վրայ, որոնք դասաւանդութեան միջոցին առանձին դիտողութեան են արժանանալու: Ինչ վերաբերում է նիւթերի դասաւորութեանը, ընդհանրապէս աւելի յարմար է, որ ուսուցիչը կապ պահպանէ տարուայ եղանակների հետ. ամառը կարելի է ուսումնասիրել բուսական թագաւորութեան ներկայացուցիչները, ձմեռ՝ կենդանական կեանքը և անօրդանական մարմինները. սակայն այդ բանն անհրաժեշտ չէ, որովհետեւ կենդանական կեանքն ես իր դարդացման դադալնակէտին համառւմ է ամառը:

Բ) Մանրազնին և ստոյգ դիտողութիւնը պէտք է դասաւանդութեան հիմքը կազմէ: Առաջին դասը անվայման պէտք է աւանդել կենդանի բնութեան զրկում. այդ դէպքում միայն բոյսը կամ կենդանին հանդէս կդայ իր բնական միջավայրում, իսկական խմբակցութեան մէջ: Աշակերտ և ուսուցիչ միասին պէտք է դիտեն և փորձեր անեն. նրանք կարող են, օր. մի քանի բոյսեր անուշադիր թողնել, միւսների հետ փորձեր անել. որեէ բոյսի կեանքի պայմանները փոխելով՝ կարող ենք փոխել նրա կերպարանքը. այսպէս օր. ուսուցիչը մատիտեղի մատաղ տունկը կամ արմատները դնում է մի ծաղկամանի մէջ, որի յատակի ջրանցքը փակում է խցանով, իսկ ծաղկամանը լցնում է այնպիսի հողով, որի մէջ սովորաբար աճում է բոյսը. սկզբում ծաղկամանը թողնում է ջրում, մինչև որ բոյսը կսկսէ աճել, յետոյ հետզհետէ ջրից բարձրացնելով՝ կդնէ ցամաքի վրայ. վերջը, յատակից խցանով հանելով՝ ծաղկամանը կթաղէ պարտէզում. Աշակերտները պարզ կերպով կտեսնեն, որ մատիտեղը փոխուում է, համաձայն բնակատեղի (միջավայրի). Այսպէս կարելի է անթիւ և անհամար փորձեր կտարել. օր. ստուդել, թէ որչափ տարածութեան վրայ կարելի է մօտենալ գորտին, որչափ հեռաւորութեան վրայ ձուկը լսում է յանկարծակի աղմուկը (եթէ քար ենք

ձգում ջրի մէջ) կը: Փորձ և իրազննութիւն նեղ սահմանում հարկ եղած դէպքում կարելի է կատարել նաև դասարանում, բայց անհրաժեշտ է տարին մի քանի անգամ այցելել կեանքի խմբական միութեանը, որպէս զիտողութիւնները պէտք է համառօտ ձեռվ զրի առնել. օր. Յուլիսի, գետեզրի սիստակ շուշանը (Seerose) ծաղկում է, գեղինը նոր է սկսում ծաղկել. կը: Նոր դիտողութիւնները համեմատում են նախկին դասողութիւնների հետ և արձանագրուում են նոյնութիւնը և տարբերութիւնը: Սակայն միշտ պէտք է իրարից որոշակի զատել դիտուրիւնը և եղրակացուրիւնը. այս ձեռվ միայն կարելի է պահպանել դիտողութեան առարկայական բնոյթը. խիստ կարենը է, որ աշակերտը սովորի դիտածը և ենթագրութիւնը իրար չխառնել, որովհետեւ յաճախ թիւրիմացութիւնները առաջանում են այս հողի վրայ. Դիտողութեան ժամանակ կարենը հանգամանքը չպէտք է աչքից փախչնել. այդ այն է, որ օրգանը բնաւ չպէտք է զատել իր գործունէութիւնից՝ պաշտօնից:

2) Առանձին եակի ուսումնասիրութիւնը.

Ա) Իւրաքանչիւր էակ պէտք է ուսումնասիրել որպէս մի կատարեալ օրգանիզմ. որովհետեւ էակը գոյութիւն ունի, ակներն է, որ իր մէջ ունի գոյութեան համար անհրաժեշտ բոլոր պայմանները, մինչդեռ գոյութեան միջոցները դրսից է ստանում: Նա պէտք է ուրեմն իր գոյութեան համար օրգաններ ունենայ, ինչպէս և վերջիններս գործածել կարողանայ. այսպէս ուրեմն կարելի է սկսել կեանքից և գիմել զէպի օրգանները և կամ օրգանի գործունէութիւնից՝ զէպի կեանքը. Կրկու ընթացքն էլ հնարաւոր են: Կարելի է հարցնել, թէ գոյութեան (կեանքի) ինչ նպաստակին է ծառայում այս օրգանը, որովհետեւ նա չէ կարող օրգանիզմի համար անպէտք և անարժէք լինել. կարելի է նմանապէս հարցնել, թէ ինչ բանի միջոցով է կատարում էակը այս կամ այն բանը. այլապէս ասած, թէ որ օրգանն է ծառայում կեանքի այս արտայայտութեանը: Եթէ մի էակ ունի այն ամենը, ինչ որ հարկաւոր

է նրա գոյութեան համար և կարող է դործածել իր ունեցածը՝ նա յարաբերաբար կատարեալ է։ Մի է ակի առանձնայատուկ յօրինուածքի և կեանքի համապատասխան արտայայտութիւնների ներդաշնակութիւնը գրաւական է օրդանական կեանքի կատարելութեան։ Այն համոզումը, թէ իւրաքաքսնչիւր է ակ մի կատարեալ օրդանիզմ է—իր տեսակում նոյնպէս կատարեալ, ինչպէս մարդը—բարոյական ամենավաստանելի ներգործութիւն կունենայ սանի վրայ՝ խնայելու և ընդհանրապէս սիրելու բնութեան կեանքը. մի բան, որ մարդուս կեանքի համար առաջնակարգ բարիք կարող է համարուել։ Յարաբերական կատարելութեան իմացմամբ հնարաւոր է պատճառական կապակցութեան ըմբռնամամբ, որով միենոյն ժամանակ ընդառաջ ելած կլինենք մարդկային հոգու բնական ձգտմանը՝ հետաքրքրութեանը և հարցասիրութեանը։ Աշակերտի բերանից յաճախ լսուում են այս ձևի հարցեր—«ինչո՞ւ կենդանին այս բանի պէտք ունի».—«ինչ բանով է նա այս կատարում»։ Եթէ շատ անդամ գիտական—մանկավարժական տեսակէտից կրկնուում է, թէ 11—12 տարեկան հասակում մանկան մէջ էմպիրական հետաքրքրութիւնը բացարձակապէս գերիշխուում է մտահայեցողականից, պէտք է նկատենք, որ այդ միանգամայն հակառում է փորձառութեանը և դիտողութեանը։

Որ և է բոյսի ուսումնասիրութիւնը կարելի է սկսել նրա մասերից, օր. ծաղիկից, բայց յաճախ նաև պատուից կամ բնից։ Կենդանին իր բոլոր օրդաններով մատչելի է հայեցողութեանը, յարմար է սկսել բնակավայրից, կենցաղից, ինքնուրոյն յատկութիւններից, շարժումներից ելն, որովհետեւ այս հանգամանքները կլարեն աշակերտի հետաքրքրութիւնը կենդանու համար. բայց կենդանու հետաքրքրութեան միջոցին ելակէտ կարող է գառնալ նաև նրա գոյնը, որնէ օրդանը, մարմնի ձեւը, եթէ վերջիններս առանձնապէս աչքի են դարկում. օր. թիթեռնիկի, եղջերաճճիկ, փղի դիտողութեան միջոցին, Հետզհետէ ի հարկէ ուշադրութիւնը և հետաքրքրութիւնը պէտք է ուղղուի էակի ամրոջութեան վրայ։ Այս գէպքում ես բնական պատմութեան դասը կազատուի շարժնական միօրինակութիւնից։

Բ) Օրդանիզմների ուսումնասիրութեան միջոցին առանձ-

նապէս պէտք է շեշտուի այն հանգամանքը, որի վրայ արդէն մատնանիշ ենք արել իրազնութեան միջոցին. այդ այն է, որ օրգանը պէտք է առընչուրեան մեջ դրուի իր գարծունեութեան հետ, որպէս զի երեւայ երա նշանակութիւնը եւ արձեկը օրգանիզմի համար։ Օրդանների առանձնայատկութիւնները և շնուրմները պայմանաւորում են առանձնայատուկ գործունէութիւն, հետևաբար և սուանձին արժէք ունեն կեանքի համար. էակի կազմութիւնը և կեանքի համապատասխան արտայայտութիւնը կատարելապէս ներդաշնակ են միմեանց հետ, երբէք չպէտք է բաւականանալ միմիայն իրողութիւնները թուելով, թէ «այս այսպէս է», այլ «ինչ պատճառով է այսպէս», «ինչո՞ւ համար է այսպէս», «ինչ եղանակով և միջոցով», միշտ ի նկատի ունենալով թէ էակը և թէ չըջապատի ազգեցութիւնը։ Այս ընթացքը հարկաւ շատ աւելի դժուար է, քան իրողութիւնները յաջորդաբար թուելը և արտաքին անալոգիաներ կատարելը. բայց դրա փոխարէն սա շատ աւելի արդիւնաւոր է. յիրաւի այդ միջոցին ևս յաճախ թերութիւններ կպատահեն. ուսուցիչը կդժուարանայ որին իրողութիւն պատճառական կապի մէջ գնել. բայց լուրջ դիտաւորութիւնը և տոկուն աշխատանքը կհրահանգէ ինչպէս աշակերտի, այնպէս էլ ուսուցչի միաքը և կընտելացնէ այս տեսակ դիտողութեան։

Գ) Ինչպէս բուսական և կենդանական օրդանիզմների, նոյնպէս էլ կեանքի խմբական միութիւնների դիտողութեան միջոցին պէտք է ուշադրութեան արժանանան նաև անօրդանական մարմնները և բնագիտական երեսյթները. յատկապէս պէտք է շեշտուին օդի, ջրի, քամիների և հողի նշանակութիւնը օրդանական կեանքի համար. յիրաւի, բնագիտական երեսյթների ուսումնասիրութեամբ զբաղւում է բնագիտութիւնը, իսկ հանգերի ուսումնասիրութեամբ՝ երկրաբանութիւնը, սակայն նրանց նշանակութիւնը բնութեան կեանքի համար կարող է պարզաբանուել, երբ կբացատրուի նրանց կապը օրդանական կեանքի հետ։ Այս հանգամանքը մեզ հարկադրում է անօրդանական մարմինների և բնագիտական երեսյթների դիտողութիւնն ևս նրանց նշանակութեան համեմատ մացնել օրդանական կեանքի ուսումնասիրութեան շրջանակի. միթէ կարելի կլինի բացատրել սերմերի

տարածումը, առանց յիշատակելու քամու և ջրի ծառայութիւնը այդ միջոցին. կարելի է արգեօք բացատրել երկրի մակերեսոյթի կերպաւորումը, առանց ինկատի առնելու վերոյիշեալ հանգամանքների ներդործութիւնը. հնարաւոր է արդեօք բացատրել սերմի ծլելը, առանց յիշատակելու ջրի կատարած դերը. բաւական է միայն արձանագրել, թէ ինչպիսի մեծ ազդեցութիւն ունեն որոշ ուղղութեան մշտական քամիները օրգանական կեանքի և լիիմայի վրայ: Օդը, ջուրը, հողը մեծ մասնակցութիւն ունեն բնութեան տարեկան, յաճախ նաև օրական կեանքի մէջ: Օրգանական և ոչ օրգանական երեսոյթների պատճառական կապակցութիւնը պարզելով, մեծապէս նպաստած կլինենք բնութեան միութեան և օրինակարգութեան ըմբռնմանը:

Դ) Թէ որչափ երկար պէտք է կանգ առնել մի էակի դիտողութեան վրայ, կախուած է զանազան հանգամանքներից. մի էակ իր նշանակութեամբ, արտաքինով, կենցազով կարող է շատ աւելի խոր հետաքրքրութիւն շարժել, քան միւսը. կարող է պատահել, օր, աշակերտը մի իրողութիւն՝ հասունութեան պակասութեան պաճառով մի դէպքում դժուարանայ ըմբռնել, մի այլ դէպքում աւելի դիւրութեամբ հասկանայ: Եթէ ուսուցիչը դժուարանում է բացատրել բաղի լսողութիւնը, նա կարող է բացատրել գորտինը կամ խնդիրները, որովհետեւ վերջիններիս լսողութեան օրգանը շատ աւելի պարզ կազմութիւն ունի. և յետոյ միայն աշակերտի ուշազրութիւնը կարելի է հրաւիրել ուրիշ կենդանիների լսողութիւնը կարելի է հրաւիրել ուրիշ կենդանիների լսողութիւնը վրայ: Ածխաթթուի տարրալուծումը աւելի հեշտ է բացատրել ստորին կարգի բայսերի նկատմամբ, քան վերին. այն էլ ոչ սկզբում, որովհետեւ քիմիական երեսոյթների ըմբռնումը սովորաբար մեծ դժուարութիւնների է հանդիպում: Թէ որչափ խորը պէտք է թափանցել նիւթի մէջ, կախուած է սանի ըմբռնելու կարողութիւնից. կարենը չէ, որ առաջ բերուի այն ամենը, ինչ որ սանը ըմբռնել կարող է, բայց անհրաժեշտ է, որ ինչ որ առաջ է գալիս հասկանալի դառնայ:

Ե) Իւրաքանչիւր անհատի դիտողութեան վերջը (գոնէ սկզբներում) պէտք է ամփոփ եղակացութիւններ հանել, որի

վիոխարէն ապագայում, երբ շատ էակներ են դիտուած, համառօտ համեմատութիւններ կարելի է անել, կամ յետադարձ հայեացք ձգել շատ էակների վրայ, բայց միշտ օրդանը չբաժնելով իր գործունէութիւց (տես բաղը և ղեղնափորիկը, — նապաստակը և ճագարը): Այսպիսի ամփոփմանց միջոցին սպիրտի օրինակները, պրեպարատները, սկիցցանները և յաջող պատկերները մեծ ծառայութիւն կարող են մատուցանել՝ վերարտադրելու նախապէս ստացած պատկերացումները:

Զ) Յաջորդ էակների դիտողութեան միջոցին անհրաժեշտ է միուլի օգտուել անալոգիկայի եղակացութիւններից. այնտեղ այսպէս էր, ինչպէս պիտի լինի ուրեմն այստեղ. բայց թշնամուց ազատուելու համար զիմումէ ջուրը, գորտը. բայց կարող է թոչել, դորտը. գորտը կարող է ցատկել. նապաստակը թշնամուց ազատուելու համար կուչ է գալիս իր փոսիկում. ճագարը, ճագարը թագնուում է գետնի տակը: Այս եղակացութիւնները պէտք է դիտողութեան միջոցով ստուգել և լրացնել. սիսալ եղակացութիւնների պատճառը որոնել. կամ թէ կարելի է մի էակի օրգանից կամ գործունէութիւնից անցնել ուրիշ էակների—ինչպէս էր այն կենդանու համապատասխան օրգանը. ինչ նմանութիւն կամ տարբերութիւն կայ. ինչով պէտք է բացատրել նմանութիւնը կամ տարբերութիւնը. ինչպէս է, որ վայրենի կենդանիները պաշտպան գոյն ունեն, իսկ ընտանի կենդանիները՝ ոչ.—ինչո՞ւ նապաստակի ճագարը աւելի մեծ չափով են ենթակայ վտանգի, քան ճագարի ճագարը (կենցաղը): Համեմատութեանց համար կարող են ինկատի առնուել նաև այնպիսի կենդանիներ, որոնք դեռ դասի նիւթ չեն եղել, բայց որոնց աշակերտը բաւարար չափով ճանաչում է. բայց ի հարկէ պէտք է առաւելութիւն տալ այն էակներին, որոնք արգէն դիտողութեան արժանացել են: Այսպիսի իմմանենտ կրկնութիւններով և համեմատութիւններով նիւթը բազմակողմանի կերպով ամբազնդւում է յիշուգութեան մէջ, այլ և աշակերտը սովորում է մի էակ առընչութեան մէջ դնել ուրիշ էակների հետ և այն նչ միայն մարմնի արտաքին ձեր տեսակէտից, այլ կեանքի եղանակի, օրգանների գործածութեան են: Այս միջոցով նախապատրաստումէ ընական օրէնքների իմացութիւնը:

3) Խւրաքանչիւր անհատ պէտք է դիտուի որպէս անդամ մի աւելի բարձր ամբողջութեան, յիրաւի, օրգանիզմն ապրում է իր համար և առանձին օրգանները փոխադարձ գործակցութեամբ ձգուում են ամբողջի պահպանութեանը, սակայն նա ոչ կարող է անկախ գոյութիւն ունենալ, ոչ էլ շրջապատը կարող է միանգամայն աղատուել նրա ներգործութիւնից: Ամենից առաջ էակը կախուած է իր շրջապատից. նրա կեանքը կատարելապէտ ըմբունելու համար, անհրաժեշտ է ինկատի առնել նրա կախումը արտաքին հանդամանքներից: Սանին ըստինքեան հասկանալի է, որ մարդը կամենում է ապրել, բայց նա գժուարանում է ըմբունել, որ մարդը հաղար ու մի կապերով կապուած է մարդկային խմբակցութեան հետ: Եթէ այսպիսի դիտողութեանց միջոցին կրկնութիւնները անխուսափելի են, այսուամենայնիւ ամփոխումները կարող են միշտ մի նոր տեսակէտից կատարուել: Բոլոր անհատները (բուսական և կենդանական) ենթակայ են ֆիզիկական և օրգանական աղդեցութիւնների. գործնական տեսակէտից նպատակայարմար է իւրաքանչիւր դէպում բաժանել այդ ներգործութիւնները իրարից և հանդէս բերել այդ գործօններից այն, որի ներգործութիւնը ամենից ակներեն է. ուրեմն ուսուչիչը պէտք է հետամուտ լինից տալու, թէ լոյսը, տաքութիւնը, ծանրութիւնը, ելեքտրականութիւնը և ուրիշ բնական ոյժեր ինչ չափով են աղդում էակի վրայ, ինչպէսի օրգանական էութիւններից է աղդում վերջինս են:

Ինչպէս որ իւրաքանչիւր էակ կախուած է իր շրջապատից, այնպէս էլ որոշ ներգործութիւն է անում վերջինիս վրայ: Գայլաճուկը ոչնչացնուումէ ծածաններին, որոնք պակասեցնուում են նրա կերակուրը. ծագերն էլ նրան կերակուր են զանոնում: Ինչպէս իւրաքանչիւր օրգան օրգանիզմին որոշ ծառայութիւն է մատուցանում, այնպէս էլ իւրաւանչիւր էակ՝ ամբողջութեանը:

Փոխադարձ ներգործութեան մասին խօսելիս կարելի է ընդհանուր արժէք ունեցող դատաղութիւններ անել, որն այն արդիւնքը կունենայ, որ ընդհանուր ճշմարտութիւնները՝ մտնելով նեղ շրջանակ, աւելի ակներեն կդառնան:

Անհատների փոխադարձ կախումը և իրար նկատմամբ կատարած ծառայութիւնը աըճանապերելով, նրանց միմեանց հետ բնական կապակցութեան մէջ դրած կլինենք: Այդպիսով աշակերտը կազափար կկազմէ կեանքի խմբական միութեան մասին և կըմբռնէ որ իւրաքանչիւր եակ ամբողջութեան անհրաժեշտ անդամն է: Այս հասկացողութիւնը հեռու կպահէ սանին մարդկային չափ նեղ տեսակէտից բնութիւն հանդէպ և բաց կանէ նրա աչքի առաջ հայնցողութեան աւելի ընդարձակ շրջան:

4) Կրնաբանական օրենթերի զործագրութիւնը.—Օրէնք-ները պէտք է բնութեան դիտողութեան միջոցին միշտ ներկայ լինեն ուսուցչի դիտակցութեան մէջ, որպէս զի իւրաքանչիւր մասնաւոր, թանձրացեալ դէպում կարելի լինի մասնանիշ անել համապատասխան օրէնքի գործադրութեան վրայ. Երեսյթները չպէտք է ըստ ինքեան հասկանալի համարել, այլ միշտ պէտք է որոնել նրանց պատճառները, բայց այդ պատճառները պէտք է վիճակուլ բնութեան մէջ, այսինքն՝ օրգանիզմի կամ այն միջավայրի մէջ, որին նա պատկանում է: Օրգանի դիտողութեան միջոցին աչքի առաջ պէտք է ունենալ նրա գործունէութիւնն և նշանակութիւնը օրգանիզմի համար. բայց կարելի է նաև զիտել օրգանիզմի կեանքը և հարց տալ, թէ նա ինչպիսի օրգանիզացիայի արդիւնք է. նորմալ յօրինուածքից և սովորական գործունէութիւնից չեղումներ նկատելիս պատճառը կարելի է որոնել միջավայրի առանձնայատկութեանց մէջ: Զգէտք է բաւականանալ ընական իրողութեանց սոսկ նկարազբութեամբ, այլ պէտք է կայտառ մանկան նման, որ հարց ու փորձով ուղղում է իմացութեան ծարաւն յագեցնել, զանազան հարցեր տալ մայր բնութեանը և չհանգատանալ, մինչեւ չդանել բնութեան երեսյթների մէջ եղած օրինակարդութիւնը:

Դասաւանդութեան միջոցին օրէնքները ուսուցչի համար անսակէտները կդառնան, որոնցով նաև կառաջնորդուի պրեպարացիաների ժամանակ, խակ աշակերտներն այդ օրէնքները այնքան պէտք է իւրացնեն, որ ապագայում, բնութեան դիտողութեան համար զիրեկտիւններ ունենան: Դրանով չենք

ուզում ասել, որ աշակերտները կենսաբանական ամեն օրէնք պէտք է ձեսակերպեն և անզիր անեն. ընդհակառակը կարեոր է, որ այդ օրէնքները ներքուստ սեփականութին և ոչ թէ ստոյդ և լրիւ սահմանութին: Այդ արդիւնքին կհասնենք, եթէ դպրոցում կատարած բնութեան իւրաքանչիւր զիտողութեան միջոցին օրէնքը զեկավար ունենանք և աշխատենք ամենք դէպրում այդ օրէնքի ոյժը չօշափելի գարճնել: Հասկացողութեան պայծառութեան համար էլ ի հարկէ կարեոր է, որ օրէնքները որոշ լեզուական արտայայտութիւն գտնեն. բայց մեծ մոլորութիւն կլինի բաւականանալ միայն չոր ֆօրմուլայով. այդպիսով մի ֆօրմալիզմից կընկնենք միւսը. կարեոր է օրէնքների իւրացումը և ինքնուրոյն գործադրութիւնը:

Սակայն ինչ միջոցով կարելի է հասնել այդ նպատակին. այս տեսակէտից առաջնակարգ ծառայութիւն կարող են մատուցանել «զուգահեռական չարքերը». օրինակ, ծածանի գլուխը սուր է, թռչունի զուտին էլ սուր է (ինչու).—Ծածանը ծածկուած է մաշկով և թեփուկներով, թռչունը՝ փետուրներով. (ինչ կալատահէր, եթէ հակառակը լինէր):—Ծածանը ունի լուզակներ, թռչունը՝ թեսեր. նա հարում է ջրի դէմ, սա օդի. —Նա ունի լողապոչ, սա՝ փետքէպոչ. —Նա ունի խոփիներ, սա՝ թռեր. են: Այդպիսով առընչութեան մէջ կդրուի օրդանը միջավայրի հետ. և եթէ այդպիսի զուգագրութիւններ յաճախ կատարուեն, աշակերտը կսովորի ինքնաբերաբար այդպիսի առընչութիւններ որոնել և առանց օրէնքը ձեսակերպել կարողանալու, կըմբռնէ օրէնքի թագաւորումը բնութեան մէջ: Այդպիսով, յիրաւի, աշակերտը հնարաւորութիւն չի ունենայ ձեռք բերելու լրիւ ծանօթութիւններ, որ ցեցն ու ուտիճը ապականել կարող են, բայց նա սեփականած կլինի մի անկողոսպակելի դանձ, այն է՝ բնութիւնը դիտելու եղանակը:

Սրդ հարց կարող է ծագել, թէ արդեօք հնարաւոր է դպրոցում ձեսակերպել կենսաբանական օրէնքները. այդ կախուած է աշակերտների պատրաստութեան չափից. եթէ կարելի է այդ անել բնագիտական օրէնքների նկատմամբ, ինչու հնարաւոր չպէտք է լինի կենսաբանականների վերաբերմամբ: Եթէ աշակերտները մտաւորապէս հրահանգուած են, մի քանի օրէնքներից յետոյ առանց մեծ դժուարութեան կկարողանան

ըմբռնել գոյութեան յարմարութեան, աշխատանքի բաժանման, օրգանական ներդաշնակութեան, զարգացման, և կերպակաղմութեան օրէնքները. այդպիսով հնարաւորութիւն սաեւզած կլինենք նոր զիտողութեանց միջոցին դիտակցօրէն կիրաւանն այդ օրէնքները. պէտք է աակայն ըստ կարելւոյն խուսափել վերաբերմից: Յամենայն դէպս, որի դիտակցութեան մէջ թանձրացեալ իրողութեանց դիտողութեան միջոցին օրէնքը պէտք է լինի գիխաւոր դերակատարը, առիթ չպէտք է փալցնէ աշակերտներին ընտելացնելու պատճառական և հետեւողական մտածողութեան: Հոգու այդպիսի հրահանգումը անհնարին է նկարագրական դասաւանդութեան միջոցին: Զուգահեռական շարքեր կազմելիս պէտք է զգուշանալ այնպիսի կենդանիներ առընչութեան մէջ զնելուց, որոնց կեմանքի եղանակը և մարմնի ձեր իրարից խէստ զնաւանուում են:

5). Մարդու դիրէր բնութեան մէջ. պէտք է աշխատել շատ պարագաներում, կարելի եղածի չափ, պարզաբանել մարդու դիրքը բնութեան մէջ. այս նոյն տեսակէտի վրայ է կանգնած, ինչպէս յայտնի է, Հերբարտ—Ցիլերեան դպրոցը, «որ պահանջում է քննագիտական կրթական դասաւանդութեան համար մարդկային նպատակները ելակէտ ընդունել և մարդու բնութեան վրայ գործ դրած աշխատանքը դասաւանդութեան հիմք գարճները». այդ տեսակէտը հարկաւ շատ նեղ է, եթէ միայն «մարդկային նպատակները» ասելով հասկացւումէ բացառապէս բնական էակների (կենդանիների և բոյսերի) աեկնոլոգիական արժեքը մարդու համար: Մի կողմից պէտք է համեմատութեան մէջ զնել կենդանի էակների մարմնի շինուածքը, մարմնական և հոգեկան կեանքը մարդու համապատասխան կողմերի հետ: միւս կողմից որոշել այդ էակների արժեքը մարդու գոյութեան համար՝ ժողովրդական անտեսութեան շրջանում: Այդպիսով մարդաբանութիւնը (անթրոպոլոգիա) սերտ կապակցութեան մէջ կմտնի կենդանաբանութեան հետ, և աշակերտը ձեռք կըներէ այն հայեցողութիւնը, թէ մարդը երկրիս կենդանական շղթայի մի օդակն է կապմում և կյարգէ կենդանիների կեանքն այնպէս, ինչպէս իր և իւրայիններից:

Մարմինի շինուածքի տեսակէտից դժուար է բոյսերին առընչութեան մէջ զնել մարդու հետ, բայց այդ կարելի է անել կեանքի տեսակէտից, որովհետեւ միննոյն օրէնքներին, որոնցով կառավարւում է իւրաքանչիւր օրդանական էակի կեանքը, ևնթակայ է նաև մարդը. Նրա հոգեկան կեանքն էլ կարդաւորւում է նման սկզբունքներով, որովհետեւ հոգին և մարմինը միննոյն աղբիւրից են առնում իրենց սկիզբը: Այս տեսակէտից բնական պատմութեան իւրաքանչիւր դաս, որ գիտակցօրէն ցուցազրում է կենսաբանական օրէնքի թագաւորումը բնութեան մէջ, անսպառ աղբիւր է գառնուում մարդկային կեանքի ըմբռնման համար. բայց ոչ միայն գիտանկանը, այլ հենութեան ջերմ միրահարը կարող է անդիտակցօրէն առընչութիւն և նմանութիւն գտնել բնութեան էակների և մարդկային կեանքի մէջ, առանց այդ նմանութեան հիմքերը բացատրել կարողանալու. այդպիսով առաջ է գալիս բնութեան բանասէնդական կամ պատկերաւոր ըմբռնումը, որ աւելի գարդացած է նախնական ժողովուրդների մէջ, քան զիտնականների սիստեմով տոգորուած գլուխներում: Այդ ըմբռնումն ես իրաւացի է, որովհետեւ լսելիայն կերպով հիմք ունի օրէնքների ընդհանուր արժեքը. և յիրաւի, միթէ զիտնածական բան պէտք է համարել, որ մանիշակը համեստութեան նշանակ է համարւում, կազմին՝ ուժի և դիմազրութեան. եթէ այդ բանը բանաստեղծները հնարած լինէին, ինչպէս կարող էր այդպիսի մի հայեացը ժողովրդի մէջ խոր արմատներ ձգել: Պէտք է որ շատ աւելի խոր առընչութիւն գոյութիւն ունենայ բուսական և կենդանական կեանքի մէջ, և բանաստեղծները միայն համբ լեզուի թարգմաններն են, բնութեան մարդարէները. Բնական էակների այս բանաստեղծական կողմի վրայ մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել նամանաւանդ օրիորդաց գլուխներում, որպէսզի ժողովրդի բանաստեղծական ողին մատչելի դառնայ սանին փոքրիկ համեմատութիւնների կամ պատմուածքների միջոցով:

Ինչ վերաբերում է բնական էակների արուեստաբանական (տեխնոլոգիական) նշանակութեանը, չպէտք է բաւականանալ միայն մօտ իրողութիւններով, այլ պէտք է աւելի հեռուն դնալ. եթէ, օրինակ, խօսք է լինում ցորենի մասին, հե-

տաքրքրութիւնը սկզբում ի հարկէ անմիջապէս կեղրոնամում է այդ հայահատկի վրայ, բայց այնուհետեւ անցնումէ այն հողին, առանց որի յատուկ կազմութեանը երկրագործութիւնը ապարդիւն կլինէր, կամ հաղորդակցութեան ձանապարհներին, որոնց չնորհիւ հայահատիկը արժէք է ստանում են:

6) Սմբողջ ընթացքի (կուբսի) կամ հատուածի վերջը, հիմք ընդունելով բաժանման զանազան տեսակէտներ, պէտք է համահայեաց խմբակներ կազմել. օր. զգայաբանների զարդացման, շարժողութեան, օրգանների կերպարանքի տեսակէտից են. այդպիսով կեանքի նման երեսյթները կամփոփուն մի խմբակի մէջ և օրէնքը մատչելի կզանայ աշակերտի մտածողութեանը. (անս զուղահեռական շարքեր երես 70). այդպիսով մինչոյն ժամանակ հիմք կդրուի սիստեմի կառուցման համար. այդպիսի համահայեացքներ կամ համեմատութիւններ կարելի է ի հարկէ նաև աւելի վազ կատարել, սակայն զրա համար անհրաժեշտ է որ աշակերտը իմանայ, թէ որոնք են մի օրգանիզմի էական յատկութիւնները. որովհետեւ առանց այդպիսի իմացութեան կրացակայէ սիստեմի համար անհրաժեշտ նախապատրաստութիւնը. սակայն ամեններն կարենոր չէ որ աշակերտը ժամանակից առաջ կարողանայ զանազանել սիստեմի յատկանիցները. փոքրիկ մանուկից, որ իր բնական զիտողութիւնները կատարած գորոց է գալիս՝ իր սեփական զաղափարաներով թըռչունի, սովունի, միջատի, ձկի մասին, կարելի չկայ անորիջապէս պահանջել սիստեմատիկ ուղիղ բնորոշում. թող աշակերտը միջատ խօսքի տակ հասկանայ բոլոր փոքրիկ կենդանիներին, մինչև հետզհետէ առիթ կներկայանայ այդ զաղափարը լրացընելու և պարզելու: Այդ զաղափարի լրիւ պարունակը նամիայն այն ժամանակ հասանայ, երբ կըմբռնէ երկրի բոլոր կենդանիների կազմութիւնը և կեանքը.—Զէ կարելի ընդհանուր ձևով որոշել, թէ երբ կարելի է սկսել սիստեմատիկ բաժանումն. չափ կարող է դառնալ միայն անջատ պատկերացումների կարգաւորման կարելի և միւս կողմից սիստեմի յատկանիցների ըմբռնման ունակութիւնը:

7) Համակեցութիւն. (կեանքի խմբական միութիւն). Ուսուցչապետ Մեօրբուսն էր, որ առաջին անդամ կանգ տառա-

համակեցութեան (biocaeose, Յօշօւօնօնա) գաղափարի վրայ. նա իր «սստրէները և ստրէների տնտեսութիւնը» գրուածքում բերում է համակեցութեան մի քանի օրինակներ:—Մի ճռում դցեցին 30,000 մանր ծածաններ. որոշ ժամանակ անցնելուց յետոյ որսացին նոյն քանակութեամբ ծածան և ստացան ընդամենը 40,000 ֆունտ: Մի ուրիշ անդամ էլ միենոյն լիճը գցեցին աւելի մեծ քանակութեամբ ծածան. ի հարկէ այս անդամ որսացին աւելի մեծ քանակութեամբ, քան առաջ, բայց ընդհանուր կշիռը նոյնն էր մնացիլ, այսինքն 40,000 ֆ. ծածաններն այս անդամ համեմատաբար աւելի փոքր էին մնացել: Առաջին ձկնարկութեան ժամանակ արդէն լիճը լիովին հանդէս էր բներել ձկների գոյութեան և զարգացման համար իր ոյժն ու պայմանները. և որովհետեւ երկրորդ դէպրում այդ ոյժը չէ աճում, բնական է, որ որչափ էլ ձկների քանակութիւնը շատանալու լինէր. ընդհանուր կշիռը անփոփոխ պիտի մնաբ:—Տերենք համակեցութեան մի ուրիշ օրինակ ևս. կողմնակի անպէտք բոյսերով խնխտուած արար տալիս է որոշ քանակութեամբ հացահատիկ. երկուսն էլ, թէ բոյսը և թէ չացահատիկը ապրում են միենոյն օգով, ջերմութեան միենոյն ներգործութեամբ. եթէ արտը մաքրում է կոմնակի բոյսերից, փոխարէնը բռնում են հացահատիկները. այս գէպքում էլ արար միենոյն քանակութեամբ օրդանական նիւթ է արտազրում, ինչպէս առաջին անդամ, միայն թէ ուրիշ ձեռփ: Ի հարկէ հատիկների քանակութիւնը չէ կարելի անսահման շատացնել. արար քիմիական, փիզիկական պայմանները հասնում են որոշ մաքսիմումի, որից այն կողմն անցնել անկարող են:

Ուսուցչապետ Մեօրիուսը biocaeose սահմանում է, որպէս «իրար փոխադարձաբար պայմանաւորող և մի սահմանափակ տարածութեան մէջ աճեցողութեամբ իրենց գոյութիւնը պահպաննելու ընդունակ տեսակների և անհատների ընտրութիւն և քանակութիւն՝ համապատասխան կեանքի արտաքին պայմաններին»:

Որպէսզի աշակերտները հասկացողութիւն կազմեն երկրի յօդաբաշխուած. բայց միական կեանքի համար, պէտք է նրանց ժամանելի դարձնել համակեցութեան էութիւնը. դրա համար

ի հաշիւ պէտք է առնել երկրի օրդանական նիւթեր արտադրելու ընդունակութիւնը, գոյութեան կոիւը օրդանական արարածների մէջ՝ բնութեան ճոխ սեղանի համար, բայց ամենից առաջ առանձին անդամների փոխադարձ նկրգործութիւնը և կախումը. օր. բուսական կեանքի փարթամութիւնը չէ սահմանափակում կենդանական կեանքի աճեցողութիւնը, այլ ընդհակառակը նպաստում է նրան և ընդհակառակը: Համակեցութեան էութիւնը օրինակով պատկերացնելու համար կարելի է գիտել զանազան կարգի մարդկային խմբակցութիւններ և սրանց նկատմամբ բացատրել համակեցութեան զլիստոր մօմենտները. այսպէս, օր. ամուսինների համար կարելի է ասել, որ նրանք կազմում են մի խմբակցութիւն. այս խմբակցութեան մէջ գոյութեան կոիւը ոչ մի դեր չի խաղում, այլ ընդհակառակը անդամների փոխադարձ գործակցութիւնն է, որ ձգտում է պահպանել ընտանիքի ամբողջութիւնը: Մի քաղաք նոյնական կարելի է համարել մի համակեցութիւն. այստեղ արդէն երեան է դալիս գոյութեան կոիւը՝ մրցումը, եթէ երկու անհատներ բացարձակապէս կախուած են կեանքի նման պայմաններից. սակայն այստեղ էլ ընդհանուր առմամբ զերբշանում է շահների ներդաշնակութիւնը. իւրաքանչիւր անդամ հոգ է տանում նախ իր մասին և որչափ շատ է աշխատում իւրաքանչիւրն այդ ուղղութեամբ, անքան բարգաւաճում է նաև ամբողջ քաղաքը. միւս կողմից եթէ մէկը աշխատում է ամբողջութեան համար, միջնորդապէս և ինքն է օգտուում. խմբակցութեան մի երրորդ տեսակը կարելի է համարել պետութիւնը. այս խմբակցութեան անդամների թիւը շատ աւելի մեծ է և իւրաքանչիւր անդամին կապող թելերը շատ աւելի ճիւղաւորուած և աննկատելի են. չնայած այդ հանդամներներին, այստեղ էլ իշխում են նոյն սկզբունքները՝ տալ և ստանալ, ծառայութիւն և կախումնեթէ այս վերոյիշեալ մարդկային խմբակցութիւններից վերըրած մօմենտների վրայ աւելացնելու լինենք նաև յօժարակամութեան և օրինակարգութեան մօմենտները համարնակութեան միջոցին, ձեռք բերած յատկանիչները ըստ ամենայնի կարող ենք փոխադրել ընութեան իւրաքանչիւր համակեցութեան վրայ: Բայց այսմ, համակեցութիւնն է զոյու

քեան յարմարութեան ներքին օրէնքի համաձայն բազմարիւ հակների համաբնակուրիւնը, որովհիետեւ երանք պահպանում են իրենց զոյուրիւնը մի եւ նոյն էիմիտական—բնագիտական ներգործութեանց տակ, եւ բացի այդ կախուած են յաճախ իրարից, յամենայն դեպս ամբողջուրիւնից, եւ փոխադարձաբար ներգործում են միմեանց եւ ամբողջուրեան վրայ:

Մարդու ձեռքով տնկուած և խնամուած ծաղիկներով մի պարտէզն էլ մի համակեցութիւն է ներկայացնում, բայց այդ համակեցութիւնը բնական չէ, այլ արուեստական, ինչպէս մի բանտ՝ իր բանտարկեալներով։ Հաւերի, բաղերի, ծիտերի մի խումբ, որ կտի է վագում, նոյնչափ բնական համակեցութիւն չէ, ինչպէս տօնավաճառի շուկան՝ իր կրպակներով։ Ակներեն է, որ այդպիսի խմբակցութիւնների դասաւանդումը շատ աւելի դժուար է, որովհետեւ մարդու միջամտութիւնը բարդում է պարագաները, թէպէտ այդպիսի արուեստական համակեցութիւնները մարդու կեանքի համար ամենակարևորն են։

Վերոյիշեալ օրինակներից գործնականի համար հետեւեալ կարեոր ցուցումներն ենք ստանում Որչափ մի խմբակցութիւն սակաւանդամ է, այնչափ պարզ կլինի անդամների փոխադարձ կախումն ու ներգործութիւնը և այնչափ սակաւաթիւ ընդհանուր օրէնքի մասնակի ձեւերը, որովհետեւ իւրաքանչիւր անդամն իր վրայ կրում է միենոյն օրէնքի զրօշը. ընդհակառակը որչափ բարդ է մի խմբակցութիւն, այնչափ պակաս է երեան գալիս առանձին անդամի (անհատի) նշանակութիւնը, այնչափ աւելի են շղթայւում օրէնքի տարբեր ձեւերը։ Ուստի և առանձին անդամների փոխազդեցութիւնը և ամբողջութեան հետ ունեցած յարաբերութիւնը ամենից առաջ պէտք է լուսաբանուի ըստ կարելոյն պարզ համակեցութեան մէջ, որպէսզի ձեռք բերուեն հայեցողական պատկերացումներ համակեցութեան մասին. հետզետէ կարելի է զիմել համակեցութեան աւելի բարդ ձեւերին. պարզ համակեցութիւններ են, օրինակ, այս լճակը, գաչտը, անտառը իրենց բնակիչներով, բարեկամներով, այցելուներով են։

Համակեցութիւնների դասաւանդման համար պէտք է ի նկատի առնել հետեւեալ ընթացքը։

ա) Անհատներից նպատակայարմար ընտրութիւն անհ-

լուց յետոյ պէտք է զիտուի իւրաքանչիւր էակի փոխազդեցութիւնը նոյն խմբի ամբողջութեան և տարբեր անհատների հետ, նրա կախումը ջերմութեան, լոյսի, օդի, ջրի պայմաններից են։

բ) Ընթացքի վերջը պէտք է անհատներից նպատակայարմար համազրութիւններ կազմել. այդպիսով աշակերտը հայեցողական պատկերացում ձեռք կրել համակեցութեան միութեան մասին։

գ) Ամբողջ համակեցութիւնը պէտք է զիտել որպէս անդամ աւելի բարձր ամբողջութեան և առընչութեան մէջ գնել մասնաւորապէս մարդու հետ. լիձը մեղ ձուկ է մատակարարում, անտառը։

դ) Վերջին աստիճանում մի համակեցութեան անդամները և կեանքի պայմանները պէտք է համեմատառուեն ուրիշ համակեցութեան նման կողմերի հետ. այդպէս օր. կարելի է համեմատել լիձը անտառի հետ Համակեցութիւնը դասաւանդութեան հիմք ընդունելով հնարաւորութիւն ձեռք բերած կլինենք նիւթը վերածել սահմանափակ միութիւնների և աւելի խորացնել. բացի այդ, այդպիսով ամեն պարագայում, դասաւանդութեան ժամերի թիւը շատ լինեն թէ քիչ, աշակերտը կսատանայ մի ամբողջութիւն, մի կտոր ընութիւն. որովհետեւ իւրաքանչիւր համակեցութիւն «երկրագնդի իւրաքանչիւր անկիւնը՝ ամբողջութեան արտացոլումն է» (Հումբուդուար)։

է) Հայրենի երկրի էակներով և համակեցութիւններով պէտք է հայեցողական դասան օտար աշխարհների նման երևոյթները. կանաչ թփերի մէջ կանդնած ընտանի կատուն մեր աչքում դառնում է գարանամուտ վազր, հայրենի երկրի լճակը անեղբ ծով, թաւուտ ծմակը՝ նախնական վայրի անտառ։

ֆ) Բնական պատմութեան միւս մասնաձիւզերի տուածարգասիլիների ամփոփման շնորհիւ երկրի կեանքը կպատկերանայ որպէս մի միական ամբողջութիւն։



I

Գ Ա Շ Տ Ը.

I.

Ն Ա Պ Ա Ս Ա Կ Ը.

Ներածութիւն. Մենք առաջ դիտեցինք կղաքիսին և տեսանք, որ նա մի չար կենդանի է. ինչու տեսանք, որ նա զոյ և զիւասիշ կենդանի է. նա գողանում է գիւղացու բակից նրա հաւերը, ախոռից՝ սպերն ու բաղերը, հաւարնից՝ ձուերն ելն. նա խողխողում է բոլոր կենդանիներին, որոնց ոյժը պատում է. բացի թռչուններից նա սպանութում է նաև չորքոտանի կենդանիներ, ինչպէս նապաստակներ, ճագարներ, դաշտային մկներ, սովորական մկներ են. և այդ բոլորն ինչ նապատակով.—կերակուր հայթայթելու համար. Այդ պատճառով էլ կղաքիսը կոչումէ զիւասիշ կենդանի, այսինքն նա ապրում է սպանած կենդանիների մասով. բայց միթէ դաշտային բոլոր կենդանիներն էլ այդպիսի չար արարածներ են.—ոչ, որոնք, օր. չեն.—համատէրը, խլուրդը, մկները, նապաստակները, կաքաւը, ծիծեռնակը, սարեակը. բայց չէ որ այս բոլոր կենդանիներն էլ բոլորովին անմեղ չեն. մտարերէք օր. խլուրդը և ծիծեռնակը. միթէ սրանք չեն ոչնչացնում կենդանիներին. և յատկապէս որոնց բայց ուշադրութիւն դարձրէք և կտեսնէք, որ մեր թուած կենդանիների մէջ կայ մէկը, որը ոչ ոքի չի վկասում, որն այնքան վախկոտ է, որ նոյն իսկ երկչուա մարդկանց այդ կենդանու անունն ենք տալիս. ինչ անուն ենք տալիս վախկոտ մարդկանց.—նապաստակ:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ (ԿԱՄՔԻ ՆՊԱՏԱԿ).

Այժմ ծանօթանեանք այդ անմեղ եւ վախկոտ կենդանու հետ. Վերլուծութիւն դասի նպատակի. Կղաքիսը սպանում է, որպէս զի սնունդ ունենայ, մինչդեռ նապաստակը ոչ մի կեն-

դանու, ինչպէս տեսանք, չի վնասում. հապա նա ինչով է ապրում. մատաղ երկնուկով, ճակնտեղով, չաքարեղեղնով, ցորնով, գարով, հաճարով և ընդհանրապէս այն բոլոր բոյսերով, որ նա առատութեամբ ճարում է գարնանը, ամառը և աշնանը դաշտերում:

Նապաստակն ապրում է բոյսելով. ուրեմն նա մի խոտանարակ կենդանի է. սակայն ձմեռը, երբ գետինը ծածկուած է լինում ձիւնով, այն ժամանակ նրա բանը վատ է. քաղցը ստիպում է նրան մօտենալ մարդկանց բնակարաններին, որոնցից նա սովորաբար ան ու զողով խուսափում է, մտնում է զիւղացու պարտէզը, ուտում է բանջարների արմատները, կրծոտում է մրգատու ծառների կեղենները, բայց միթէ նա դաշտում ուտելու բան չի գտնում. — այս, մատաղ հաճար, ցորեն, կանձրակ (աշնանացան). ձեան հաստ վերմակի տակից նա մեծ չարչարանքով փորփում, հանում է հացահատիկները. արիւն քրտինք է մտնում, բայց և շատ բան չի շահում: Նապաստակը ձմեռը ներդուրիւն է հառում:

Ամփոփումն. նապաստակի կերակուրը.

Իմացուրեան նպատակի զարգացումը. նապաստակը, որ փոքրիկ երախ ունի, կարողանում է կրծուել նոյն իսկ հաստ ծառերի կեղենները. այդ բանը չեն կարող անել այնպիսի մեծ կենդանիներ, ինչպէս՝ ձին և կովը. ուրեմն և նրա ատամնաշարը պէտք է կրծելու յարմար կազմութիւն ունենայ.

Իմացուրեան I. բանձրացեալ նպատակ. աշխատենք մօտիկից ծանօթանալ նապաստակի ատամնաշարի հետ և փորձենք բացատրել, թէ նա ի՞նչպէս է կրծում. (ցոյց տալ նապաստակի գանգը և եթէ հնարաւոր է զանգի մեծացրած պատկերը, որի վրայ պարզ ներկայացուած լինեն առաջի ատամները.). Ուշադիր դիտողութիւնը ցոյց է տալիս, որ նապաստակի վերին և ներքի ծնոտներում երկ - երկու աչքի ընկնող երկար ատամներ կան, բացի այդ և մի շարք սեղանատամներ, առաջի ատամների (կրծող ատամներ) և սեղանատամների մէջ կայ մի մեծ դաշտարկ տարածութիւն:

Վերլուծուրիւն իմացուրեան I. բանձրացեալ նպատակի. նապաստակը կրծում է ծառի կեղեր կրծող ատամնե-

րով. այդ ինչ է նշանակում. նա կտրում է կրծող ատամներով փոքրիկ և բարակ կեղեի կտորտանքը. ինչ էք կարծում, մարդը չունի այնպիսի գործիքներ, որոնցով կարողանայ նման գործողութիւն կատարել. — ատաձագործի գործիքները՝ ունտա, փորիչ (գուր). (ցոյց տալ փորիչը, ուշադրութիւն հրաւիրել նրա սուր բերանի վրայ. նկարել նրա բնորոշ գծերը գրատախտակի վրայ. բացատրել, թէ ինչ ձևով կարելի է փորիչով տախտակից մի կտոր պրցցնել. փորիչը թեք կերպով դէմ ենք տալիս տախտակի երեսին, որպէս զի ծայրը ներս մտնի, բայց ոչ շատ խորը): Այժմ ուշադրութեամբ դիտենք նապաստակի կրծող ատամները և տեսնենք, արդեօք նմանութիւն կայ նրանց և փորիչի մէջ:

Համադրութիւն իմացուրեան I. հիմատակի համար. Նապաստակի վերի և ներքի ծնոտների առաջի չորս երկար ատամները ներսից փորիչի նման սուր են. ներքի շարժական ծնոտի ատամները կրծելու ժամանակ առաջ են անցնում վերի անշարժ ծնոտի ատամներից.

Ինչու կրծող ատամները աղեղի նման կոր են, մինչդեռ փորիչը (գուրը) ուղիղ է, այս բանը պէտք է բացատրել ատամների կատարած աշխատանքով. մի բոլէ ենթագրենք, որ այդ ատամները ուղիղ լինէին. այն ժամանակ պէտք է, ինչպէս որ փորիչը տախտակը փորելիս թեք դրութիւն է ընդգունում, նրանք էլ իրար նկատմամբ նոյն զրութիւնը ստանային. և ծնոտների շարժագութեան միջոցին ատամները ոչ թէ իրար առաջից պէտք է հանգիստ սահէին ու անցնէին, այլ իրար հանգիստին:

Սակայն նապաստակի շրթունքներն էլ յարմարուած են կրծելու գործին, ինչպէս. (ցոյց տալ պատմերը) տեսէք, վերին շրթունքը մէջտեղից ձգուած է. կարծեք թէ վերին շրթունքը մէջ տեղից մի կտոր կտրած է. ինչու համար է այդ. եթէ այդպէս լինէր, նապաստակի վերին շրթունքը կրծելու միջոցին միշտ պէտք է արնոտէր: ի՞նչ պաշտօն են կատարում կողքի ատամները, ինչպէս մարդու սեղանատամները. դրա համար էլ նրանց երեսը խորթ ու բորթ է:

Ամփոփումն. կրծող ատամների թիւը, դիբքը, կերպարանքը և գործածութիւնը. սեղանատամների և վերին շրթունքի կերպարանքն ու պաշտօնը:

Զուգորդութիւն.

Տեսանք, որ նապաստակի երախը կրծելու շատ յարմարութիւններ ունի. այժմ տեսնենք, արդեօֆ այն բոլոր կենդանիները, որոնք պինդ մարմիններ են կրծում, նման երախ ունեն. ուրիշ ինչ կրծող կենդանիներ գիտէք. ճագարը, մուկը, մնձ մուկը, սրանք ինչ են կրծում. սրանց կենցաղը. (պատկերով կամ յարմար իրազննական առարկաներով պէտք է ցոյց տալ, որ սրանք բոլորն էլ ունեն վերոյիշեալ կրծող ատամները. աշակերտների ուշադրութիւնը պէտք է հրաւիրել այն հանդամանքի վրայ, որ այդ բոլոր կենդանիներն էլ վերին ծնոտում կրծող ատամների կողքին երկու փոքրիկ բութ ատամները չունեն. այս ատամները յատուկ են միայն նապաստակի ցեղին օր. ճագարին և ոչ բոլոր կրծող կենդանիներին):

Մեկնութիւն. Բոլոր կենդանիները, որոնք պինդ մարմիններ են կրծում, կոչում են կրծողներ:

Օրենք. Բոլոր կրծողներն ունեն կրծող ատամներ. օր. նապաստակը, ճագարը, մուկը.

Մասնաւոր օրենք. Բոլոր նապաստակները վերին կրծող ատամների կողքին ունենում են երկու փոքրիկ բութ ատամներ:

Իմացութեան նպատակից դառնալ դէպի դասի (կամքի) նպատակը. նապաստակի երախի կազմութեամբ բացատրում է, որ նա ոչ ոքի վեսանլ չէ կարող. որչափ նրա երախը յարմար է կրծելու, այնքան անյարմար է բռնելու, պատառուելու. երկար կրծող ատամները կիսանդարէին այդ բանին:

II Վերլուծութիւն դասի (կամքի) նպատակի համար. Դրանով էլ բացատրում է նապաստակի երկրորդ յատկութիւնը, որի մասին այժմ խօսելու ենք. այդ որ յատկութիւնն էք. նապաստակը խիստ վախկոտ է և յատկապէս այն պատճառով, որովհետեւ զրկուած է պաշտպանութեան միջոցներից: Նապատակը շատ քենամիներ ունի. կարող էք թուել մի

քանիսը.—մարդը, չունը, աքիսը, գլշատիչ մեծ թոչունները, նոյն իսկ փոքրիկ կատուններն էլ խեխտում են նրանց:

Ամենից առաջ մարդն է աշխատում նրանց որսալ. մարդն ինչո՞ւ և սպանում նապատակներին.

ա) Նապաստակի տապակածը. բ) մորթու գործածութիւնը. աշնանային և ձմերնային մորթու տարրերութիւնը. ինչո՞ւ ձմրան մորթին աւելի թանկ է գնահատուում. գ) նապաստակի տուած վեանները (յիշել նապաստակի սնունդը):

Ի՞նչպիսի են որում նապատակին. որս, որսկան շան աջակցութեամբ:

ա) հօլա—հօլա բ) որոնումն. գ) զիրք մտնելը, առաւտեան և երեկոյեան մթչնչաղին. ինչո՞ւ յատկապէս այդ մթջոցին. յիշատակել նրա կենցաղը:

Ամփոփումն. նապաստակի թշնամիները. որս. ինչո՞ւ և ինչպէս նապաստակը չէ կարող ոչ մի թշնամուց պաշտպանուել:

Իմացութեան II նպատակ.

Բայց մի՞թէ նա ո՞չ մի միջոց չունի իր քենամիների ձեռքից ազատուելու համար:

Վերլուծութիւն իմացութեան II նպատակի համար.

Վախկոտ նապաստակը, որ անզօր է իր թշնամիներից պաշտպանուելու, աշխատում է թագ կենաւ. ցերեկը թագ է կենում անտառների և արտերի մէջ. և միայն երեկոյեան ու առաւտեան մթչնչաղին, կարիքից ստիպուած գուրս է գալիս իր թագստի տեղից՝ սնունդ հայթայթելու համար. իսկ երբ աշնանը և ձմերը արտերը հնձած են լինում, որտեղ է նապատառում. այն ժամանակ կուչ է գալիս խոզաններում կամ խոշոր հերկած գաշտերում՝ փոսիկների մէջ:

Բայց մի՞թէ քենամիներ նրան սպիտակ դաւում չէ նկատում: Նախ պէտք է պատասխանենք այս հարցին. բայց ի նկատմի առնենք մի ուրիշ հանդամանք ես. վախկոտ կենդանիները ուշադիր և շրջանակեաց են լինում. թշնամու գալը նրաք նկատում են լողութեամբ, տեսողութեամբ և հոտառութեամբ. ուրիմն մեր երկրորդ խնդիրը կլինի, արգեօք նա-

ողաստակը ունի յատուկ նուրբ լսողութիւն, տեսողութիւն կամ հոտառութիւն: Բայց սովորաբար թշնամիներից ազատուելու գլխաւոր միջոցը վախուսան է, նապաստակը շատ լաւ է վազում: Երբ շունը նրան հալածում է, նա յաճախծում է իր ընթացքը: Նապաստակի արագավազութիւնը կախուած է նրա ոտների կազմութիւնից (յօրինուածքից): Ռւստի մնր երբորդ խնդերը կլինի ծանօթանալ նրա ոտների կազմութեան հետ:

I մասնաւոր նպատակ: Տեսնենք, արդեօֆ նապաստակը առնանք, եթք արտերը քաղուած են, իր թենամուց ծածկուել կարո՞ղ է: այդ բանը մեզ անհնարին է թւում: Եթէ նա, օրինակ, ճագարի, կղաքիսի, աքիսի նման ապրէր գետնի տակը, մութ նկուղներում, այն ժամտնակ բնական է, որ հեշտութեամբ կարող էր չնշանակը և առկայն նապաստակը, որ, ինչպէս տեսանք, ապրում է զաշտերում, կարողանում է անտեսանելի դառնալ: Հկարծէք, որ նա կախարդ է: այդ բանը կարելի է շատ բնական ձեռվ բացատրել: ուշի ուշով գիտեցէք նրա մորթու գոյնը և համեմատեցէք հողի գոյնի հետ: Նապաստակի բաց—գորչ գոյնը նման է հողի գոյնին, նապաստակը հողի գոյն ունի: դրա համար էլ դժուար է նրան հողից դանողանել: Պատկերացրէք մի բոպէ նապաստակին աշնանը, կուչ եկած խոզաններում, փոքրիկ փոսի մէջ, գուրս ցցած գետնագոյն մէջը: Նա ինչու նման կլինի: — նա կնմանի մօտաւորապէս մի կտոր կոշտ հողի կամ չուրացած աղրի կտորի: Նապաստակի գոյնն, ուրեմն, պաշտպանում է նեան նկատուեց: դրա համար էլ աշնանը աննշարելի է դառնում: քանի նա առանց ձայն ու ծպուտ հանելու կուչ է եկած իր փոսիկում, ոչ գիշատիչ թռչուններն են նրան նկատում, ոչ չորքոտանի գաղանները և ոչ էլ նոյն իսկ սրատես որսորդը: Նապաստակն ինքն էլ այդ բանը լաւ գիտէ: դրա համար էլ, չնայած որ խիստ երկչուտ է, որոի ժամանակ այնքան կուչ եկած մնում է իր տեղը, մինչեւ որ կողքիցն անցնում են որսորդն ու շունը՝ առանց նրան նկատելու: և միայն որսորդի անցնելուց յետոյ թռչում է տեղիցն ու վազ տալիս հակառակ ուղղութեամբ:

Ամփոփումն, Նապաստակի գոյնը, ինքնապաշտպանութիւնը, դրա հետ կապուած նաև նապաստակի վարմունքը:

Մտաւոր լրացումն: Բայց միթէ ամեն տեղ գետինը բաց գորշագոյն է, ինչպէս մեր երկրում:

Հիւսիսային երկրներում, բեկոփ մօտ, բարձր լեռների վրայ գետինը ծածկուած է յաւիտենական ձիւնակոյտերով: և նապաստակի գոյնը չը որ աչքի կընկնէր ձիւնով ծածկուած գետնի վրայ: և ուրեմն նապաստակի գոյնը ինքնապաշտպանութեան համար անարժէք կլինէր. (աշակերտների ենթադրութիւնները: թերես նրանք ամեն, որ այնտեղ նապաստակ չի ճարուի, կամ գիշատիչ կենդանիները նրանց արդէն ոչնչացրել են: ցայց տալ Ալպեան նապաստակ): — ահա այս պատկերի վրայ կգանէք այդ հանեկուկի լուծումը: տեսէք, Ալպեան (լեռնային) նապաստակը ձիւնի նման սպիտակ է, միայն ականջի ծայրերն են սե: Ուրեմն հիւսիսային երկրներում և բարձր լեռներում բնակուող նապաստակներն էլ շրջապատի գոյնն ունեն: Նրանց էլ պաշտպանում է իրենց սպիտակ գոյնը: Բայց մի ուշագրաւ երեսյթ ես: շատ երկրներում, ուր ձմեռը գետինը ծածկուած է լինում ձիւնով, իսկ ձիւների հալչելուց յետոյ գետինը իր սովորական գոյնն է ստանում, Ալպեան նապաստակն էլ փոխում է իր գոյնը: ձմեռը սպիտակ է լինում, իսկ ամառը գորչ գոյն ստանում: այդպէս է, օր, նորվեգիական նապաստակը: Բայց միթէ այդ կարելի բան է: միտք բերէք վայրենի կենդանիների ամրան և ձմրան մորթին (գարնան և ձմրան մուշտակ), գարնանը թափւում են ձմրան երկար մազերը և տեղը զալիս են աւելի թուխ մազեր: աշնանն, ընդհակառակը, թափւում են ամրան թուխ մազերը և անզը զալիս են ձմրան սպիտակ, երկար և խիտ մազերը (ձմրան մուշտակ):

Մեկնուրիւն: Ալպեան նապաստակի նկատմամբ մեր նապաստակը կոչում է դաշտալին:

Ամփոփումն, Ալպեան նապաստակ, բնակավայրը, գոյնը և նրա պաշտպանողական նշանակութիւնը. Ալպեան նապաստակի երկու տեսակները (մէկը անընդհատ պահում է իր սպիտակ գոյնը, միւսը՝ փոխում):

Մեր երկրորդ խնդիրն էր, իմանալ, արդեօք նապատակը միջոց չունի թշնամու մօտնալը հեռուից նշմարելու:

II Մասնաւոր նպատակ. քննենք և տեսնենք, արդեօք նապատակը յատուկ նուրբ լսողութիւն, անսողութիւն և հոտառութիւն ունի:

Ամենից առաջ աչքի են ընկնում նրա երկար ականջները, որոնց որսորդները «գդալ» անունն են տալիս. ինչ պաշտօն ունի ականջի երկար խխունջը. դիտենք մի բոսէ մարդու ականջը. ինչ է անում մարդը, երբ իր խօսակցի ասածը լաւ չի լսում.

ա) Նա ափը (բուռը) զնումէ ականջի խխունջին և այդպիսով, արհեստական նղանակով, մնձացնում է այն. ինչպէս խխունջի պաշտօնն է ընդունել ձայնը. նրա միջոցով ձայնը անցնում է ականջի ներսը. որչափ մնձ է խխունջը, այնքան կատարեալ կերպով է ձայնը ներս հաղորդւում: Այս ծանօթութիւնը այժմ դորձադրենք նապատակի նկատմամբ.

Նապատակը լաւ է լսում, որովհետև մնձ ականջներ ունի. բ) բայց մենք աւելի բան ենք անում, երբ ուղում ենք մեր ընկերի ձայնը լաւ լսել. (փորձ, ուսուցիչը կամաց խօսում է. աշակերտները աջ ափերը զնումնեն աջ ականջներին. յետոյ աշակերտները շուռ են տալիս զլուխներն այնպէս, որ աջ ականջները դարձնում են ուսուցչին. արդինքը). ուրեմն, եթէ ուղում ենք լաւ լսել, ականջներս դարձնում ենք այն կողմը, որտեղից գալիս է ձայնը. նապատակը կարող է այդ մնձ դիւրութեամբ կատարել. նա պէտք չունի անդամ մարդու նման զլուխը շուռ տալու. նա կարող է ականջները շարժել ամեն ուղղութեամբ: Երբ նա մի կասկածելի ձայն է լսում, իսկոյն կանդնում է յետին թաթերի վրայ և «որում է ականջները», այսինքն, ականջի բացուածքը ուղղում է դէպի ձայնի կողմը. (կողմնակի կերպով նկատել, որ նա փախչելու ժամանակ ականջները ցած է թողնում, այսինքն հորիզոնական դիրքով դարձնում է դէպի պոչը):

Մինչեւ նապատակի ականջները շարժական են, մարդուն, ընդհակառակը, անշարժ են:

Ամփոփումն. Նապատակի ականջների երկարութեան

մեծութեան և շարժունակութեան նպատակը. համեմատութիւնն մարդու ականջի հետո:

Այժմ քննենք նրա տեսողութիւնն ու հոտառութիւնը: Ոչ նրա աչքերն են սրատես և ոչ էլ քիթը՝ զգայուն. նրա տեսողութիւնը և հոտառութիւնը միջակ են. ուրեմն նա առանձնապէս օգտուում է լսողութիւնից: Յատկապէս աչքի են ընկնում նրա կարճ կոպերը. այդ է պատճառը, «թ նապատակը երբէք աչքերը չէ փակում. նա քննում է նոյն իսկ «բաց աչքերով». բայց ի հարկէ նա այդ միջոցին բան չի տեսնում. դրա հսմար էլ անուշադիր աշակերտի մասին ասում են, որ նա «նապատակի պէս բաց աչքերով է քննում»:

Ամփոփումն. Նապատակի լսողութիւնը, տեսողութիւնը և հոտառութիւնը նապատակի թշնամուց աղատուելու վերջին միջոցը փախուստն է. նապատակը կարողանում է լաւ վաղել:

III Մասնաւոր նպատակ. Դիտենք նրա ոտների կազմութիւնը: Նապատակի յետին ոտները համեմատարար աւելի երկար և զօրեղ են, մինչեւ առաջին ոտները կարծ են և թոյլ կազմուած. նապատակի յետեկ մասը աւելի բարձր է, քան առաջի (յիշել ճագարը). այդ պատճառով էլ նրա դանդաղ շարժողութիւնը խիստ անարուեստ է. նա ինչպէս արագ, այնպէս էլ դանդաղ շարժողութեան միջոցին ցատկում է, այսինքն քասարշաւ ձիւու նման առաջին երկու ոտները միաժամանակ է առաջ զցում, յետինները՝ միաժամանակ: Ուրեմն կարելի՞ է ասել, որ նապատակը քալուում է. — ոչ: Յետին ոտների վերի և ներքի մասերը անկիւն են կազմում. այս հանգամանքը հնարաւորութիւն է տալիս, որ նա կարողանայ յետին ոտները փորի տակ քաշել. բացի այս, յետին ոտների զարգացած, ամուր մկանները մարմինն շարժողութեան ժամանակ մեծ թափ են տալիս. այս երկու հանգամանքները միասին այն նշանակութիւնն ունեն, որ նապատակը մեծ բոլին է անում: Նապատակն ուրեմն կարողանում է լաւ վազել. յետին ուժեղ ոտները նրան հնարաւորութիւն են տալիս մարմինն ուղղութիւն տալ, յանկարծակի փոխել ընթացքը. (ծուռտիկ մուստիկ վաղել), ինչ օդուտ է

տալիս նապաստակին այդ ընդունակութիւնը, երբ օր. չներից հալածւում է: Սակայն նապաստակի առաջի թոյլ ոտները նրան վնասել կարող են. նամանաւանդ, երը նա գար ի վայր է վազ տալիս, ինչու. այդ պատճառով էլ. երբ նա չներից հալածւում է, միշտ գար ի վեր է վազում:

Ամփոփումն. 1) Առաջի և յետի ոտների առանձնայատկութիւնները. 2) սրանց նշանակութիւնը կերպարանքի, արագ և դանդաղ շարժողութեան համար. 3) արուեստական հնար վազի միջոցին:

Մտաւոր լրացւմն. Գտանք, որ նապաստակը արագ է վազում, բայց միթէ չունն էլ, նամանաւանդ որսկան չունը նապաստակից արագ չէ վազում. բայց որովհետեւ չունը միջին հաշուով նապաստակից չորս անգամ մեծ է, բնական է, որ նա չորս անգամ էլ պէտք է աւելի արագ վազէր. բայց նա չի կարողանում նապաստակից երկու անգամ իսկ արագ վազել. ուրեմնա բնութիւնից աւելի պակաս է յարմարուած վազելու, քան նապաստակը:

Այժմ ամփոփենք, թէ նա ի՞նչ միջոցներով կարող է իր թշնամիրից ազատուել. թագուստ (զոյնի պաշտպանողական նշանակութիւնը)—շրջահայեց և ուշագիր (լոռզութիւնը)—փախուստ (ոտները): Սակայն նրա քաջուանութեանը գերազանցում է թշնամիներինը, օր. գիշատիչ թռչունների արագ թռիչը. նրա շրջահայեցութեանը և զգուշութեանը գերազանցումէ աղուէսի խորամանկութիւնը և աքիսի ճարպիկութիւնը Ուրեմն նապաստակները հեշտութեամբ բնաջինչ կինէին. եթէ զոյութիւն չունենար մի ուրիշ միջոց, որ աղանովէր նրանց գոյութիւնը:

Իմացուրեան III նպատակ. նապաստակի ցեղի պահպանուրեան զիյաւոր եւ վերջին միջոցը խիստ արագ անեցողութիւնն է:

Համադրութիւն. Մի զոյգ նապաստակը գարնանը և աշնանը երեքից չորս անգամ ձագ է բերում և իւրաքանչիւր անգամ 2 կամ 3 հատ, երեմն պատահում է նաև աւելի: Գուցէ գուք մտածէք, թէ այսուել ի՞նչ մի մեծ անեցողութիւն կայ, դրա համար մի փոքրիկ թուարանական ինդիր լուծենք:

Հաշուենք, թէ մի զոյգ նապաստակը քանի ձագ կունենայ հինգ տարուայ ընթացքում, եթէ նրանցից ոչ մէկին փորձանիք կամ հիւանդութիւն չպատահի: Ընդունենք, որ մի զոյգ նապաստակը գարնանը և աշնանը չորս անգամ երեքական ձագեր է հանում (12 ձագ). բացի այդ, որովհետեւ փոքրիկ նապաստակները չատ չուտ են աճում, ձագերի առաջին զոյգը նոյն տարին կարող է երկու ձագ էլ ունենալ: Ուրեմն առաջին արդին մի զոյգ նապաստակը կդառնայ 16 հատ կամ 8 զոյգ: Այդպիսով կատանանք հետեւալը.

1 տարի,	1 զոյգ նապաստակը դառնում	16 հատ = 8 զոյգ
2 »	8 »	$8 \times 16 = 128 = 64$ զոյգ
3 »	14 »	$64 \times 16 = 1024 = 512$ զոյգ
4 »	512 »	$512 \times 16 = 8192 = 4096$ զ.
5 »	4096 »	$4096 \times 16 = 65536$ հատ:

Եթէ ուրեմն այս տարի վաղարշապատի շուրջը (այդիներում, անտառում) 100 զոյգ նապաստակ մնացած լինի. 5 տարուայ զնթացքում նրանք բազմանալով կդառնային մօտ 6 միլիօն. և վաղարշապատի շրջակայքը բոլորովին քարուանդ կանէին. ուրեմն վաղարշապատի համար մեծ բաղդաւորութիւն է, որ այդ կենդանիները զանազան պատճառներով ոչնչանում են: Նապաստակների աճեցողութեանը չատ արգելափիթ հանգամանկներ կան. նախ, նապաստակները խիստ անխնամ են թողնում իրենց ձագերին: Հենց որ նապաստակի ձագը 8 օրական է լինում, մայրը ձեռ է վերջում նրանից. քամուց ու անձրեից, ձիւնից ու ցրախից անթիւ ու անհամար նապաստակներ, որոնք զուրկ են պաշտպանութիւնից, անփորձ մն ու անօդնական, կամ մեռնում են և կամ թշնամիներին զոհ գնում. ընդհանրաւելո նապաստակը վատ ծնող է: Ամենից անխնայ կերպով նապաստակներին ոչնչացնում է մարդը, որ զինուած հրացանով բնաջինչ կանէր նապաստակի ցեղը, եթէ օրէնքը վերջիններիս չպաշտպանէր: Նապաստակների ինայոցութեան ժամանակն է գարունը և աշունքը, երբ նրանք բազմանում են. մինչեւ որսի ժամանակն է աշունն ու ձմեռազմանում են. մինչեւ որսի ժամանակն է աշունն ու ձմեռազմանում են. 1-ից մինչև վետրուար 1-ը:

Ամփոփումն. նապաստակի արագ աճեցողութիւնը, աճեցողութեան վտանգը. աճեցողութեան բնական և արուեստական խոշնդուները:

Մատոր լրացումն.

Եթէ հնարաւոր չինէր զանազան միջոցներով նապաստակների աճեցողութեան առաջն առնել, անկասկած նրանք որևէ երկիր աւերակ կարող էին դարձնել. և իրօք այդպիսի աւերածութիւն կատարուել է, թէպէտ ոչ նապաստակի. բայց նրան ցեղակից վայրի ճագարի միջոցով:

Վայրի ճագարը նապաստակից քիչ փոքր է, բայց ամեն բանով նրան նման է. այնպէս որ շատ անդամ նրան կարելի է նապաստակի տեղ դնել. տարբերութիւնը միայն այն է, որ գլուխն ու ականջները քիչ կարծ են, յետին ոտները այնքան էլ զօրեղ չեն, դրա համար էլ ցատկումները կարծ են. բայց նապաստակից թէ արագաւազ է և թէ ճարպիկ: Վայրի ճագարը Եւրոպայի շատ երկրներում՝ Գերմանիայում, Սպանիայում և Իտալիայում մնած լըսաններ է հասցել, բայց իսկական չարիք նա դարձել է վերջին տասնամեկում Աւստրալիայի համար Երկար ժամանակ չէ, որ Եւրոպայից մի քանի զոյդ ճագար Աւստրալիա փոխադրեցին. այժմ նրանց ճագերն այնքան են շատացել, որ երկրի շատ մասերը իրօք աւերակ են դարձել. ոչնչացել են ծառ ու տերե, թուփ ու խոտ. ուր որ մի ժամանակ հօտերն ու նախիրներն էին արածում, այժմ տիուր և ամայի տեսք է ընդունել: Աւստրալիայի կառավարութիւնը ահապին միլիոններ է ծախսել ճագարներին ոչնչացնելու համար, բայց ոչ մի հնտեսնքի չէ հասել. այժմ էլ 250,000 ր. վարձ է նշանակել այն հնարագէտ մարդուն, որ միջոց կդանէ նրանց բնացինց անելու:

Նպատակ. հարց է ծագում, թէ ինչո՞ւց է, որ ոչ մի կերպ չէ կարելի այդ անաշափ աճեցողութեան առաջն առնել. Դրա պատճառն 1. վայրի ճագարի կենցաղի օգնութեամբ պէտք է հետեւեալը ներկայացնել: Վայրի ճագարը նկուղներ է փորում գետնի տակը, յատկապէս զառիվայրում, անտառի եղերքին և թաւուտ մացառների մէջ. նապաստակն այդ չէ անում. ճագարն իր ընտանիքով ապրում է այդ նկուղների մէջ՝ ազատ թշնամիների հալածանքներից. և բնից դուրս է գալիս միայն խաղալու կամ կերակուր հայթհայթելու համար. բայց նա երբէք իր ապաստանարանից շատ չէ հեռանում: Թէպէտ ճա-

գարն էլ թշնամիներ ունի և նապաստակի նման գուրկ է ինքնապաշտպանութեան միջոցներից, բայց զրա փոխարէն նա աւելի վախկոտ և զգոյշ է. հէնց որ մի որ և կասկածելի ձայն է լսում, անմիջապէս փախչում է իր նկուղը. այստեղ նա ապահով է բոլոր գիշատիչ կենդանիներից, որովհետեւ նկուղի ներքին անցքերը այնքան նեղ են, որ ոչ ո՛ի մեծ կենդանի (օր. աղուէս) չէ կարող ներս սողոսկալ. այստեղ նա ապահով է նաև մարդկանց հալածանքից. որովհետեւ շատ աշխատանք և ժամանակ պէտք է վատնել նրան տեղահան անելու համար:

Նպաստակը շատ աւելի մեծ չափով է ենրակայ թշնամիների հալածանեներին, բան նապար, որովհետեւ վերջինս՝ խոյս տալով իր զետիափոր նկուղը, ազատում է վերահաս վտանգից, մինչ դեռ նապաստակը զուրկ է այդպիսի ապատանարանից:

Երկրորդ պատճառը ճագարի արագ ահեցաղութիւնն է. ճագարը շատ աւելի արագ է բազմանում, քան նապաստակը. գարնանը և ամառը ճագարը 7 անգամ մօտաւորապէս 8-ական ճագ է բերում. մի զոյդ ճագարը մի տարուայ մէջ բազմանալով դառնում է 60 հատ (որչափ մի զոյդ նապաստակը): 5 տարուայ մէջ կը դառնայ 40—50 միլիօն. և որովհետեւ ծնողները իրենց ճագերին նկուղներում, առանձին բաժանմունքների մէջ մեծ ինամեռով մնուցանում ու պաշտպանում են ինչպէս թշնամիների հալածանքից, այնպէս և քամուց ու անձրեից, ձիւնից ու ցրտից, հասկանալի է, որ ճագերն էլ նապաստակների նման մնած քանակութեամբ չեն ոչնչանայ: Այս հանգամանքներով է բացարուում այն իրողութիւնը, որ ճագարներն աւելի են բազմանում, քան նապաստակները, որ նրանք մի երկրի համար իսկապէս չարիք կարող են դառնալ:

Ճագարների արագ ահեցողութիւնից մարդը կարողացել է օգուտ քաղել. համեղ մսի պատճառով, մարդը նրան ընտանի է դարձել և լաւ ինամբ ու մնունդ տալով, արուեստական կերպով կարողացել է նրան իիստ պարարտացնել (արուեստական նկուղներ ախոռներում): Յատկապէս ֆրանսիայում, Բելգիայում և Անգլիայում նա դարձել է ժողովրդեան մնուցման զլիաւոր միջոցներից մէկը. մենք՝ հայերս, որ մսի

մեծ նեղութիւն չենք քաշում, դեռ չենք կարողանում ընտելահալ նրա փափուկ մսին:

Ամիսովումն. զայրի ճագարների կենցաղը և աճեցողութիւնը, տարբերութիւնը նապաստակից.—աճեցութիւնից առաջացած վատնդը.—ընտանի ճագարը:

Զուգորդութիւն. Տեսանք, որ նապաստակին, գետնագոյն մորթու պատճառով, նամաւանդ երբ իր փոսիկում հանգիստ կուչ է եկած, թշնամիները գժուարութեամբ են նկատում։ Այդ պատճառով էլ նապաստակի հողանման բաց—դորշ գոյնը անուանում ենք պատճան—գոյն։

Իմացութեան ընդհանուր նպատակ.

Այժմ պէտք է տեսնենք, թէ բոլոր կենդանիներն ել պատճան—գոյն ունե՞ն։

ա) Վայրենի կենդանիներ.

- 1) Դաշտային նապաստակը բաց գորշագոյն, ինչպէս հողը։
- 2) Ալպեան նապաստակը սպիտակ, ինչպէս ձիւնը. (ամառն և ձմեռը գոյնը փոփոխուում է չրջապատի համաձայն)։
- 3) Վայրի ճագարը բաց գորշագոյն, ինչպէս հողը։
- 4) Աքիսը ամառը գորշ—կարմրաւուն, ինչպէս կարմիր հողը, ձմեռը ձեան նման սպիտակ։
- 5) Կզաքիսը մութ գորշագոյն, ինչպէս զիշերային կիսափառը և մթին ախոռը։
- 6) Խլուրդը մութ—սե, ինչպէս անարե նկուզը։
- 7) Կաքաւը գորշ, ինչպէս գետինը։

բ) Ընթանի կենդանիներ.

- 1) Ջիերը՝ սպստակ, սե, գորշ, չալ. մինոյն միջավայրում ամեն տեսակ գոյներ։
- 2) Կովերը՝ սպիտակ, սե, գորշ, չալ. նոյնպէս մինոյն միջավայրում ամեն տեսակ գոյներ։
- 3) Ոչխարները՝ նսխնպէս։
- 4) Շները՝ սպիտակ, սե, գորշ, և ընդհանրապէս ամեն տեսակ գոյներ։

Կարող է ուրեմն այս դէպքում պաշտպան գոյնի մասին խօսք լինել։

Վերոյիշեալ շարքերից կարելի է հետեւեալ օրէնքը հանել։ Միմիայն վայրենի կենդանիներն ունեն մի որու շրջապատին յարմարուած պատճան զոյն. մի նապաստակ նման է միւսին, մի արխիս՝ միւսին, բոլորը միասին՝ իրենց շրջապատին։

Ընտանի կենդանիներն ընդհակառակը պատճան գոյն չունեն, որովհետեւ մինոյն միջավայրում կարող են գոյութիւն ունենալ մինոյն կենդանու իրերից տարբեր, նոյն իսկ հակադիր գոյնի աեւսակները։

Այս օրէնքի հիմքը պարզ է. ընտանի կենդանիները պաշտպան գոյնի պէտք չունեն, որովհետեւ նրանց պաշտպանում է մարդը. միայն վայրենի կենդանիներն են, որ հարկադրուած են իրենց պաշտպանել։

Մասնաւորապէս պէտք է նկատել, որ վայրի ճագարը միշտ հողի գոյն ունի, մինչ զեռ ընտանի ճագարները՝ որ առաջիններից են սերուած, զանազան գոյներ է ունենում. ընտանիցման միջոցին պաշտպան գոյնը՝ որպէս նրա գոյութեան համար աւելորդ և անարժէք բան, անյալտացել է. բայց ընտանի ճագարներն ել շատ հեշտութեամբ են վայրենանում և ժառանգները նորից գտնում են իրենց պաշտպան գոյնը։

Այն հարցը, թէ արդեօք բոլոր վայրենի կենդանիները պաշտպան գոյն ունեն, առժամանակ մնում է առկաի։

Սիսեմ. Ամփոփել երկու գուգորդութիւնների արդիւնքները.

ա) Կրծողներ.

բ) Պաշտպան գոյն։

Մերող. 1) Ամփոփիր, ինչ որ մեր գիտողութեան զանազան մասերում նապաստակի կերպարանքի մասին ասել ենք (նկարագրութիւն)։

2) Ամփոփիր, ինչ որ նապաստակի կենցաղի մասին խօսուել է.

ա) Բնակավայրը և սնունդը.

բ) Նրա վերաբնմունքը միւս կենդանիներին կատամար (բնորոշ յատկութիւնները և սրանց հետ կապուած սովորութիւնները)։

- գ) Աճեցողութիւնը.
 դ) Տուած օգուտաներն ու վնասները.
 3) Նապաստակը ինչ գործողութիւններ է բնագդով
 կատարում.
 4) Թուիր, թէ ինչով է վայրի ճագարը նապաստակից
 տարբերում.
 ա) Կերպարանքի
 բ) Կենցաղի և սովորութիւնների
 գ) Աճեցողութեան
 դ) Տուած օգուտի և վնասի
 5) Սմիռնի հայոց լեզուի մէջ եղած ոձերը, որոնք
 սկիզբն են առել նապաստակից և բացատրիր նրաց սկզբան-
 կան և փոխարերական իմաստը:



II

Գ Ի Ւ Ղ Ի Լ Ճ Ա. Կ Ը.

ԼՃԱԿԻ ԱՄԲՈՂՋ ՏԱՐՈՒԱՅ ՊԱՏԿԵՐԸ.

Լիճը գտնուում է ճանապարհի մօտ և շրջապատուած է մարգագետիններով. գարնանը ձիերն արտերում՝ իրենց աշխատանքը վերջացնելուց յետոյ, գիմում են դէպի լիճ՝ թարմանալու և կազդուրուելու համար. Բագերը գալիս են օրորուելով և «վաթ—վաթ» անելով և մի քանի կաթիլ ջուր կտուցների մէջ առնելուց յետոյ՝ մեծ հաճոյքով սկսում են լողալ լճի այս ու այն կողմքը. Նրանց քոյլը սագերն էլ այցելում են լճակին. մեղմ ու հանգարտ իրիկնապահին գորտերն սկսում են կոկոալ, իսկ մոծակները բղզում են քամուց պաշտպանուած տեղերում. գորտերը ձու են ածում լճակի ծանծաղ տեղերում, թաւշանման գորտնախալիների վրայ. ծիծեռնակն էլ՝ վերագառնալուն պէս այցելում է նրան. շատ թռչուններ էլ թուիս են նստում լճակի մացառների մէջ:

Հէնց որ օդն ու ջուրը տաքանում են, կամաց կամաց փոխւում է նաև լճակի տեսքը. փոքրիկ կանաչ բոյսերը ծածկում են նրա մակերևոյթը, իսկ թրաչուշանը, մատիտեղը և ջրի վարդը զարդարում են նրան իրենց ծաղիկներով. նրա ափին բուժնում են եղեգն ու մացառներ, աճում են ուռենիներ և ուրիշ սաղարթախիտ ծառներ. Այնտեղ, ուր լողում են գորաք ձուերը, իսայտումէ չերեկիկների գունաւոր խառնիճաղանձը. ձկները չեն երգում. միայն երեսն երեսն դուրս են գալիս ջրի երեսը, արեի ճառագայթներից տաքանալու համար. տղբուկներն օճապտուտներով սուզում են ջրի խորքը. թռչուններն էլ լողում ու թռչկում են նրա երեսին:

Լճի ջուրը հետզհետէ պակասում է. այդ երեսումէ նրանից, որ բոյսերը, որ մի ժամանակ ջրի մէջն էին, այժմ ցամաքի վրայ են մնացել. Զրադացանն էլ այժմ օրուայ մի մի քանի ժամերին միայն կարողանում է ալիւք աղալ. Լճի ափը հետզհետէ գեղին ու տիսուր տեսք է ընդունում. սկսում

է փոթորիկ և լճի ջուրը առատութեամբ վաղում է դէպի ջրաղացի խողովակներն ու նաւը. այժմ ջրաղացը զիշեր ու ցերեկ ուրախ չըխկչրսկում է: Կամաց կամաց մօտենում է աշունը: Արեք կէսօրին շատ չի բարձրանում, ոչ էլ տաքացնում. օրերը կարծանում ու գովանում են, զիշերները երկարում ու ցրտում: Վաղուց արդէն դադարել է զորանը կոկոցը. ծիծեռնակներն անյալտացել են. ծաղիկները մեծ մասամբ թառամել. ծառերի տերեները դեղնել, չորացել:

Վրայ է հասնում ձմեռը և սասցէ վերմակով ծածկում լճակը. իր տակն առնելով չորացած բոյսերը Ամառուայ եռուն կեանքի փոխարէն մի նոր կեանք է սկսում լճակի վրայ. աշակերտաները, դպրոցի պարագմունքները վերջացնելուց յետոյ, ուրախ զուարթ սահում են նրա հայելու նման հարթ երեսի վրայ և կենդանութիւն տալիս մ'ուած բնութեանը: Լճակի արեկող, սասցից աղատ մասերում մեծ հաճոյքով լողում են բաղերը, առանց տրանջալու մրսող ոտների և սառչող ականջների համար: Իսկ սասցէ վերմակի տակ. միթէ այնտեղ կեանքը բոլորովին մ'ուած է: Այսպէս շարունակում է, մինչև գալիս է ցանկալի գարունը, նոր կեանքի ողջոյնով բոյսերին, կենդանիներին և ամբողջ լճակին: Այժմ աշխատենք ծանօթանալ այդ բոյսերի և կեանդանիների հետ հաստատուն յոյսով, որ իւրաքանչիւր ստոյդ դիտողութեան հետեանքն է լինելու մի կողմից ծանօթութեան մեծ պաշար, միւս կողմից՝ խոր հիացմունք բնութեան նկատմամբ:

II.

Ա. Ն Գ Ա. Մ Ն Ե Ր Բ.

1.

Բ Ա Գ.

ա) Բնակարանը եւ մարմնի ձեւը եւ իր նեանակութիւնը. բաղը մեծ մասամբ ջրի վրայ է ասրում. նոյն իսկ ձմեռը տեսնում ենք նրան ջրի վրայ լողալիս. ինչ կպատմէր մեզ

հետ, եթէ մերկ ոտներով ձմեռը ման գայլնք ջրի մէջ.—անշուշտ կմրսէինք. բայց բաղի ոտները ուրիշ կազմուածք ոււնեն, քան մերը. բացի այդ բաղը շատ տաք հագուստ ունի:

Արեկող տեղերում, լճակի զառիվայրերի վրայ երբեմն գանում ենք բաղի փետուրներ, որոնք մեծ կամ փոքր են մինում. բոլորն էլ ունենում են մի փետրակոթ կամ փետրափող, որից դէպի երկու կողմերը տարածւում են փետուրի թելերը:

Փետրափողի այն ծայրը, որ կաշուին է կպած, գատարկ է. նայած փետուրների մեծութեանը՝ նրա ճառագայթածն թելերը իրար հետ միացած են լինում, կամ ոչ. մեծ փետուրի բոլոր ճառագայթածն թելերը, սկզբի միչև վերջը, միացած են, մինչդեռ փոքրերինը՝ ոչ. ստոյդ հետախուզութիւնը ցոյց է տալիս, որ առաջնների միացած լինելու պատճառը այն փոքրիկ մաղիկներն են, որոնք գուրս գալով փետուրի ճառագայթներից, փոխադարձարար կապւում են իրար հետ: Ինչու համար միանգամ իրալից բաժանուած ճառագայթածն թելերը այլ ես իրար հետ չեն միանում.—Ո՞ր տեսակ փետուրներն են աւելի փափուկ. որոնք կարող են աւելի շատ տաքութիւն տալ, որ տեսակ փետուրներին ենք նախապատւութիւն տալիս անկողինների համար: Ինչով են զանազանուում փետուրները փմբուլներից. քննինք և տեսնենք, թէ բաղի մարմնի որ մասումն են գանում փետուրները. և որ մասում փմբուլները. փմբուլները չեն երեսում. պատճառն այն է, որ փետուրները նրանց ծածկում են. փմբուլները մարմնին խիստ մօտ են զանուում. ինչու այդ բանը բաղին օգտակար է. նոյն իսկ փետուրների տակի երեսն էլ փմբուլի նման փափուկ է. ոււրեմն կարելի է ասել, որ բաղն ունի թէ ներքնազգեստ և թէ վերնազգեստ և ցուրտը նրան հեշտութեամբ չէ կարող վնասել:

Այս բոլորի հետ պէտք է և այն ի նկատի առնել, որ բարեւն իրենց կաշու տակ մի շերտ ճարպ ունեն. ճարպի այս շերտն ես պաշտպանում է նրանց ցրտից: Բայց չը որ մենք ոչ միայն սաստիկ ցրտից կարող ենք մրսել, այլ և խոնաւ չորերից: և սակայն բաղը մեծ մասամբ ջրի վրայ է ու չի մրսում. իւր կազմուածքով նա մի կողմից պաշտպանուած է

ձմնուուայ ցրտից, միւս կողմից էլ չի ենթարկուում խոնաւութեան, որովհետեւ կարելի է ասել, որ նա հազիւ թէ թրջըւում է: Երբ նա ջրի մէջ խորասուզուելուց յետոյ գուրս է դալիս, ջրի կաթիլները ուլունքի նման զլրուելով ցած են ընկում նրա վրայից:

Ամենից առաջ ուշաղութիւն դարձրէք նրա վետուրչների դիրքի վրայ. որովհետեւ փմբուլները ծառայում են մարմինը տաք պահելուն, պէտք է որ խոնաւութիւնից դերծ մնային. փետուրներն էլ, որ ծածկում են փմբուլներներին, ոչ թէ սալաքարերի նման կողք կողքի, այլ կզմինդրների նման իրար վրայ են դասաւորուած: Երբ ջուրը վերեից փետուրների վրայ է թափուում, չի թափանցում ներսը, այլ մէկից միւսի վրայ զլորուելով, ցած է թափուում:

Ուշաղութիւն դարձրէք, թէ բաղերը փոթորկի ժամանակ լճի վրայ լողալիս քամու նկատմամբ ինչպիսի ուղղութիւն են բռնուում:

Ի՞նչո՞ւ են քամուն հակառակ լողում. ի՞նչ օգուտ են ստանում այդ ուղղութեամբ լողալուց, եթէ միննոյն ժամանակ անձրի է գալիս: Սակայն փետուրների դասաւորութեան ձեզ չէ միայն, որ բացատրում է այն բանը, որ ջուրը կաթիլ կաթիլ դորուում է նրանց փետուրների վրայից, առանց փետուրներին խոնաւութիւն հաղորդելու, դրա անմիջական պատճառը փետուրներն են: Եթէ բաղից նոր ընկած մի փետուր խորասուզնք ջրի մէջ, նա չի թրջուի, այլ մի առանձին փայլ կստանայ:

Ի՞նչո՞ւ համար. որովհետեւ բաղի համարեա բոլոր վետուրները ձարպոտ են: Միթէ, ուրեմն, բաղի մարմինը ճարպ է արտաթորում. այդ դէպքում մարմինը աւելի մօտ գանուող փմբուլներն աւելի շուտ պիտի ճարպոտէին. սակայն հենց որ նրանց ջրի մէջ ենք խորասուզում, իսկոյն թրջուում են. ուրեմն փետուրներն իրենց ճարպը ուրիշ տեղից են ստանում: Մի բոպէ զիտենք բաղերին, երբ նստած են լինում լճի արելող ափերին կամ հանդարտ լողում են լճի երեսին. նրանք կամ զլուխը թեերի տակ դրած ննջում են և կամ փետուրներն են քձնում կտուցները մերթ դէպի պոչն և մերթ դէպի փետուրները ուղղելով: Պոչի մօտ նրանք մի բալարածն զոր-

ճարան ունեն, որն հեղուկ ճարպ է արտաթորում. ահա այս ճարպով է, որ նրանք կառցի օգնութեամբ իւղուում են իրենց փետուրները. իւղուած փետուրներն այլիս ջուր չեն պահում. այդպիսով, չնայած այն հանգամանքին, որ բաղը ջրի մէջ է ապրում, այնուամենայնիւ նրա մարմինը չի թրջուում:

Մենք միշտ տեսնուում ենք, որ բաղը հանգինս կերպով լողում է ջրի երեսին, մինչդեռ երբ ձին կամ չունը ջրի խորքն են ընկնուում, սուզուում են մինչև պարանոցը և որպէսզի բոլորովին չխորասուզուեն, չարժում են ստները. սակայն բաղը ոտները չէ չարժում, բայց և ջրի տակը չի գնում, այլ նոյն իսկ իրանի նման լողում է ջրի մակերեսյթի վրայ:

Ի՞նչն է զրա պատճառը: Եթէ ուսումնասիրելու լինենք բագի կամ մի որեկ է թոչնի մարմինը, այնտեղ օդի համար յատուկ տեղեր կգտնենք. այդպիսի տեղեր զուր կվնարենք խոզի, կովի և ընդհանրապէս կաթնասուն կենդանիների մէջ: Հենց այս իսկ պատճառով զարմանալի չէ, որ բաղերը ջրի վրայ, իսկ չները ջրի մէջ են լողում: Բայցի այդ, բաղերի թէ փետրափողերը և թէ իրար հետ պիհնդ միացած ճարպոտ փետուրները իրենց արանքում օդ են պարունակուում, որ ջրի վեր բարձրանալուն արդեկիք է հանդիսանուում: — Բազի մարմինը առանց վզի՝ ձուածն է, բայց ոչ կատարելապէս. որովհետեւ նրա մարմինը ձախից դէպի աջ տափակ է, իսկ վերեից ներքն հաստ ու սեղմուած. այդ պատճառով էլ նա աղատ հանգչում է ջրի վերայ, քան եթէ բոլորովին կլոր լինէր:

բ) Նարժումները. Բազն ազատ լողում է ջրի երեսին, ոտները փոխնէփոխ շարժելով, ինչպէս ցամաքի վրայ. այս շարժման ժամանակ նա իր լայն ոտներով ջուրը յետ է տաւլիս, իսկ մարմինը առաջ մղում:

Ի՞նչո՞ւ առանձնապէս լայն ոտները նրան օգտակար են: Ի՞նչ կպատահնէր, եթէ մատների միջի մաշկը պակասէր:

Բաղի ոտները կարճ են, մասամբ էլ հաստ. նրանք լողալիս բաւական ոյժ են գործ գնում, նամանաւանդ երբ ջրի հոսանքին հակառակ են լողում: Ոտների շարժումը կատարուում է մկանների միջոցով, որ մենք սովորաբար միս ենք անուանուում. Եթէ բաղի ոտները հաւի կամ աղուաւի ոտների հետ համեմատելու լինենք, կտեսնենք, որ բաղինը

մարմնի աւելի յետեկ մասումն են գտնվում։ ուների այս դրութիւնը լողալու համար խիստ նպաստաւոր է, ինչպէս այդ ցոյց է տալիս լողացող բաղի և ճահ թոշնի համեմատութիւնը։

Բաղի քայլուածքը ցամաքի վրայ խիստ ծանր է և երերուն։ այդ բանը մեզ չպէտք է դարմացնէ. չունը, որ ցամաքի վրայ այնքան արագաշարժ է, բաղի համեմատութեամք վատ լողացող է։ Բաղի կազմութիւնը տուանձնապէս յարմարուած է ջրի վրայ ապրելուն. մտաքերեցէք նրա փետուրների յարմարութիւնը, մտաների կազմութիւնն ու միջի մաշկը, ոտերի դիրքն ու երկարութիւնը. ինչուց է առաջ զալիս նրա երերուն գնացքը։ Աւշադրութիւն դարձրէք արագիլի վրայ, որ քայլում է մարդադեսնի վրայ, կամ արագազի, որ հալարտ ձեմում է հաւերի մէջ. նրանց ոտները երկար ու ճկուն են, որովհենև երկու յօդերից են կազմուած։

Այս է պատճառը, որ բաղը յարմարուած է ջրի վրայ ապրելուն, մինչեւ նրա բոլոր այդ յարմարութիւնները արգելը են հանդիսանում ցամաքի վրայ աղատ շարժուելուն։ Այսպիսի երեսյթներ բնութեան մէջ յաձախ են պատահում նոյն իսկ մարդկանց մէջ։

Եթէ պատահի, որ բաղը չնից հալածուի, սկզբում կիափչի՝ թերեր թափահարելով և աղմկելով. իսկ եթէ հալածանքը շարունակուի, իսկոյն և եթ ջուրը կիթոչի. այստեղ նա իրեն աւելի ապահով է զգում. բաղը յաջող չէ թռչում. նրա թռիչքը շատ աւելի անարուեստ է, քան արագիլինը և ուրիշ թռչուններինը։ Վայրենի բագերն համեմատարար աւելի յաջող են թռչում, քան ընտանիները, որովհետև վերջիններս վայելելով մարդու խնամքը, աւելի չաղ են լինում. իսկ այս հանդամանքը լաւ թռչելուն արգելք է դասնում։

գ) Բայերի կերակուրը. սակայն ինչն է բացերին դէպի լիճը մզում. մի կողմից, ինչպէս տեսանք, նա այնտեղ ապահով է իր թշնամիների հալածանքից, որովհետև պաշտպանուելու առանձին զէնքեր չունի. բաղը ճանկեր չունի, ուստի և ոտներով ոչ մի կենդանու չէ կարող բռնել։ Բայց լուս նա կարողանում է կերակուր գտնել, որովհետև շարունակ կտցահարում է ջրային բոյսերը։ Նա կերակրում է խիստնջով, խիստնջի և գորտի ձագերով, ջրային վարդի տերեներով։

մանր ձկներով, ձկնկիթներով են։ Շատ անդամ նա խորասուզում է ջրի տակը և երկար ժամանակ այդպէս մնում։ Ջրի մէջ նա ապրում է իր մարմնի օգովք։ Ջրի տակ խորասուզելու նպատակը դարձեալ կերակուր վնատքելն է. այդ երեսում է նրանից, որ, ջրի տակից գուրս գալիս՝ կտուցում որեւէ բան է բռնած է լինում, մինչեւ ջուրը կտուցի երկու կրողմերից հոսում է։

Մեր ձեռքի մատները հարուստ են նեարգերով. երբ մթանը մի բան ենք որոնում, չօշափում ենք պատահած առարկաները և հեշտութեամբ կարողանում ենք մի կտոր փայտացից ջոկել։ Բաղը այդ տեսակ չօշափելիքի տեղ իր կտուցն է բանեցնում։ Կտուցը նրան մօտաւորապէս նոյն ծառայութիւնն է մատուցանում, ինչ որ կոյրին՝ իր մատները։

Բագերը, խիստնջերին ոչնչացնելով, խիստ օգտակար են գանձում մեր պարտէղների համար, թէս իրանք էլ մնասում են պարտէղին, մատաղ բոյսերը կրխուելով կամ ոսպ ու լորի գողանալով։

Եթէ մի յետագարձ հայեացք ձգենք, կտեսնենք, որ ինչպէս որ նրանց ոտերը ամեն կողման ջրի վրայ ապելուն եւ լողալուն են յարմարուած, այնպէս ել կտուցը վերին ասթիան յարմարուած է ջրի միջից կերակուր նայրայրելու եղանակին։ Նրանց ոտերի եւ կտուցի կազմութիւնն ուրեմն համապատասխանում է նրանց կենցաղին։ նոյնը կարելի է ասել նաև նրանց փետուրների մասին։

զ) Նրանց տնարարութիւնը. Արդեօք բաղը անարարութիւն ունի։ Անշուշտ և այդ ոչ թէ միայն այն ախոռն է, որ նրա համար գիշերելու տեղ է ծառայում, այլ աւելի չուտ այն բոյնը, որ նա պատրաստում է ձագեր հանելու համար։ Նա իւր բոյնը շինումէ խոսից, եղեղնից և գրանց նման բոյսերից, բայց ոչ այնքան զեղեցիկ, ինչպէս կերպիչ թռչունները։ Բունի բայց ոչ մի կերակուր գտնելու համար երկար ժամանակով նստում է նրա վրայ և միայն երբեմն երբեմն հնուանում՝ կերակուր գտնելու համար։ Եթէ բացերի թուխս նստած մամանակ ձուերին ձեռք տալու լինենք, կը տեսնենք, որ նու-

քա տաք են, մօտաւորապէս երեք շաբաթից յետոյ, փոքրիկ բաղիկը, ձուի կեղեց կոտրելով, դուրս է զալիս լոյս աշխարհ։ Եթէ մի բագ իւր պարտականութիւնը մոռանայ, ձուերը կսառչեն և ոչ մի ձագ էլ դուրս չի գայ: Մեծերի մարմնի տաքութիւնը պէտք է ձուին հազորդուի, որպէս զի նրա մէջ ձագ կազմակերպուի: Ինչպէս է լինում, որ ձուի մէջ կինդանի էակ է գոյանում: Դա մի հարց է, որին շատ երեկի բնագէտներ չեն կարողացել բաւարար պատասխան տալ: Կարելի է միայն նկարագրել թէ նա ինչու է կազմակերպում, բայց չի կարելի ասել թէ նա ինչու է այդպէս կազմակերպում:

Բագի ձուն կազմուած է կարծր կեղեց և նրա միջի բովանդակութիւնից: Բովանդակութիւնը բազագրուած է ձուի սպիտակուցից և գեղնուցից: Այս երկուսի մէջ գանւումէ սաղմը՝ բագի սկզբնական զրութիւնը: Այս զրութեամբ նա կարող է երկար պահպանուել. կեանքը նրա մէջ անզարդացած՝ սաղմնային վիճակում է, բայց երբ նա բաւական ժամանակ ենթարկումէ հաւասարաչափ տաքութեան ներգործութեան, նորա ներսում կեանք է սկսում: Չուի գեղնուցն ու սպիտակուցը կամաց կամաց կասեն անյայտանալ, իսկ սաղմը՝ ածել, մեծանալ: Չուի միջուկի սպառուելուն պէս, փոքրիկ կենցանին, խորտակելով իւր բանզը, դուրս է զալիս և իր մօրը հետեւում:

Մեր ընտանի բաղերը ասաւ են եկել վայրենի բագերից: Երեակայեցէք, որ մի խումբ վայրենի բագեր փակուած են որ և է տեղում: Երբ նրանք քաղցում են, մարզը նրանց կերակրում է. Նրանք հետզհետէ այնքան կվարժուեն, որ մարդ տեսնելիս՝ միշտ նրանից կուտ կոպասեն. այդպիսով նրանք վարժուումեն մարդու ներկայութեանը և վայրենի բագերի նման այլ ևս չեն քաշուի նրանցից. Նրանց ձագերը «քնականից» արդէն չեն խրտնի մարդուց. այդպիսով կամաց վայրի բաղերը ընտելանում են. Երբ նրանք մարդկանցից աւելի լաւ են ինտմում, քան բնութեան զրկում, ուժեղանում և ճարպոտում են: Ինչպէս որ նրանց մարմնի ներսում փոփոխութիւններ են տեղի ունենում, այնպէս էլ նրանց արտաքինը զգալի փոփոխութիւններ է կրում. այդպիսով

օր, մեղ հասկանալի է դառնում, թէ ինչպէս են փետուրները նոր գոյն ստանում:

Բայց որքան էլ բազերը մարդկային խնամքի չորհիւ փոփոխութիւններ կրեն, այնուամենայնիւ իրենց էութեամբ և կենցաղավարութեամբ բագ են մնում միշտ և ամբողջովին:

ՅԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԵԱՅՔ

1) Մարմնի ձեն ու փետուրները յարմար են ջրի վրայ ապրելուն.

2) Ոտները յարմար են ջրի վրայ լողալուն.

3) Կտցի կազմութիւնը հնարաւորութիւն է ստեղծում ջրի մէջ կերակուր գտնելուն.—յարմար է ուրեմն ջրային կեցաղին

4) Փոքրիկ բագիկներն անդամ ջրային կեանքի միտումներ են ցոյց տալիս.

Ուրեմն բազը խկական ջրային կենդանի է. նրա կազմութիւնն էլ յարմարուած է ջրային կեանքի.

5) Բազը իբրև ամբողջութեան մի անդամ:

1) Նրա ցեղակցութիւնը.—այսուղ կայ մի սագի ոտ, որը նման է բագի սախն. որն է այդ նմանութիւնը. Նրա մատների մէջ ևս կան լողամաշկեր. ուրիշ ինչ նմանութիւն կարող էք գտնել բագի և սագի մէջ. արդեօք սագերն էլ բագերի նման են ապրում. սագերը զաշտի վրայ են պահուում. Նրանց կերակուրը միհնոյնը չէ. ի նկատի առէք կտուցը. Ինչ տարրերութիւն էք նկատում. Ինչպէս է յարմարուած այդ տարրերութիւնը սնունդի տարրերութեանը. Նրանց կազմութիւնը յարմարուած է իրենց կենցաղին: Կրկնութիւն. կտուցը ուրիշ է. գրանից ինչ է հետեւում. Նա ունի լողամաշցը կեր.—զրանից ինչ է հետեւում. Նա ջուր է սիրում, ուստի և այցելում են լճին. գրանից ինչ է հետեւում նրա կազմութեան համար. Նա ևս լողացող թռչուն է, ուստի և բազին ցեղակից: Ինչպէս ընտանի բազը վայրենի բագից, այնպէս էլ ընտանի սագը սկրուած է մոխրագոյն վայրենի սագից.

2) Նրանց վարած կեանքի նմանուրիւնը.—Վայրենի բազերն ու սագերը ձմեռուաց սկզբին չւում են հիւսիսից դէպի

հարաւ, իսկ ձմեռուայ վերջը՝ հարաւից հիւսիս. չուելու միշտ ջոցին նրանք սովորաբար կազմում են 50 աստիճանի անկիւն. ընտանի բաղերը կարիք չունեն չուելու, որովհետև ձմեռուայ համար անհրաժեշտ բաները մարդուց են ստանում:

3) Նրանց մատուցած ծառայութիւնը.—Ենչպէս որ խըլ-խունջներն ու ձեները բաղերի համար կերակուր են դառնում, այնպէս էլ վերջիններս ուրիշ էակներին են սնունդ դառնում, գիշակեր թռչուններն ու կենդանիները նրանց կեանքի դէմ միշտ դարան են լարում. առանձնապէս նրանցից օգտուում է մարդը. նա պահում է բաղերին՝ նրանց մսից, ծուերից և փետուրներից օգտուելու նպատակով:

Նոյն օրինակով էլ ուսումնասիրելով միենոյն համակես-ցութեան անդամ գեղնափորիկ միջատի բնակավայրն ու մարմ-նի ձեր, շարժումներն ու շարժման օրգանները, կերակուրն ու սննդառութեան և չնչառութեան գործարանները և վեր-ջապէս նրան որպէս ամբողջութեան անդամ դիտելուց յետոյ (նրա մատուցած ծառայութիւնը, նրա ազգակցութիւնը) կա-կարելի է գեղնափորիկը բագի հետ համեմատութեան մէջ դնել. ա) բնակավայրի տեսակէտից.—Երկուսն էլ ամրում են լիք մէջ կամ լճի վրայ, երկուսն էլ որոշ ժամանակ թողնում են լիճը, բ) ծածկոյթի տեսակէտից.—Նրանց ծածկոյթները տարբեր են, բայց երկուսն էլ չեն թրջւում. դ) շարժումների տեսակէտից.—Երկուսն էլ կարող են քայլել, լողալ և թռչել. դ) զգայարանների տեսակէտից.—Ենչ պաշտօն ունեն նրանց զգայարանները. բազի որ զգայարանն է աւելի զարգացած. բաղն ինչ աւելի զգայարան ունի:

Նոյն եղանակով միենոյն համակեցութեան բոլոր կեն-դանիները կամ կենդանիների մի մասը ուսումնասիրելուց յետոյ՝ սիստեմի աստիճանում վերոյիշեալ համեմատութիւն-ների հիման վրա կիսադմենք սիստեմական շաբաթ:



Հայաստանի Ազգային գրադարան



NL0420195

20923